


16412

Հիպոկրատ

Ասոր Չարիքի

Ինքնագիր



891.99

Տ-62

Բագրատ

1918

20 03

1759

891.99

2-62 ur

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԻՋԵԼ ՕՀ. ՏԵՐ-ՂՈՒԿԱՆՆԵՐ

ԱՂԸՂ ՂԱՐԻԲԻ

ՀԵՔԵԱԹԸ

ՀԱՆԴԵՐՁ ԵՐԳԵՐՈՎ

ՓԲԵՐՈՒԹԻՒՆ ՏԱՃԿԵՐԵՆՑ

Աշխատասիրեց
ԱՇԸՂ ԶԻՆԱՆԻ

ԻՆՆԵՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԲԱԳՈՒ
Էլէքտր. տպարան Մ. Օ. Տէր-Ղուկասեանցի
1918

20



Աշրգ Զիւանի



ԱՇՐԴ ԶԱՐԻԲԻ ՇԷՔԵԱԹԸ

Մեր հին աշուղները, ըստ աւանդութեան, պատմում էին հետեւելը: Էին ժամանակներում Պարսկաստանի թաւրէզ քաղաքում կար մի Մելիք Աբրահամ անունով երեկի հարուստ վաճառական: Նա ունէր վեց երկյարկանի տներ, հինգ հատ գեղեցիկ այգիներ լի տեսակ-տեսակ պտուղատու ծառերով, գոյնգոյն ծաղիկներով և ամեն ցեղի քախքրախօս թռչուններով: Նրա ոսկուն, արծաթին և այլ գանազան տեսակ թանկագին իրեղէններէն չափ չըկար: Նա իւր քաղաքում հարստութեան կողմից առաջինն էր:

Մելիք Աբրահամը ունէր մի համեստ և բարի տնտես կին և երկու գաւաղներ, մինը տղայ և միւսը աղջիկ. տղան կ'լինէր տասնհինգ տարեկան, իսկ աղջիկը տասն տարեկան: Տղայի անունը Արշակ էր. իսկ աղջկանը Նարգիզ: Երկուսն էլ անչափ գեղեցիկ էին: Տղայի հագուստը շատ շքեղ էր, գլուխը տեսակ տեսակ փունջերով և պսակներով զարդարուած, հագնում էր ընտիր բրդից պարսկական ձեով կտրուած կապայ, շապիկն էր ընտիր մետաքսի նուրբ թելերից գործուած, կարճ և գեղեցիկ թիկնոցը ոսկեթել գիւլակից էր պատրաստած, անդրաժարտիքը նոյնպէս կանաչագոյն մետաքսից էր կտրուած, գուլպաները սպիտակ փափուկ բամբակից գործած, կօշիկները բարձրակրունկ՝ վզերը երկար՝ որ հասնում էին մինչև ծնկները և անդրաժարտիքի ներքին ծայրերը զրած էր կօշիկների մէջ և կտրած էր մետաքսէ բարակ խայտաճամուկ կտագերով. մէջ-

քին ունէր ոսկէ քամար, ընտիր ճաշակով շինուած, որից քաշ էր արած մի գեղեցիկ արծաթապատ փոքրիկ դաշոյն: Բարձրահասակ էր նա, որպէս նոճի, գլուխը կլոր, մազերը շագանակագոյն էր և փափուկ որպէս մետաքս, սպիտակ ճակատը կիսալուսնի, սև ունքերը կամարածև, կարծես դիտմամբ գրչով էին քաշուած, սևագոյն աչքերը բաղէի աչքերի նման, երկար թերթունքները կարծես արծուի թևեր լինէին, քիթը արքայակազմի, պոռնկները յակինթիի նման, փոքրիկ բերանը կաթնադրիւր, ատամները մարգարիտ, երեսները կարմրախառը սպիտակ՝ դրախտի անշոշափելի խնձորի նման, պարանոցը մի թզաչափ, փաթաթած մետաքսէ թաշկինակով, կոկորդը ոսկեզօծ բիւրեղ, առոյգ կուրծքը որպէս առիւծի վերջապէս ամեն բանով գեղեցիկ. սորան դիտողը նմանեցնում էր Յովսէփ գեղեցիկին, կամ Արա գեղեցիկին:

Արշակի օրերը անցնում էին շատ ուրախ: Առաւօտեան ժամը ութին շորերը հագնելուց, լուացուելուց յետոյ, նորա մայր Արուսեակը պատրաստում էր նախաճաշիկը՝ մեղր, կարագ, սեր և այլն: Նախաճաշիկից յետոյ զրքերը գնելով պայուսակը՝ գնում էր ուսումնարան. սովորում էր հայերէն և պարսկերէն լեզուներ, մինչև եւրոպական ժամը մէկը. ապա վերադառնում էր տուն: Ճաշելուց յետոյ երկու ժամ ննջում էր և յետոյ հեծնում էր իւր գեղեցիկ զարդարուած սպիտակ նոճոյգ ձին, իւր հաւատարիմ ծառաների և բարեկամների հետ գնում էր զբօսնելու կամ որոի. իսկ երեկոյեան ուրախ սրտով և կայտառ գէմքով վերադառնում էր տուն և վայելում էր իւր ծնողների սէրը, և գգուանքը: Բայց ամսոս, որ Արշակի ուրախութիւնը երկար չտևեց յանկարծ փիճակը փոխուեց և խեղճի հայրը հիւանդացաւ: Որտեղ մի երևելի բժիշկ կար, Արշակը հրաւիրեց, բաւական դեղերի և այլ պիտոյից ծախսեւ արեց, բայց բոլորն իզուր անցաւ, հօր կեանքը վտանգի մէջ էր և նրա կեանքը անյուստի էր: Մելիք-Աբրահամը զգաց իւր մահը, կանչեց իւր հաւատարիմ կնոջը և սիրտ-

տուն գտնակներին, օրհնեց ամենքին և յաւիտենական հրաժեշտի համբոյրները տալով նոցա՝ կնքեց իւր մահկանացուն: Լսելով նորա մահը հաւաքուեցան բոլոր բարեկամները և զրացիները. եկաւ նոյնպէս հոգևորական դասը և մեծ բազմութեամբ հանդերձ փառաւոր յուլարկաւորութեամբ թաղեցին նորան, ինչպէս վայել էր մի այդպիսի բարձրաստիճան մեծատուն մարդի: Արշակն իւր մօր և քրոջ հետ միասին սև-սուգի հանդերձները հագած սգում էր իւր հօր մահը:

Թաւրէզ քաղաքի յետ ընկած վոդոյններից մինում կար մի գինետուն, որտեղ հաւաքուում էին ամեն գիշեր քառասուն հոգուց բաղկացած մի խումբ սրիկաներ, որոնք իւրեանց անառակութեամբ և խաբեբայ ճարպիկութեամբ շատ տներ էին քանդել, շատ մարդկանց կողոպտել էին և այդպիսով հասարակութեան մեծ վնասներ էին հասցրել: Մի գիշեր քառասունը միասին հաւաքուած այդ գինետնում տխուր տրտում նստած էին. փորերը քաղցած, զրպանները առանց մի կոտրած ստակի, ոչ մէկի բերանից մի բառ անգամ չէր լսւում. վեց ամսից ի վեր դոցա ձեռքը մի լաւ որս չէր ընկել: Դոցա գլխաւորը, որի անուն «Սատանայի ապտակ» էր, ընդմիջելով լռութիւնը ասաց. — «այդքը, վաղը առաւօտեան եկէք գնանք Մելիք-Աբրահամի տունը՝ նորա որդի Արշակին մխիթարելու, ձևանալով իբր մենք նորա հանգուցեալ հօր հաւատարիմ բարեկամներն ենք, այնուհետև մենք մեր անելիքը գիտենք»: Հետեւալ առաւօտեան արեգակը դեռ նոր էր լուսաւորել և կենդանացրել Թաւրէզ քաղաքը, նորա մի նշանաւոր փողոցում երեւացան մի խումբ սգազգեստ մարդիկ, որոնք դիմելով դէպի Մելիք-Աբրահամի դուռը՝ լաց ու կոծով և աղաղակով մտան տունը: Արշակը տեսնելով սոցա սրտաճմլիկ սգալի ցոյցերը, հրաւիրեց իսկոյն իւր ատանձնասենեակը, կարծելով թէ ճշմարիտ իւր հօր հարագատ բարեկամներն են և ներքուստ մխիթարութիւն զգաց, որ իւր հայրը այսպիսի սրտացաւ և

մտերիմ բարեկամներ է ունեցել: Մատանայի Ապրտակը մօտեցաւ Արշակին և շողորթութեամբ ասաց. — «Հալար հերոգութիւն ենք խնդում քեզանից, որ քո հանգուցեալ հօր և մեր երախտաւոր բարերարի յուղարկութեանը չը կարողացանք ներկայ լինել, բացակայ լինելով քաղաքիցս՝ հենց նորա սեփական գործերի պատճառաւ: Հանգուցեալը ոչ թէ քո հայրն էր, այլ մեր այստեղ եկող բոլորիս, որի շնորհիւ մի այն ապրում ենք: Տայ Մատուած նոյն խիղճը և նոյն հոգին քեզ ևս, որ մեզ նման խեղճերին և չքաւորներին նոյն աչքով նայես, ինչ աչքով որ հանգուցեալն էր նայում»: Միամիտ Արշակը այդ խարդախ խօսքերը հալած իւզի տեղ ընդունելով, ասաց, — «այսուհետեւ ցանկանում եմ, որ դուք միշտ ինձ մօտ լինիք, այլ ևս օտար տեղ չըգնաք, հօրքս բարեկամները նոյնպէս իմ բարեկամներս են, իսկ ձեր ապրումաւ մասին ևս Մատուած ողորմած է...»: Խաբեւանները խկոյն ոտքի կանգնելով ասացին. — «շատ շնորհակալ ենք, որ մեզ նման տկարներին ընդունում էք ձեզ մօտ, և ձեր խօսքերը մեզ մխիթարեցին, բայց մի ամենախոնարհ խնդիր ունենք ձեզ առաջարկելու, խնդրում ենք, եթէ կարելի է մեզ հետ միասին գնանք գերեզմանատուն, ձեր հօր գերեզմանը ցոյց տաք՝ վերան աղօթենք և մեր վերջին ողջոյնը տալով մեր երախտագիտութիւնը ցոյց տանք հանգուցեալին»: Արշակը դոցա առաջարկութիւնը ընդունեց միասին գնացին գերեզմանատուն և ցոյց տուեց նոցա իւր հոր գերեզմանը:

Խաբեւանները սկսեցին կեզծ ու պատիր սգալ, հառաչել և կոծել. վերջը ձեռքերը դէպի երկինք բարձրացնելով Արշակի համար կեանք խնդրեցին: Այս սրտաշարժ տեսարանից Արշակի սիրտը շատ տխրեց: Մատանայի Ապրտակը մօտենալով Արշակին ասաց. — Տէր իմ, այստեղից մօտ մի լաւ գուարձալի այգի կայ, գնանք այնտեղ մի փոշր տխրութիւնդ փառաւոր»: Արշակը յօժարեցաւ և գնացին այգի: Արշակը երբ տեսաւ այգին՝ ասաց. — «արդարն, ձեր գովածի չափ գուար-

ձալի է, ևս շատ սիրեցի այստեղ»: Այգիի մէջ կար մի երկյարկանի գեղեցիկ պատշգամբով տուն, նոքա բարձրացան երկրորդ յարկում նստեցին: Այդ շինութեան մէկ կողմը շատ բուսանք իւր պարզ գովաշուցիչ ջրով վեր/վար թռչելով ոտողում էր գոյնզգոյն հոտաւէտ ծաղիկները, միւս կողմը սոխակները իւրեանց գեղեցիկ դալայլիկներով քաշում էին մարդկանց սրտերը դէպի իւրեանց. միւս կողմից քաղցրահունչ չիւն գեփիւտը ծառեր և ծաղիկները նորահարսի նման տարուբերում էր. այս բոլորը Արշակին սաստիկ պրաւեց: Ծարպիկ խաբեւանները տեսնելով Արշակի գրաւուելը. սկսեցին մի փառաւոր սեղան պատրաստել, զանազան տեսակ խմիչքներով, ախորժանամ կերակրեղէններով: Նստեցին սեղան, իսկ Արշակը զգուշանում էր խմելուց, բայց խաբեւանների թախանձանոցը չ'զիմանալով մի երկու բաժակ դատարկեց: Մի փոքր տաքանալով այսուհետեւ ինքն էր խնդրում խմել. բաւական խմելով՝ Արշակը իրան կորցրեց, սկսեց գրականից հանել ոսկին և շաղ՝ տալ, ծախսերի մատենել. այնպէս որ՝ այդ օրը քառասուն քսակ ոսկի ոչնչացրեց: Երեկոյեան խաբեւաններին հրաւիրեց տուն և մինչև կէս գիշերը զուարճացան միասին: Արշակը իւր հօր մահուան կսկիծը մոռացաւ բոլորովին և պստւում էր. — «մի երբ պիտի լուսանայ, որ նորից գնամ նոյն այգում իմ բարեկամների հետ մխիթարուիմ»: Հետեւեալ օրը աւելի մեծ պատրաստութիւն տեսաւ և ուրիշ բարեկամներ ևս հրաւիրեց և երգիչներ բերելով շաւլ խնջոյք կատարեց: Միով բանիւ այսօր գլինետուն, վաղը մի այլ տեղ, այդ անառակների և դոցա նման կանանց հետ գնալով և զեխ և անվայել կեանք վարելով Արշակը քիչ ժամանակում վատնեց իւր հօր կարողութիւնը, և մինչև անգամ ծախսեց թէ իւր մօր և թէ քրոջ ունեցած զարդ ու զարգարանքները:

Այդ անառակները Մեկիւր Սերահամի կարողութիւնը

խաբարախութեամբ խլելով Արշակից հեռացան և չկամեցան նոյն իսկ ճանաչել նորան:

Արշակը խելքի եկաւ, բայց արդէն ուշ էր, նոր սկսեց աւազել իւր բաղդը, բայց բաղդը նորանից հեռացել էր բոլորովին:

Նոր ի նորոյ սկսեց իւր ապրուստի մասին հոգալ: Որեւիցէ գործի անխելահաս համարելով իրեն, Արշակը ըսկսեց շուկաներում ձի մանածել. այդ կերպով հաւզիւ մի կտոր չոր հաց էր վաստակում:

Մի օր մտածեց որ այդպիսով կառավարուել չի լինի, գնաց մտաւ մի պղնձագործի մօտ արհեստ սովորելու նպատակով և նորան աշակերտեց: Մի անգամ վարպետը նորան ասաց. — «գնա մի կուժ ջուր բեր... բայց մուրձերի ընդհարումներից Արշակը չլսեց վարպետի ձայնը. և երբ մի քանի անգամ ևս կրկնեց վարպետը մի և նոյն խօսքը և Արշակը անտարբեր մնաց՝ բարկացաւ և Արշակին ծեծելով խանութից դուրս արեց: Մի օր էլ գնաց մի դերձակի աշակերտ եղաւ. նկատեց վարպետի ազատ մկրատ շարժելը, շատ հեշտ երևեցաւ նորան և մտածեց որ երբ իւր վարպետը մի տեղ գնալու լինի, դիպակների ծալքերից մինը վայր իջեցնէ և ձև անէ. և վարպետը գալով տեսնելով որ լաւ է ձևել, նպաստ գովէ: Մինչդեռ Արշակը այդպէս մտածում էր, յանկարծ եկան նորա վարպետին կանչեցին. երբ վարպետը խանութից հեռացաւ, Արշակը իւր մտածածը կատարեց, վայր առնելով դիպակը սկսեց ձևել, և հագար կտոր անելով վայր ածեց: Երբ վարպետը վերադարձաւ և Արշակի արածը տեսաւ, խելքը գլխից թռաւ և բացականչեց. «անի, անպիտան, դու իմ սուսն քանդել ես, ասելով՝ սաստիկ ծեծեց արշակին և իւր մօտից դուրս արեց:

Վերջապէս Արշակը մի կարճ միջոցում երեսուն և երկու արհեստի մտաւ. բայց ոչ մինից մի բան չսովորեց այլ ծեծ ուտելով հեռացաւ: Մնալով անգործ՝ խելագարի նման

շրջում էր աստանդական: Մի օր ճանապարհին հանդիպելով մի սրճարանի՝ ներս մտաւ և տեսաւ որ մեծ բազմութիւն է հաւաքուել, որոնք լսում են այնտեղ երգող երկու աշուղներին: Մօտեցաւ նա դէպի աշուղները և համբուրելով ձեռքերը՝ խնդրեց որ իրեն աշակերտ ընդունեն. աշուղները նայելով Արշակի պատկերին հետեւալ խօսքերը արտասանեցին:

«Վերջապէս աշխարհ չէ եկել այսպիսի լըսի կըտոր,

«Գեղատեսիլ մալը է ծնել, կեցցէ հայրը բաղդաւոր»:

Այս խօսքերը ասելով ընդունեցին աշակերտ:

Արշակը այդ աշուղների մօտ բաւական ժամանակ ծառայեց:

Ամեն կողմից Արշակի գեղեցիկութիւնը իմանալով խումբ խումբ գալիս էին տեսնելու:

Մի օր սրճարանում հաւաքուած մարդիկ միասին խնդրեցին աշուղներից, որ թոյլ տան Արշակն ևս մի բան երգէ և նուագէ: Աշուղները համաձայնեցան և այդ երեկոյեան պատրաստուեցան լսելու Արշակին. բայց Արշակը երկու խօսք անգամ չկարողացաւ միասին արտասանել և ոչ իսկ նուագել: Աշուղները այս տեսնելով սաստիկ վշտացան և անբաւական մնալով Արշակից նորան ասացին. — «գուռ ոչինչ չես կարող սովորել և լաւ է շուտով հեռանաս», Արշակը այդ տետոյ՝ Արշակի վերայ թմրութիւն եկաւ և քնեց:

Գնի մէջ Արշակը երազ տեսաւ: Մի մարդ նստած սպիտակ ձիւ վրայ մի ձեռքում բռնած ունէր մի գեղեցիկ, չըքնաղ օրիորդի պատկեր, իսկ միւս ձեռքում մի բաժակ՝ լի գինով, գինին երկարացրեց դէպի Արշակը և ասաց. «անի, խմիր». Արշակը որպէս լետ քաշուելով ասաց թէ— «ես գինի չեմ խմում, որովհետեւ մի անգամ գինի խմեցի և հօրս կայքը և կարողութիւնը փչացրի, եթէ մի անգամ էլ խմեմ, ես ինձ

կ'մահացնեմ»։ «Մէ, ո՛չ, ասաց ձիաւորը, այս գինին կենաց գինի է, առ խմիր, վերքերիդ գեղ պէտք է լինի»։

Արշակը ընդունեց գինին և հարցրեց—«սո՞ւմ կենացը խմեմ»։ ձիաւորն ասաց—«խմիր Թիֆլիս քաղաքում եղած Խօջայ-Սահակի Շահ-Սանամ աղջկայ կենացը, որ դունորան սիրահար և նա քեզ սիրունի պէտք է լինի. բայց շատ չար-չարանքից յետոյ պիտի համարեմք ձեր փափաքին, և այս գեղեցիկ պատկերը որ տեսնում ես՝ Շահ Սանամինն է»։ ասաց և անյայտացաւ։ Նոյն գիշերը նոյն ձիաւորը գեղեցիկ հագնուած երևեցաւ Թիֆլիսում երազի մէջ Շահ Սանամին և ցոյց տալով նորան Արշակի պատկերը, և խմացնելով գինին՝ նոյն խօսքերը Արշակի վերաբերմամբ ասաց և անյայտացաւ։

Աղջիկը իւր տեղում, և աղան իւր տեղում, երկուսն էլ սկսեցին սաստիկ սիրոյ վառ կրակով այրուել, Արշակը խելագարի նման քնից զարթնելով, տեսաւ որ ստոյգ իւր մօտ մի ոտկեայ թաս կայ, հաւատաց երազի ճշտութեանը։ Առաւօտեան վեր կացաւ գնաց այն սրճարանը, որտեղ երգում էին երբեմն իւր երկու վարպետ աշուղները։ Այնտեղ մի փոքր նստելուց յետոյ, այնտեղ եզոզ մարդկանցից խնդրեց. որ նոքա մի ջնորդեն աշուղներին, որպէս զի իւր ձեռք մի սաղ տան։ Նոցա խիստ թախանձանացը զիջանելով վարպետները՝ տուին Արշակի ձեռքը մի սաղ։ Արշակը սաղը ձեռն առաւ, և իսկոյն այնպէս ճշտութեամբ լարեց թելերը, որ վարպետները զարմացան. յետոյ սկսեց ածել մի գեղեցիկ խաղ, որից յետոյ սրտից մի անի քաշեց։ Այնտեղ եզոզ բոլոր մարդիկ զարմանալով ասացին թէ՛—«Արշակը այս գիշեր իւր վարպետը գտել է»։ վարպետները հրաման տուին երգելու, և նա երգեց այսպէս—

Ստեղծողից սրտով խնդրեցի մի բան

Փոհ եմ որ փափաղիս հասցուց շուտ ինձի.

Իցէ թէ խնդիրս գուր եկաւ նորան,

Բարիքներ ցոյց տուեց քաղմօզութեան ինձի։

Փոքր հասակիս մէջ շատ ցաւեր տեսայ,
Խնդութիւն չտեսած հոգսի մէջ ընկայ
Տուեցին իմ ձեռս գինով լի կթխայ,
Մի ոտկի ըմպանալ՝ փայլուն-զուտ ինձի։

Իմ ազգականներս մօտ եղան եկան,
Սկսեցին անել լաց ու կոծ կական,
Ոմանք ասին խելագար է այս տղան,
Ոմանք էլ կարծեցին խելամուտ ինձի։

Արշակն եմ, այս գիշեր միտքարուեցայ,
Հզօր ձեռք կեանք առայ, զարգարուեցայ,
Թիֆլիզ՝ Շահ Սանամին սիրահարուցայ,
Կարծես թէ ծանօթ էր նա մանկութ ինձի։

Այս երգը Արշակը այնպիսի եռանդով ասաց, որ բոլոր լսողները զարմանքով սկսեցին նայել Արշակի երեսը և մնացին ապշած ու հիացած։

Վարպետները ասացին Արշակին թէ. —«տուր սաղը մի փոքր էլ մենք երգենք»։ այնտեղի մարդիկ ասացին. «մենք ձեզ շատ ենք լսել. թողէք թող Արշակը երգէ և նուագէ»։ Այս խօսքերը զարգացրին աշուղներին և վերջիններս միմիանց երես նայելով քաշուեցան մի անկիւն. խորհուրդ առին, որ մի կերպ Արշակին հեռացնեն այդ քաղաքից, կարծելով որ այնուհետեւ Արշակի շաղցը ձայնը լսողները գէպի իրանց զգուանքով կնայեն, հետեալէս իրենք զրկուած պիտի լինին ապրուստից։

Մի քանի օրից յետոյ նոքա կանչեցին Արշակին և ասացին. —«մենք կամենում ենք այստեղից հեռանալ, որպէս-զի դնանք օտար քաղաքներում կարողանանք մեր ապրուստը ճարել, մի քանի մարդկանց դովասանութեան համաձայնութեամբ՝ հաւանական է որ Թիֆլիզ գնանք, որտեղ մի երգատողին մի ոտկի կտան. որդի. կղան մեզ հետ»։ Արշակը համաձայնելով ասաց. —«ինձ աւելի լաւ կլինի այդ բանը. բայց

մայրս և քույրս ինչ անեմ, «Մայրդ և քույրդ նայնպէս մեզ հետ
կլինեն», աւելացրին նորքա, և այնպիսի մի պայման դրին
իւրեանց մէջ, որպէս զի երեք օրեց լետոյ արդէն պատրաստ
լինին քաղաքից դուրս այգիների գլուխը:

Արշակը սազը գցելով իւր ուսը վերադարձաւ տուն,
և երբ մայրը հաց բերեց ուտելու և ապա սկսեց հարցնել
թէ, որտեղ էր այս քանի օրը, Արշակը՝ և ասաց.— «Որդիս,
չգիտեմ որ արանց քեզ ոչ ես ոչ խեղճ քույրդ կեանք չու-
նինք»: Արշակը այլ ևս չկարողացաւ հաց ուտել. սազը
առաւ ձեռքը և իւր դրութիւնը մօրը հասկացնելու համար
երգեց այսպէս.—

Գլխովդ պտույտ գամ, ծնող թանկագին,
Մայրիկ, ես Վրաստան գնալու եղայ.
Այնտեղ սպասում է ինձ իմ սիրուհին.
Մայրիկ, ես Վրաստան գնալու եղայ:

Թիֆլիզ քաղաքումն է, բաղդով երջանիկ,
Անունը Սանամ է՝ իշխանի աղջիկ.
Այնտեղ սպասում է ինձի մի գեղեցիկ,
Մայրիկ, ես Վրաստան գնալու եղայ:

Բոլոր Պարսկաստանում չկայ ընկերը,
Կրակի պէս վառվում են աչքերը.
Երազիս մէջ տեսայ սիրուն պատկերը,
Մայրիկ, ես Վրաստան գնալու եղայ:

Իմ կրակիս սար ու ձոր չի դիմանայ,
Մարդ կուգեմ, որ իմ ցաւերս իմանայ,
Այսուհետ այս երկիրը մեզ ձեռք չի տայ.
Մայրիկ, ես Վրաստան գնալու եղայ:

Այս սիրոյ հարուածը դիպաւ Արշակին,
Ոչ ոք ցաւող չկայ խեղճիս վիճակին,
Գործին հասնելու է իւր ժամանակին,
Մայրիկ, ես Վրաստան գնալու եղայ:

Մայրը համոզուած լինելով այդ խօսքերից, որ Արշակը
անպատճառ պիտի գնայ Թիֆլիս, ասաց.— «Որդիս, երգերդ
և նուազելդ շատ հիանալի է և կարող ես դու գործնով
հաց գտնել ուստի դու այժմ մի առ ժամանակ գնայ Թիֆ-
լիս և երբ գործդ բոլորովին աջողակ եղաւ, մեզ էլ այն
ժամանակ տանել կ'տաս, իսկ մեզ համար աւելի լաւ է այս-
տեղ մնալը»: Արշակը նորից սկսեց երգել—

Երազումս մի ասող տեսա,—
Մայրիկ, Թիֆլիս քաղաքում.
Պէտք է գտնեմ իսկը նորա,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքում:

Սիրուններու անդրանիկը,
Արեւը չէ, Արփենիկը,
Խօջայ-Սահակի դստրիկը,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքում:

Սիրոյ շանթը գիպաւ սրտիս,
Մէկ տեղ գնանք, մեղքքերը զիս,
Շահ-Սանամն է կեանքս ու հոգիս,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքում:

Կերպը թղթում տեսայ յարգի,
Գեղահրաշ ոսկէծղի.
Հասակ ունէր որպէս նոճի,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքում:

Նիւրը իմ ձեռքս առայ,
Մագերը փափուկ մետաքսեայ.
Արշակին տուեցին բութա,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքում:

Մայրը և Արշակի քույրը լսելով այս երգը համոզուե-
ցին, որ Արշակը պիտի գնայ, իրենք ևս պատրաստեցին
հետևելու նորան: Արշակը իւր հօր ժառանգութիւնից միակ

բնակութեան համար մնացած տունը ծախեց, գնեց ձի-
երեքը հեծնելու՝ իսկ չորրորդը ճանապարհի բեռ բաժնալու
համար: Երեք օրից յետոյ արդէն Արշակը իւր մօր և քրոջ
հետ պատրաստ կանգնած էր քաղաքից դուրս «Այգիների
գլուխը» ասուած տեղում, բայց տեսնելով, որ իւր վարպեա-
ները չըկան. մօր և քրոջը թողեց այդտեղ և ինքը գնաց
նոցա ուշանալու պատճառն իմանալու:

Արշակը գնաց սրճաբանը և տեսաւ որ վարպետները
անհող նստած են ասաց. — «Ես մօրս և քրոջս հետ ժամա-
դիր լինելու տեղում պատրաստ կանգնած էի, իսկ դուք դեռ
ես նստած էք»: Վարպետները պատասխանեցին. — «որդի,
ճշմարիտ է որ մենք ես պիտի լինէինք ձեզ հետ, բայց
մաքերս փոխուեց, որովհետեւ մենք տեսնում ենք, որ դեռ
ձմեռ է և շատ դժուարութիւն է այժմ ճանապարհորդել.
աւելի լաւ է սպասենք դարնան. փողը միւս օրը դարուեր
կը բացուի, այն ժամանակ սարերի վրայ ծաղիկները կոխե-
լով, աղբիւրներից սառը ջրեր խմելով, և գառի խորոված
ուտելով կգնանք. և էլ մի քանի գործեր պատահեց մեզ
այս երկօրս, ուստի թողնել գնալը դժուար է: Դու պատ-
րաստուել ես, կարող ես այժմ գնալ, Աստուած քեզ հետ.
մենք էլ Զատիկ ասած օրը Թիֆլիսում կլինինք և մի
մեանց դարձեալ կըտեսնենք. քեզ օրհնող ենք», այս խօս-
քերը կեղծ էին թէև լեզուով այսպէս խօսում էին, բայց
սրտով ասում էին «գնալդ լինի գալդ չլինի»:

Պարզամիտ Արշակը համոզուեց և համբուրելով վար-
պետների ձեռքերը «մնաք բարով» ասաց և վերադարձաւ
մօր և քրոջ մօտ և շարունակեցին իւրեանց ճանապարհը:
Երբ քաղաքից մի փոքր հեռացան, Արշակը յետ դարձաւ և
սկսեց նայել դէպի քաղաքը, իսկոյն դժաց իբրև թէ քաղաքը
զժգոճ էր նրանից, որ առանց միտա բարով ասելու հե-
ռանում է: սիրտը չդիմացաւ, առաւ սաղը ձեռքը և երգեց
այսպէս. —

Մնաս բարեաւ, Թաւրէզ քաղաք,
էլ չեմ ուզում դառնալ քեզի,
Ատրպատականի ճրագ,
Ձեմ կարող մոռանալ քեզի,

Աստուած պահէ շէն ու ազատ,
Յաւէ, վտանգներէ ազատ.

Հայրենիք ես, չեմ ուզեր վատ,
Կուգեմ ծաղկած միայ քեզի:

Հետս առած քոյր ու մայրս,
Ծոցդ աւանդ թողի հայրս,
Ուզեցի, ծննդավայրս,
Վերջին բարեւ տալ քեզի:

Անցնելով մի օրուայ ճանապարհ, երեկոյեան հասան Սո-
ֆիա անունով մեծ գիւղը և գիւղերեցին մի իշխանում: Միւս
օրը թէև ամպամած էր, բայց խաղաղ օր էր ուստի շարու-
նակեցին նոքա իւրեանց ճանապարհը և ուղևորուեցին դէ-
պի Մարանդ: Մի երկու ժամ հազիւ գնացին, ահա յանկարծ
սկսեց փչել սաստիկ քամի և ձիւնը ինչպէս թող բարձրաց-
նել. մոլորուեցան խեղճերը, ճանապարհը կորցրին: Արշակի
մայրը և քոյրը սկսեցին սաստիկ տրանջալ և ասել. — «մի-
թէ մեզ բերիր այստեղ ցրտից և բուքից մեռցնելու համար:

Մինչդեռ սոքա այսպէս տրանջում էին, յանկարծ Ար-
շակը զանգակների ձայն լսեց. ուշադրոթիւն դարձրեց և
տեսաւ որ իրենց ետեւից են գալիս. սպասեցին մինչև որ
եկան և տեսան որ մի մեծ կարաւան է: Կարաւանի տէրը
թիֆլիսեցի Խօջայ-Մուրադն էր, որը Հնդկաստանից դառ-
նում էր Թիֆլիս. երբ որ սոցա տեսաւ, հարցրեց. — ովքեր
էք և դուք այս ցրտին ու բքին ի՞նչ էք անում այս սարի
դուխը: Արշակի մայրը պատասխանեց. — Ես Թաւրիզեցի
Մելիք-Աբրահամի կինն եմ, սոքա էլ իմ որդիքս են. սոցա
հայրը մեռնելուց յետոյ, այս սրդիս իւր հօր բոլոր կարողու-
թիւնը արքեպիսկոպոսեմի փչացրեց, այժմ միայնով խեղճ,

զնում ենք Թիֆլիս, որպէս զի այս որդիս աշղուծիւն անէ
 և ապրինք: Ճանապարհներս կորցրել ենք, բայց Աստուած
 ձեզ Սուրբ Սարգսի նման մեզ օգնութեան հասցրեց, Խօջա-
 Մուրատն ասաց.— «Ահ, միթէ դուք նրա կի՞նն էք. նա
 իմ տէրս և բարերարս էր, Աստուած ողորմի նրա հոգուն.
 Իսկոյն հրամայեց ծառաներին դոցա վերարկուներ հագցրին,
 տաքացրին, և խոստացաւ որ իւր պահպանութեամբ կ'հասց-
 նէ նոցա մինչև Թիֆլիս: Այդ երեկոյնան բաւական չար-
 չարուելուց յետոյ հասան Մարանդ: Կարաւանը իջևանելուն
 պէս՝ Արշակը իւր մօր և քրոջը զետեղելով մի տաք սենեա-
 կում, ինքը առաւ սազը և գնաց Մարանդը շրջելու: Մտաւ
 մի սրճարան և այնտեղ նստողների հարցմանցը, իւր որտե-
 ղից և ով լինելը հասկացնելուց յետոյ սկսեց ամել սազը և
 երգել այսպէս—

Հայրենիքից հեռանալով,
 Գնում եմ Վրաստան հիմայ.
 Ազգ ու երամ մոռանալով,
 Փնտրում եմ սիրական հիմայ:

Հօրս անունն էր Աբրահամ:
 Մեռանելը կլինի հինգ ամ.
 Աստուած նորից մի բարեկամ՝
 Հասցրուց օգնական հիմայ:

Արշակն եմ, սիրոյ փափազից,
 Զարնուայ նետից, սլաքից.
 Հեռացայ Թաւրէզ քաղաքից,
 Եղայ թափառական հիմայ:

Այդտեղ ստանալով ժողովրդի շնորհակալութիւնը դուրս
 եկաւ շրջեց աւանը և ապա վերադարձաւ իջևանը: Միւս
 առաւօտեան ձմեռուայ վախկոտ արևը նոր էր դուրս եկել,
 երբ կարաւանը ճանապարհ ընկաւ: Կարճ ժամանակից յե-
 տոյ անցնելով Զուզայ, յետոյ Նախիջևան, հասան Երևան և
 Երևանից չորս օր անցնելուց հետոյ՝ հասան Թիֆլիս: Քա-

ղաքի մօտ Խօջա-Մուրատն ասաց Արշակին.— «Որդիս, ես
 իմ խոստմանս համեմատ ձեզ տեղ հասցրի պջ և առողջ.
 այսուհետև Աստուած ձեզ հետ լինի, ես գործերով զբաղուած
 եմ, զնա՞ քեզ համար տեղ գտիր, յետոյ դարձեալ միմեանց
 կ'տեսնենք»:

Արշակը իւր մօր և քրոջ հետ մտնելով քաղաք, մո-
 լորուեցան որպէս օտար և անծանօթ մարդիկ և չկարողա-
 նալով մի իջևան գտնել՝ հեռուից տեսան Սուրբ Գեորգ եկե-
 ղեցու դմբէթը և գիմեցին դեպի այդ եկեղեցին: Հասնելով
 եկեղեցու գաւթիժը, Արշակը մօր և քրոջը թողեց այնտեղ,
 իսկ ինքը դուրս գնաց տեղ գտնելու: Պատահեց մի մեծ շի-
 նութեան առաջ նստած մի վաթսուհիմանայ ծերունու, որը
 գլգլակ էր ծխում. մօտեցաւ նորան և պատկառանքով ձեռ-
 քը համբուրելով խնդրեց գիւերելու տեղ. բայց այդ անգու-
 թը անտարբեր գտնուեցաւ գէսի Արշակի աղերսանքը: Ար-
 շակը մտածեց որ այդ ծերունին եթէ խօսքով չշարժուեց՝
 գուցէ երգով խղճի դայ. առաւ սազը և երգեց:—


Դիւիդ մատաղ լինիմ, ծերունի հայրիկ,
 Մայրս եկեղեցու գաւթումը մնաց.
 Ողորմութիւն արա, մի տեղ տուր փոքրիկ
 Մայրս եկեղեցու գաւթումը մնաց:

Յուսով եմ որ ինձի դու մի տեղ կ'առաս,
 Ընկածներու դրութիւնը կը զգաս,
 Մայրս մեռնի, դու մեղքի մէջ կ'մնաս,
 Մայրս եկեղեցու գաւթումը մնաց:

Կորաւ կարողութիւնը, կորաւ ամեն բան...
 Ես էլ մի մարդ էի, եղայ աննշան...
 Խնդրում եմ շնորհես ինձ մի օթևան,
 Մայրս եկեղեցու գաւթում մնաց:

Ահի կողմից ձիւն կուգայ, մէկ կողմից անձրև,
 Դարձել ենք խեղճ թռչուն, անբուն, առանց թի-

3098
40



Քեզանից կսպասեմ այսօր մի պարգև,
Մայրս եկեղեցու գաւթումը մնաց:

Երգն էլ ազդեցութիւն չարեց այդ քարացեալ ծերունուն, բայց Արշակը նկատեց, որ այդ տեղով անցնում են մի խումբ երիտասարդներ, որոնք լսում էին նորա երգը, յուսալով որ դոցանից մի օգնութիւն կլինի, երգեց այսպէս—

Վարպետներս դարձան ինձի կախարհներ,
Լարեցին իմ դէմս բազում թակարթներ.

Դուք էլ աղաչեցէք, երիտասարդներ,
Մայրս եկեղեցու գաւթումը մնաց:

Թէ կցանկնաս դու երկնային պալատին,
Պէտք է գթաս օտարներուն, աղքատին,
Արի, լսէ խեղճ Արշակիս խրատին,
Մայրս եկեղեցու գաւթումը մնաց:

Երիտասարդները Արշակի երգից զրգուելով յարձակուեցան ծերունու վերայ և ասեցին. — «անիրաւ, այս երկու ժամ է այս խեղճը քէզ է աղաչում այսպէս չարաչար և դու չե՞ս լսում. քեզ նմանին սպանողը յանցաւոր չի համարուի, այլ հերոս», այս ասելով կամենում էին դանակներով մահացնել դորան. եբք զրացիները լսեցին դոցա աղմուկը՝ շտապեցին և ծերունուն դոցա ձեռքից ազատեցին: Դրացիները երիտասարդներից իմանալով պատճառը՝ շուտով ուղարկեցին բերել առէին Արշակի մօր և քրոջը՝ այն ժամանակ ծերունին տեսնելով այդ խեղճերին՝ ընդունեց հիւր իւր տան մէջ և այնուհետեւ պատուում էր և մխիթարում բաւական ժամանակ:

Մի օր Արշակը այդ ծերունուն հարցրեց. — «արդեօք այս կողմերում աշուղներին սիրում են թէ ոչ»: Ծերունին, որի անունն էր Փոլատ-Խօջայ, ասաց. — «Ալիւրի մէյգանի վերետւմ, մեր Գիծ-Մանուկի սրճարանում աշուղները ասղի (հանելուկ) են կախ արիւ և փորձւում են միմեանց հետ.

Աստուծով վաղը կգնանք այնտեղ, եթէ շնորհք ունիս ցոյց կ'առաս»: Աստուտեան Փօլատ-Խօջան և Արշակը միասին գնացին Գիծ-Մանուկի սրճարանը և բարեւ տալով նստեցին:

Այնտեղ նստողները և աշուղները տեսնելով Արշակի սաղը, հարցրին որտեղացի լինելը և երբ որ իմացան թաւրիղեցի է՝ աշուղների գլխաւորը ասաց, — ես թաւրիղի շատ տեղերը ման եմ եկել. սաղդ առ և գովիր թաւրէզը»: Արշակը սիրով վառուած՝ խկոյն սաղը առաւ և սկսեց. —

Լսեցէք, պարոններ, սկսեմ մաս մաս,
Ձեզի անեմ գովասանքը թաւրէզու.
Հարսանիքի, տօնի հազնում են կերպաս
Ձի թառամի զարդարանքը թաւրէզու:

Թաւրէզն ունի սարեր, անտառ, հանք, մետաղ,
Միջի նստողներն են իշխաններ չքնաղ.
Հարիւր հազար անկիւն, ութը հազար թաղ,
Այգիներն են զբօսանքը թաւրէզու:

Շատ ըմբիշներ ունի կպչող և հզօր,
Հարուստ վաճառական կայ միշտ անդանօր.
Հարիւր հազար հակ է կապւում ամեն օր,
Գնում է դուրս լաւ տալրանքը թաւրէզու:

Անսպասելի կերպով դուրս է գալիս, որ Շահ-Սահամի հօր Խօջա-Սահակի տունը գտնւում է այդ սրճարանի մօտ: Խօջա-Սահակը լսելով Արշակի գեղեցիկ ձայնը՝ ուղարկում է իւր ծառաներին տեղեկանալու: Ծառաները եկան տեսան, որ մի քսան տարեկան երիտասարդ է և սաղ է ածում ու երգում. խկոյն գնացին իմացրին Խօջա-Սահակին, ասելով. — «Տէր, մի ամենագեղեցիկ երիտասարդ է, երեսը լուսնեակի նման փայլում է. սրճարանի մէջ իշխանաբար նրստած երգում է և նուագում. իւր հետ փորձուելու նստող բոլոր աշուղները զարմացել և հիացել են նայելով նորա տննման պատկերին»: Երբոր Խօջա-Սահակը լսեց այս խօս-

քերը եկաւ սրճարան և տեսաւ որ արդարեւ, այդպիսի դե-
ղեցիկ երիտասարդ աշխարհի մէջ չի գտնուի. նոյն ժամին
հագուով և որսով նորան սիրեց և հեազհետէ պատիւը աւե-
լացնելով, մօրքի մէջ տասմ էր. — «Եթէ այս երիտասարդը իմ
աղջիկը ուզեց, ես ամենայն ուրախութեամբ կ'տամ սորան»:

Շահ-Սանամն էլ իրանց տան պատշգամները վերայ ման
եկած ժամանակ, Արշակի ձայնը լսելով, կանչեց իւր սպա-
սուհի Արեգնազանին և ասաց. — «Այս ձայնը ինձ այրում է,
չգիտեմ թնչ է պատճառը, և որ գլխաւորն է իմ երազիս
մէջ տեսած երիտասարդի ձայնին է նմանում»: Արեգնազանը
ասաց. — «Կարելի է»:

Իսկ սրճարանում եղող աշուղները զովելով Արշակին
ասացին. — «Որդեակ այդ երգը լրացրու, որ քեզ Աշըղ-Ղա-
րիբ մականունը տանք»: Արշակը շարունակեց երգել. —

Հնդկաստանից կրգայ մեռաբար մանուած,
Յորենը, բրինձը դաշտերում ցանուած.
Ոչխարը հօտերով Մուղսնից գնուած,
Վրաստանու մեղրն է կեանքը Թաւրէզու:

Մականունս Ղարիպ, Արշակ իսկական,
Թաւրէզու գովեստը խօսեցայ այսքան,
Ձեմ կարող մոռանալ բնաւ յաւիտեան,
Շատ եմ տեսել մեծարանքը Թաւրէզու:

Այս երգին հաւանելով աշուղները՝ զովեցին և ասա-
ցին — «այսուհետեւ քեզ պէտք է կոչել Աշըղ-Ղարիբ», Փո-
լատ-Խօջան և Արշակը վերադարձան տուն: Փոլատը տեսնե-
լով Արշակի այդ օրուայ շնորհքը և ազնիւ բնաւորութիւնը,
աւելի սկսեց սիրել, իւր սիրոյ նշանը ցոյց տալու համար,
թէ Ղարիբին (Արշակին) և թէ նորա մօրը և քրոջը մի մի
ձեռք թանկագին շոր կարել տուեց, պատիւները աւելացրեց.
մի քանի հատ էլ ոսկի ընծայեց և գոհացրեց ամենքին:

Երբ որ Խօջա-Սահակը պէտք է գուրս գար սրճարա-

նից, կանչեց Գիթ-Մանուկին և հարցրեց թէ՛ Աշըղ-Ղարիբը
նրտեղացի է. նա էլ ասաց. — «Թաւրիզեցի Մելիք-Աբրահա-
մի սրգին է», Խօջայ-Սահակը գնաց իւր տունը: Շահ-Սանամը
գիմաւարելով իւր հօրը՝ հարցրեց. — «Հայրիկ, այսօր այդ մօ-
տիկ սրճարանից մի գեղեցիկ ձայն էր գալիս, արդեօք ո՞վ
էր այն երգողը»: Հայրը պատասխանեց. — «Թաւրիզեցի Մե-
լիք-Աբրահամի սրգի Արշակն էր, այստեղի աշուղները մա-
կանուանեցին Աշըղ-Ղարիբ» Շահ-Սանամի սիրտը մի կրակ
ընկաւ և շտապով դատաւարով դէպի իւր հայրը ասաց. —
Հայրիկ, խնդրում եմ մի օր այդ աշուղը կանչես մեր տուն
երգէ, որպէսզի մենք էլ լսենք նորա ձայնը», հայրն ասաց
— «Ես էլ ցանկանում եմ»: Այդ երեկոյեան Խօջայ-Փոլատը
և Արշակը մի քանի ընկերներով տան սեղանի վրայ նստած
էին, հացի ժամանակ խօսք բացուեց նոցա մէջ. Ղարիբն
ասաց. — «Ես էլ շատ փափաղ ունիմ մի հանելուկ քաշ անե-
լու, լալց ինչ արած, նրանցք արդէն քաշ է արած». ըն-
կերներից մինն ասաց. — «Եթէ դու այդքան շնորք ունիս,
մեծ է Աստուած, փաշուանից պատրաստուիր». իսկ տան-
տէրը բերեց մի թանկագին շալ ընծայեց Ղարիբին հանե-
լուկը նորա վերայ քաշ անելու համար: Աշըղ-Ղարիբը գը-
րեց մի հանելուկ և կպցրեց շալի վերայ: Առաւօտեան
կանուխ գնաց սրճարան, Գիթ-Մանուկին հասկացրեց իւր
մտադրութիւնը: Գիթ-Մանուկին ասաց. «տես, որդիս, եթէ
դու քեզանից յոյս ունիս, հանելուկդ քաշ արա այդ բա-
նից ինձ ոչ մի վնաս չի գալ և էլ ես նրանցից ձանձրա-
ցել եմ»: Աշըղ-Ղարիբն ասաց. «Անհոգ եղիր, ամանչողը
թող ամանչէ»: Դնաց հանելուկը բերեց կախեց. Գիթ-Մա-
նուկը սազը առաւ և բոլոր աշուղների սաղերից վեր կա-
խեց ու Ղարիբը հեռացաւ: Աշուղները յանկարծ ներս
մտնելով տեսան մի հանելուկ քաշ արած՝ և մի սաղ էլ
իրենց սաղերից բարձր կախած. բարկացած հարցրին Գիթ-
Մանուկին. — «այս սաղը ո՞ւմն է. այս երկրում, մեզանից

բարձր սով կայ, որ մեզ տգէտների տեղ դնելով սաղը մեր սագերից բարձր է կախել»։ Գիժ-Մանուկը պատասխանեց. — «Երեկ այստեղ Թաւրէզը գովաբանող աշըղն է կախել»։ Աշուղների գլխաւորն ասաց. — Տեսէ՛ք, այդ յանդուգն երիտասարդին երէկ մենք իբրեւ օտար խնայեցինք, պատուեցինք, մեր կանոնի համաձայն մանկանունը Աշըղ-Ղարիբ անուանեցինք, այժմ նա մեզ արհամարհելով, իրան առաւելեցում յաղթանակը տանող նժոյգ ձի է կարծել. կանչեցէ՛ք այդ անպիտանին, որ սաղը գլխին խփելով ջարդ ու փշուր անենք. փորձեմ, քննեմ, տեսնեմ ի՞նչ գիտէ որ համարձակուել է այսպէս բան անել»։ Այսպէս կրակ կտրած խօսում էր, երբ Աշըղ-Ղարիբը ներս մտաւ և տեսնելով գլխաւորին սոստիկ բարկացած ասաց. — «Վարպետ, ինչո՞ւ ես բարկանում, ձեռքը ձեռքից բարձր է մինչև երկինքը (առած)։ Աշուղները ասացին. — «Եօթը ընկեր ենք, եթէ տմենս մի մի խօսք ասենք, քեզ աշխարհից դուրս կհանենք։ Աշըղ-Ղարիբը ձանձրանալով այգալիսի անտեղի խօսքերից առաւ սաղը ձեռքը և այս հարցական երգը երգեց. —

Ձեզանից հարցանեմ վարպետներ գոված,
Ինչ գործիք է շարժող մարդկանց շարունակ,
Մի օրոցքում տասը եղբարք են պառկած,
Երբ օրօրես նորանք կանեն ազադակ։

Այն ով էր որ ժողովրդին գոհացուց,
Քսան հացով հարիւր մարդու կշտացուց.
Այն ի՞նչ կին էր թագաւորին փափկացուց,
Մի ազդ ազատելու դարձաւ ընդունակ։

Այն ի՞նչ բան է չունի մարմին, ուին ձայն՝
Թէ բռնելու լինիս, դուրս կըգայ ունայն.
Ի՞նչ բան է որ կեանքն է մարդկանց ամենայն,
Ամեն մարդ կարող է գանել անստակ։

Ի՞նչն է ունի երկու գլուխ, աչք յիսուն,

Ձեռք տաներկուս, մատ երեք հարիւր վաթսուն.
Չորս բերանով նա աղբում է աննկուն,
Ամեն բերան լեզու ունի ջ կ տեսակ։

Այն ի՞նչ բան է, ջրի մէջը թռչուիլ չի.
Ի՞նչ առարկայ, հողում թաղես փթիլ չի.
Ի՞նչ քնող է, միսը կտրես զարթնիլ չի,
Ղարիբիս մօտ այս բաներն են հասարակ։

Այս երգերը աւարտելուց յետոյ՝ հրաւիրեց վարպետներին իւր ասածներին պատասխան տալու։ Աշուղները միմեանց երես նայեցին և զգալով որ չ'պիտի կարողանան պատասխանել՝ լռեցին։

Իսկոյն Գիժ-Մանուկը աշուղների սագերը առնելով յանձնեց Ղարիբին. (յաղթելու նշանն է այս) և ասաց «մենք բոլոր ժողովրդով խնդրում ենք, որ դու բացատրես քո հարցերը»։ Ղարիբը նորից սաղը տռնելով սկսեց բացատրել —

Ձեզի բացատրեմ վարպետներ գոված.
Մուգիկան է մարդկանց շարժող շարունակ.
Սագի վերայ տասը թելեր կան շարունած,
Երբ սր ածես նոքա կանեն ազադակ։

Նգիսէն էր ժողովրդին գոհացուց,
Քսան հացով հարիւր մարդու կշտացուց,
Նսթերըն էր, որ Ասուերոսին փափկացուց,
Հրէից ազատման եղաւ ընդունակ։

Այն քաժին է, չունի մարմին ունի ձայն,
Թէ բռնելու լինիս՝ դուրս կըգայ ունայն.
Այն՝ ջուրն է, որ կեանք է մարդկանց ամենայն
Հարուստ աղքատ գործ են ածում ամստակ։

Տարին երկու մեծ ածն և շաբաթ յիսուն,
Տաններկու ամիս, օր երեք հարիւր վաթսուն,

Չորս եղանակ, նա ապրում է տնակում,
Ամեն եղանակն է ջուկ, տեսակ տեսակ:

Այն բազն է՝ ջրի մէջը թռչունիլի չի,
Ոսկին թաղես հողի մէջը՝ փթիլ չի.
Մեռած մարդու միտը կտրես զարթիլ չի,
Ղարիբիս մօտ այս հարցերն են հասարակ

Ղարիբի այս բացատրութեանը հաւանելով՝ շնորհա-
կալութիւն յայտնեցին՝ իսկ աշուղները վերկացան հեռանա-
լու: Աշուղ-Ղարիբը կանչեց Գիծ-Մանուկին և վեհանձնա-
րար ասաց, որ աշուղներին յետ կանչէ և իրենց սագերը
յանձնէ: Աշուղները ստացան իրենց սագերը և խոնարհաբար
զլուխ տալով հեռացան:

Արդէն անցել էր երեք ամիս այն օրից, երբ Աշուղ-Ղա-
րիբը Թիֆլիս եկաւ: Գալուսը եկել էր, անցել էին մարտ
և ապրիլ ամիսները. գեղեցիկ մայիսը ժամանել էր իւր
բոլոր անուշահոտութիւններովը. հանրաճանօթ գիծ Քուռը
սաստիկ բարձրանալով կռտակ կռտակ ալիքներ գոյնա-
ցնելով հպարտ և ահռելի կերպով ընթանում էր: ալգի-
ները ծաղկել էին, սկսուել էր թիֆլիսեցիների ուրախու-
թիւնները, թագուհի վարդը իր գեղեցիկ թերթիկներով
ուրախացնում և վշտացնում էր սպիակներուն: Մեր ջրա-
տար Աշուղ-Ղարիբը և Շահ-Սանամը գեռ ևս չէին տեսած
միմեանց: Գիշեր ցերեկ երկուսն էլ մտածում էին թէ՛
արդեօք երբ պետք է մի պատեհ առիթ ունենան միմեանց
հանդիպելով

Մի օր Խօջայ-Սահակը կանչեց Գիծ-Մանուկին և ա-
սաց. — «Աշուղ-Ղարիբը մի օր չի՞ գալ մեր տունը և թէ՛ հրա-
ւիրեմ, որ մի փոքր երգէ և տանեցոյ ուրախացնէ»:
«Գլխիս վրայ» պատասխանեց Գիծ-Մանուկը: Գնաց Ղա-
րիբին յայտնեց՝ որը շատ սիրով ընդունեց. և յետոյ եկաւ
Ղարիբի համաձայնութիւնը յայտնեց Խօջայ-Սահակին, որը

շնորհակալ լինելով խնդրեց, որ վաղը ժամը տասին հրամեն
իւրեանց տունը:

Խօջայ-Սահակը վերադառնալով տուն՝ կանչեց Շահ-Սա-
նամին և յայտնեց նորան Ղարիբի գալը: Երբ որ այս լսեց
Շահ-Սանամը, չափազանց ուրախացաւ: Հետեւեալ օրը Ղա-
րիբի գալու ճանապարհի վերայ լուսամուտի առաջ մի բա-
րակ վարագոյր քաշել տալով՝ սպասում էր անհամբեր: Պայ-
մանաժամին Խօջայ-Փոլատը, Գիծ-Մանուկը և Ղարիբը յայ-
տնուեցան. Սանամը լաւ նայեց եկողներին իւր լուսամուտից:
Սոքա բարձրացան, այդ գեղեցիկ շինութեան մէջ պատրաս-
տուած սենեակում նստեցին: Խօջայ- Սահակը նոցա պատու-
եց նախաճաշիկով:

Շինութեան առաջ կար մի պարտէզ գեղեցիկ շառ-
ուռանով. Աշուղ-Ղարիբը լուացուելու համար իջաւ այս շառ-
ուռանի վերայ, յանկարծ մի փայլ երևեացաւ. այդ փայլը
Սանամի պատկերն էր, որ հանդիպակաց լուսամուտից նա-
յելիս ընկել էր վճիտ ջրի մէջ: Մէկ էլ Ղարիբը գլուխը
վերցրեց՝ նայեց լուսամուտին, Շահ-Սանամին տեսաւ: Խելքը
թռածի նման զաւնալով դէպի Սանամը ուսաց. «ճի՛ ան-
գութ... ինձ քո սիրովդ գցեցիր այս պանդխտութեան մէջ»:
Սրտից մի անի քաշեց, ձեռքերը լուաց, վեր ելաւ նոյն սե-
նեակը ընկերների մօտ: Սուրճը խմելուց յետոյ Խօջայ-Սա-
հակը Ղարիբին ասաց. — «Գործը քեզ մնաց»:
Ղարիբը առաւ սագը և երգեց այսպէս. —

Ման գալածս տեղում, շատրուանի մօտ,
Երևեցան աչքիս աղեղ ունքերդ.
Զթողին մտքիս մէջ մասնաւոր աղօտ,
Երեք որուայ լուսին շքեղ ունքերդ:

Երբ վերացաւ կերպարանքիդ ծածկոցը,
Կարծես լուսով լցուեց բոլոր ծողկոցը,
Իմ սիրտս կրակեց երեսիդ բոցը,
Ո՛չ խելք թողին, և ո՛չ ուղեղ՝ ունքերդ:

Կեանքս քեզի մատաղ, խելահաս գիտուն,
Աչքիս արտասուքը ծով մի անիլ դուն:
Վերաւորիլ մի ինձ, սէր իմ, օրն ի բուն,
Ինձ մի ուղղիլ նեւ ու աղեղ ունքերդ:

Ունքերդ աղեղնակ, աչքերդ լապտեր,
Նայուածքդ եղնիկի, թուշդ վարդիթեր.
Խնդացուր Ղարիբին, գոնէ մէկ գիշեր,
Չձգեն սուկի տակ ուժեղ ունքերդ:

Խօջայ-Սահակը բաւականին հասկացող մարդ լինելով,
Աշըղ-Ղարիբի խօսքերից, աղջկայ լուսամուտից դէպի իրենց
նայելը հասկանալով, ծառաներին ուղարկեց գաղտնի կեր-
պով, որ հեռացնեն. երբ Սահամը հեռացաւ՝ Ղարիբն սկսեց
շարունակել երգը.

Մեծ պարոնը ինձ կարծելով վատավարք,
Քեզ սրայելու համար բանացրեց հնարք.
Ես Ղարիբն եմ, տեսել եմ շատ պատահարք,
Թող բերեն աչքերէս հեղեղ ունքերդ:

Այս խօսքերը աւարտելուց հետոյ Ղարիբը սազը վայր
դրեց, Խօջայ-Սահակը դառնալով դէպի Ղարիբը ասաց. —
«ապրիս, որդիս, այսօրուայ երգեցողութիւնդ շատ սիրեցի.
յուսով եմ, որ այսուհետեւ էլ շատ սէր և ուրախութիւն կը
վայելենք միասին». Երեկոյեան Փոլատ-Խօջան, Գիժ-Մա-
նուկը և Աշըղ-Ղարիբը շնորհակալութիւն յայտնելով հեռա-
ցան: Ճանապարհին Ղարիբն ասաց դոցա. — Ես պիտի գնամ
մօրս տեսնեմ և շուտով կվերադառնամ սրճարան և ձեզ
այնտեղ կ'գտնեմ»: Ղարիբը ճանապարհին մօրը պատահեց
և հարցրեց նորան թէ ուր է գնում մայրը պատասխանեց
որ. — Փոլատ-Խօջայի կիներ իրեն և աղջկան դուրս է արել
տանից. — «քանի որ դուք եկել էք մեր տունը, իմ մարդս
միշտ եւլ է տուն գալիս, և իւր գործին արի չէ՝ միշտ որ-
դուդ հետ ման գալու պատճառաւ»: Ղարիբն ասաց. — «մի

նեղանալ, մայր իմ, քնտ չունի, այդպէս է կանոնը աղա-
մայ և բռնի հիւր լինողը վերջը խայտարակութիւնով պէտք
է դուրս գայ. դու քրոջս հետ մի փոքր սպասիր, ես այս
րոպէիս մի տեղ կ'ճարեմ»: Ուղղակի գնաց Խօջայ-Սահակի
մօտ, և դործի եղելութիւնը հասկացրեց:

Բարեսիրտ շխանագուն Խօջայ-Սահակը իսկոյն ուղար-
կեց կանչել տուեց Ղարիբի մօրը և քրոջը և յանձնեց նո-
ցա մի ձեռք տուն իւր բոլոր կահ-կարասիներով հանդերձ
և նոքա ուրախանալով սկսեցին հանդիստ ապրել այդ նոր
տան մէջ:

Մի օր Խօջայ-Սահակը հրաւիրել էր Թիֆլիսի բոլոր
մեծամեծներին ճաշի. Շահ-Սահամն էլ լսելով Ղարիբի
գալը, ելաւ այդ խմբին նայող մի լուսամուտում նստեց:
Բոլոր հրաւիրեալները բազմեցին, և զեղեցիկ ու ճոխ պատ-
րաստած ճաշը վայելեցին, և մի մի բաժակ Արապիայի
սուրճը ընդունելուց յետոյ, պատուական հիւրերը խնդրե-
ցին, որ Աշըղ-Ղարիբը երգէ: Ղարիբը սկսեց երգել. —

Ես մի խօսքով որոգոյթի մէջ ընկայ,
Օտար երկրում կրակ դիպաւ վառ ինձի.
Այդ կրակով այրուեցի, մոխիր դառայ,
Ով սև աչեր, միք թողնիլ թշուառ ինձի:

Ոչ համբերանք մնաց ոչ մտքի դադար,
Սէր իմ, քէզ է պտուռ սիրտս խելագար,
Հրաժարուիմ՝ քեզի կաննի մի օտար,
Ամթանքը կանէ շնչասպառ ինձի:

Անկեղծ սիրահար եմ, ինձնում կեղծ չկայ,
Անհաստատ չեմ, երեսիդ էլ չեմ խնդայ,
Կմահանամ՝ նպատակից չեմ դառնայ,
Սիրոյ ճամբում կտեսնես պայծառ ինձի:

Ես Ղարիբն եմ, հաւատով եմ միամիտ,
Խղճալով՝ չեմ թողնիլ ինձի անպատիժ.

Սհա քեզ ասում եմ խօսքս ճշմարիտ,
Տուր թեզ ինձ, եկ սիրուհի, առ ինձի:

Հիւրերը մի փոքր էլ երգել տալուց և շնորհակալ լինելուց յետոյ՝ ցրուեցին իւրեանց տները Շահ-Սանամը տեսնելով որ Ղարիբին էլ պէտք է հեռանայ, ուղարկեց իւր սպասուհի Արեգնազանին, որ Ղարիբին չ'թողնի գնալու, այլ կանչէ իւր մօտ: Արեգնազանը ճարպիկութեամբ կատարեց այդ յանձնարարութիւնը: Շահ-Սանամը երբ Ղարիբին իւր մօտ տեսաւ, կարծես թէ աշխարհը իրեն առնին: Սիրալիր կերպով ողջունելուց յետոյ՝ ընկան միմեանց պաշտոնցով և միմեանց տուին փոխադարձ սիրոյ անվերջ համբոյրներ: Աշըղ-Ղարիբը այդ ժամանակ կարծում էր թէ զիցուհիների աշխարհումն է գտնվում: Եւ արդարեւ՝ Շահ-Սանամը գիցուհի կոչուելու արժանի էր. գեղեցկութեան կողմից նա ամբողջ թիֆլիսում առաջինն էր: Հագուստը սպիտակ մետաքսից էր, որ ևս առաւել փայլ էր տալիս գեղեցկութեանը: Սանամը գեռ նոր էր մտել տասնեվեց տարեկան հասակը. մէջքը բարակը, հասակը բարձր, սպիտակ կուրծքի վերայ եղած երկու փոքրիկ նունքներն, եթէ հոգեվարքը անգամ նայելու լինէր կ'կենդանանար. ոսկեթել մազերը քառասուն գիսակ արած՝ լայն թիկունքի վերայ տարուբերվում էր կամարաձև ու յօնքերը մազնիսի նման տեսնող սրտերին քաշում էր գէպի իրեն, փայլուն և վառվառն բիւրեղանման աչերը՝ հոգի և կեանք կտային մարդկանց: Ինչպէս լուսինը երևում է օն ամպի տակից, այնպէս երևում է Սանամի սպիտակ ճակատը, մազերի տակից, պռունկները բարակ և կարմիր, բերանը փոքրիկ, առամները սպիտակ և փայլուն՝ որպէս աղամանդ. լեզուն ճարտար, խօսելու ժամանակ կարծում էիր օդառի լինի. ոտներին հագած ունէր կանաչ կօշիկներ արծաթեայ պայտերով, ճեմած ժամանակ կարծես կաքաւ լինէր: Մի խօսքով ինչպէս խնձորենին տնտառի մէջ

այնպէս էր Սանամը գեղեցիկների մէջ: Աշըղ-Ղարիբն ևս ոչինչ պակաս չէր Սանամից, կարծես թէ Աստուած դոցա մէկգմէկու համար էր ստեղծել. Բաւակէն խօսելուց և կրկին սիրոյ համբոյրներ առնելուց յետոյ պատրաստուեցան գնալու, որովհետեւ արդէն գիշեր էր: Շահ-Սանամը Աշըղ-Ղարիբին ասաց. «Սիրելիս, դու գնալու ես, բայց ես այս սիրոյ կրակներին դիմանալու այլ ևս կարողութիւն չունիմ. փողը մարդ ուղարկիր հօրս մօտ, ինձ հարսնացու խնդրելու համար: Հայրս ի հարկէ ինձ կը յայտնէ գործը, ես էլ կասեմ «դուք գիտէք», որ համաձայնութեան նշան է. այս խօսքիցս հայրս բանի էութիւնը կհասկանայ և մեր վերջը շատ լաւ կ'լինի:

Ղարիբը նոյն երեկոյ բոլոր հանգամանքը պատմեց իւր մօրը, և առաւօտեան մայրը պատրաստուեց և գնաց Խօջայ-Սահակի տունը: Ներկայացաւ Խօջայ-Սահակին և համեստութեամբ բարեւելով կանգնեց, Խօջայ-Սահակն ասաց. — «Բայց, ինչ ցանկութիւն ունիս, ասա»: Տիկին Արուսեակը պատասխանեց. — «Եր իմ, Աստուծոյ կամքով և Մարգարէների ու Սուրբ Հայրապետների գրած կանոններովը խնդրում եմ ձեր աղջիկ Սանամը իմ որդուն՝ Աշըղ-Ղարիբի համար կնութեան». Խօջայ-Սահակը ասաց, — «Շատ լաւ կը լինի, բայց հարուստ տանից աղջկի առնելը մեծ դժուարութիւն է»:

Տիկինն ասաց. — Աստուած ողորմած է, աշխատողին կը հասցնէ:

Վերջապէս Խօջայ-Սահակը քառասուն քսակի չափ ծախս ցոյց տուեց: Արուսեակը վերադարձաւ և գործի դրութիւնը պատմեց Ղարիբին: Ղարիբն ասաց, — «Կը գնամ օտարութիւն, կը պատրաստեմ այդքան գումար և կառնեմ սիրուհիս». և այսպիսի պայման հաստատեց իւր մտքում և սրտում:

Այս գէպը խօսուելով, հասաւ Գիթ-Մանուկի տկան-

ջին, որը իւր սրճարանում գտնուած մտերիմ բարեկամներին ասաց. — «Ղարիբը Խօջայ-Սահակի աղջիկն ուզել է նա էլ տուել է, բայց քառասուն քսակ ոսկի ծախս է ցոյց տուել. այդ երիտասարդը մի ազգատ՝ բայց ազնիւ աղայ է. եկէք այդքան փողը մենք հոգանք»: Նորա բարեկամները իսկոյն համակրելով այդ առաջընկալեան, իւրեանց զբաղանից մի մօտ տալով քառասուն քսակը լրացրին և յանձնեցին Գիթ-Մանուկին. շուտով ուղարկեցին կանչեցին Ղարիբին և ասացին. «Լսեցինք ձեր գործը, բայց իմանալով որ դու օտարութիւն պիտի երթաս, քառասուն քսակ ոսկի աշխատելու, ուստի մենք չուզեցինք որ հեռանաս մեր մօտից և մեր մէջ ժողովեցինք վերոյիշեալ գումարը. և եթէ դարձեալ կըհարկաւորի թէնք կըտանք». Բայց Ղարիբը չընդունեց: Երբոր պատճառը հարցրին՝ ասաց. — «Եթէ ձեր կամքը կըկատարէի. բայց աշխարհ է, գուցէ մի օր հիւանդ ժամանակս առաջարկեցիք թէ արի, մի փոքր երգիր, մեզ ուրախացրու և ես էլ ձեր կամքը չըկատարեցի. պէտք է գնամ օտարութիւն»: Նորա տեսնելով որ հնար չի լինիլ սպասեցնել, տարան ճանապարհ գցեցին, պայման դնելով, որ երբէք միմեանց չմոռնան:

Ղարիբը փոքր ինչ հեռանալով պատահեց մի ծերունու, որ Ղարիբին հարցրեց. — «Որդիս, որ կողմն ես գնում, և ինչո՞ւ համար»: Ղարիբը պատասխանեց — «Ես Խօջայ-Սահակի աղջիկը ուզեցի, նա էլ քառասուն քսակ ոսկի ուզեց. այժմ գնում եմ օտար երկիր աշխատելու»: Ծերունին ասաց. «Որդիս, աղջկայ հետ պայման արե՞լ ես»: Ղարիբն ասաց. — «Ոչ, բայց մեր խօսքերը հաստատուն է» Ծերունին ասաց, «աղջիկ-արմատին քառասուն մարդ աչք կունենայ, բայց մէկին բաժին կը լինի. լաւ է դու յետ դառնաս և աղջկայ հետ պայմանաժամ դնես. եթէ պայմանաժամին չվերադարձար, և մէկը ուզելու եղաւ, աղջիկը նորան խօսք տայ»: Ղարիբը տեսնելով որ ծերունու

խօսքը իրաւացի է, դարձաւ դէպի Սանամը, նորան խօսք տալու: Հասաւ դրան մօտ, կամեցաւ ներս մտնել՝ դռնապանները չթողին: Ղարիբն ասաց, — «Ես Աշրդ-Ղարիբն եմ, Շահ-Սանամի մօտ պիտի գնամ. ուխտեցի որ օտար երկիր գնամ, ով գիտէ գնալ՝ չգալ կը լինի, և գնալ իւր ուզածը չգտնել կ'լինի, եկել եմ վերջին մնաս բարեւ ասելու»: Դռնապանները թոյլ տուին ներս գնալու: Ղարիբը պարտէղի դռնից ներս մտաւ պատահեց Արեգնազանին, որ արծաթեայ սանտալները հագած ձեմում էր պարտիզում: Իսկոյն Ղարիբը սազը ձեռն առնելով սկսեց երգել այսպէս:—

Քեզ որ տեսայ խելքս եղաւ ցիր ու ցան.

Հայուեցաւ իւզն իմ սրտում, Արեգնազ.

Թէ փափագիս շուտով հասայ աննման,

Քեզ հետ կանենք շատ կեր ու խում Արեգնազ:

Սիրոյ ձեռքից եղել եմ թափառական,

Ինձ թշուարիս Տէրը լինի օգնական.

Գիշեր ցերեկ կանչելով «Սիս, սիրականս»,

Երեսս չ'մնաց խնդում, Արեգնազ:

Երբէք հանգիստ չունի սիրահար մարդը,

Ինչպէս որ շարժում է ծառի սաղարդը,

Չէ երգում սովակը, չէ բացուել վարդը

Այսօր ձեր այգին է տրտում, Արեգնազ:

Ես Ղարիբն եմ, ցաւեր ունիմ անհումար,

Ափսոս փրկուելու չգտայ հնար,

Իմ սիրոյ բարես Շահ-Սանամին տար,

Ես այստեղ կսպասեմ այգումը. Արեգնազ:

Այս երգից յետոյ խնդրեց Արեգնազանին, որ գնայ Սանամին կանչէ իւր մօտ, ասելով. որ զայ պայման կապենք որ ես ոչեւք է հեռանամ: Արեգնազն ասաց. — «անհոգ եղիր և քո ուրախութեանդ նայիր. մենք արդէն քեզ առաջար-

կուած Հարսանեաց ծախսը պատրաստել ենք: Ղարիբն ա-
սաց.— «Այդ ես չեմ ընդունիլ, միայն դու գնա Սանամին
կանչիր, որ ես նրան բաներ ունիմ ասելու»: Արեգնազանը
գնաց, իսկ Ղարիբը քաշուեցաւ մի նոճի ծառի տակ նստեց,
յետոյ մտածմանց մէջ ընկղմուելով քունը տարաւ և քնեց:

Արեգնազանը մտաւ Սանամի մօտ և բարեւ բռնաց
կանգնեց: Սանամը նոր էր զարթնել քնից. նստիչոյն աօսաց
նորան.— «Ես նոր իջայ պարտեզ, տեսայ վարդերը բացուած,
սոխակները ան ու Հառաչանքով և վառուած կերսով եր-
գում են»:— «Ինչո՞ւ ինձ շուտով տեղեկութիւն չտուիր,
ասաց Սանամը, գոնէ մի քիչ յետոյ գնանք»: Արեգնազանը
ասաց.— «մի քիչ յետոյ վարդերը կ'թառամին, սոխակները
կգազարին երգելուց»: Սանամը շտապեց, վերան մի բարակ
ծածկոց առնելով Արեգնազանի հետ ձեռք ձեռքի տուած
սիգաճեմ քալելով իջան պարտեզ: Փոքր ինչ շրջելուց
յետոյ, մի տեղ կանգ առան. Արեգնազանը տեսաւ, որ
Ղարիբը մի նոճիի տակ խոր քնի մէջ է ընկղմուել,
ասաց Սանամին.— «Ի՞նչ տիրուհի, հիմայ մի սաղ լինէր,
Ղարիբի երգերից մի քանիսը երգէինք, ինչ լաւ կ'լինէր»: Սանամը
հրամայեց իսկոյն իւր սատաֆով փոքրիկ սաղը
բերին Արեգնազանին. Արեգնազը Ղարիբին քնից զարթե-
ցնելու համար երգեց.—

Պալատից դուրս եկաւ մի կոյս,
Զարթիր, որսորդ, որսդ եկաւ,
Ողջ աշխարհին տարածեց լոյս,
Զարթիր, որսորդ, որսդ եկաւ:

Սև մագեր երեսին թափած,
Կարծես երկինք է ամպամած,
Քստղը երկնից դաշտ է իջած,
Զարթիր, որսորդ, որսդ եկաւ:

Ձեռն ու ոտը հինայ դրած,
Ծոցումն ունի նոճեր պահած,
Այտեր պիսակով զարդարուած,
Զարթիր, որսորդ, որսդ եկաւ:

Սանդուղները քարից ընտիր,
Պատրաստել է քաջ որմնագիր,
Հագին ունի կանաչ-կարմիր,
Զարթիր, որսորդ, որսդ եկաւ:

Պալատի մէջ ունէր փափագ,
Լսել մի քիչ երգ ու նուագ.
Գեղ է գալիս արագ արագ,
Զարթիր, որսորդ, որսդ եկաւ:

Մօտը նստաւ շատրուանի,
Առնողին հազար երանի.
Տեսնողի խելքը կ'տանի,
Զարթիր, որսորդ, որսդ եկաւ:

Բաղեցի պարտիզի խոտը,
Որ զնէ սիրուհիս ոտը.
Միթէ չառա՞ր նրա հոտը,
Զարթիր, որսորդ, որսդ եկաւ:

Արեգնազանի այս խոսքերի մէջ մի խորհուրդ լինելը
հասկանալով Սանամը, ասաց.— «Օրիորդ, չիլինի այս պար-
տէզի մէջ դու մէկին պահած լինիս. ըստ որում քո այդ
խօսքերից այդպէս է նշմարուում, եթէ ոչ այդ խօսքերը
ինչո՞ւ ասացիր, ինչ է բաղձանքդ, ասա ինձ»: Արեգնա-
զանը ասաց.— «Տիրուհի, այս առտուօտ իջայ պարտեզ և
քո սիրելի Աշըղ-Ղարիբին տեսայ, և խնդրեց ձեզ տեսնել,
ես էլ եկայ ձեզ ասելու, բայց մինչև մեր գալը Աշըղ-Ղա-
րիբը նոճիի ստուերի տակ քնել է: Այս երգը ասացի՝ նը-
րան քնից զարթեցնելու համար:

Երբ այս իմացաւ Սանամը, ուղարկեց իւր մօտ գրա-
նուոյ բոլոր սպասուհիներին տուն: Արեգնազանը տեսաւ

որ Ղարիբը չ'զարթնեց քնից՝ նորից սկսեց երգել այսպէս.—

Գլուխդ վերցրո՛ւր, սիրահար,
Ձարթի՛ր, ո՞վ սիրելի Ղարիբ.
Ցաւովդ դարձայ խելագար,
Ձարթի՛ր, ո՞վ սիրելի Ղարիբ:

Ոսկի ապրանջան թեւում,
Ընտիր քամար կապած մէջքում.
Շահ-Սանամի աչքն է ճամբում,
Ձարթի՛ր, ո՞վ սիրելի Ղարիբ:

Իմ սիրունիս գեղածիծաղ,
Քեզ է սպասում անյապաղ.
Արեգնազը գլխիդ մատաղ,
Ձարթի՛ր, ո՞վ սիրելի Ղարիբ:

Այս երգով ևս չ'զարթեցաւ Ղարիբը, Շահ-Սանամի համբերութիւնը հասնելով ինքն առաւ սազը և սկսեց երգել այսպէս.—

Աչացս լոյս, Արեգնագան,
Կեանքս չի զարթի՛ր, չի զարթի՛ր,
Մէջն ընկայ մտատանջութեան,
Հոգիս չի զարթի՛ր, չի զարթի՛ր:

Խմեցի գինով լի բաժակ,
Երազիս մէջ, ո՞վ իմ հոգեակ.
Նոճի ծառի ստուերի տակ,
Կեանքս չի զարթի՛ր, չի զարթի՛ր:

Աստ է քո Արեգնագանդ,
Գաղանի գիտէ ամեն բանդ,
Վեր կ'աց, տես, քո սիրեկանդ,
Հոգիս չի զարթի՛ր, չի զարթի՛ր:

Ղարիբը դարձեալ չսթափուեց: Արեգնագանը մօտեցաւ և ձայն տուեց, որը խսկոյն զարթնեց և աչքերը բա-

նալով՝ խսկոյն հարցրեց իւր սիրեկանին թէ ո՛ւր է, Արեգ-նագանը ասաց.— «մինչև այժմ պարտէզում սպասում էր, տեսաւ չ'զարթնեցիր՝ թողեց գնաց»: Ղարիբը ցաւոց ծովի մէջ ընկած՝ առաւ սազը և երգեց այսպէս.—

Ի՜նչ զարմանք է, և ես ապշութեան մէջ ընկած,
Սիրունիս ինձ մօտ գայ՝ և ես չիմանամ,
Ես ամեն կերպ հոգսերի մէջ ընկղմած,
Սիրունիս ինձ մօտ գայ՝ և ես չիմանամ:

Նորա համար էր իմ այստեղ մնալս,
Ջոկ խորհուրդ է օտարութիւն գնալս,
Ապա ի՜նչ էր իզուր իմ այստեղ գալս,
Սիրունիս ինձ մօտ գայ՝ և ես չիմանամ:

Ո՞վ դու սէր, անգուլթ սէր, ու անմեռ կրակ,
Անում ես դեռահաս շատին նահատակ,
Մէկ էլ ե՛րբ կլինի այսպէս ժամանակ,
Սիրունիս ինձ մօտ գայ՝ և ես չիմանամ:

Ղարիբն եմ, գտնէի վերքերուս մի ճար,
Կազմելով սիրունուս հեաը զաղափար.
Խորհուրդս ու պայմանս հանէի կատար,
Սիրունիս ինձ մօտ գայ՝ և ես չիմանամ:

Այս երգը աւարտելուց յետոյ լաց եղաւ Մին էլ Շահ-Սանամը չհամբերելով, պահուած տեղից դուրս եկաւ: Ղարիբը որ տեսաւ գալիս է Շահ-Սանամը՝ վազելով դիմաւորեց: Սանամը ևս սկսեց արագաքայլ մօտենալ. մօտեցան իրարու, փաթաթուեցան միմեանց պարանոցով և ըսկսեցին երկար համբուրելով միմեանց, սիրել և սիրուել, և քողքը պռօշներով ծիրաններ քաղել մէկը միւսի այտերից: Յետոյ Սանամը հրաւիրեց Ղարիբին տան վերի պատշգամբ, նստեց այնտեղ, մի փոքր նախաճաշելուց յետոյ, ասաց Սանամը.— «Ո՞վ թանկագին սիրելիս. լսեցի որ օտա-

բութիւնն ես գնալու և ինչու համար է գնալդ ինձ յայտնի է: Իսկոյն սնդուկը բաց արեց, ոսկին ցորենի նման դի-
զեց Ղարիբի տառջ. Ղարիբը դարձեալ չհամաձայնեց ըն-
դունել, ասելով որ—«մի օր կ'ըարկանաս ինձ վերայ և
ինձ կ'ասես թէ, քանի քսակ ոսկի ես ծախս եմ արել քո
մասին՝ և այդ ինձ համար մեծ ցաւ կ'ըլլինի. ես պէտք է
աշխատեմ այս փողերը»: Դահ-Սանամն ասաց.—«Իմ ազ-
նիւ տէր և իմ հոգոյս հատոր Ղարիբ, ես կ'ուխտեմ այդ-
պիսի խօսքեր բերան չ'բերել. խղճա ինձի և այդ մասին
մի տխրեցնի, այլ վեր առնելով ոսկիները՝ ինձ ուրախա-
ցու»: Ղարիբը չըհամաձայնեց, դարձաւ դէպի Դահ-Սա-
նամն ասաց.—«արի քեզ հետ ուխտ ու պայման կ'ապենք.
որովհետեւ ես մինչև հալէպ պիտի գնամ, գնալ՝ չգալ կ'ըլլի-
նի, և յետ դալ՝ սիրելին չգտնել կ'ըլլինի»: Առաւ սազը և
երգեց այս այսպէս,—

Եկ, իմ քաղցր Սանամ, սրտով վշտացած,
Գնամ օտար երկիր, իցէ թէ չ'գամ.
Իսկզբանէ այսպէս կ'ամեցաւ Ստողած,
Գնամ իմ սիրուհիս, իցէ թէ չ'գամ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Միթէ քեզ մօտ գութ ու խղճմտանք չ'կայ,
Գնա՛, Ղարիբ, ողջութիւնով յետ արի.
Լեզուս կ'ասէ, բայց սիրտս արիւն կ'ուլայ,
Գնա՛, Ղարիբ ողջութիւնով յետ արի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Գոնէ մէկ յետ դարձիր, սիրուն հրեշտակ,
Երեսիդ մտիկ տամ ազատ, համարձակ.
Առ, մի աւանդ ունիմ, տամ քեզ յիշատակ,
Գնամ օտար երկիր, գուցէ յետ չգամ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Ով իմ ազնիւ Ղարիբ, իմ հոգւոյս հատոր,
Դու իմ կենաց բժիշկ, դու իմ թագաւոր.
Արժան չէ ինձ թողնես այսպէս խեղճ մուր,
Գնա՛ Ղարիբ, ողջութիւնով յետ արի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ճակատիս այսպէս էր գրուած բնական,
Դեռ քեզի չգրկած՝ ես լինիմ բաժան.
Օտար երկրում քեզանից մի գովական,
Գտնեմ այնտեղ մնամ, գուցէ յետ չգամ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Ղարիբ, այդ խօսքերդ երբէք չի տարուի,
Ուխտը չպահողը՝ մարդ չի համարուի.
Այլ տեղ սիրուններ շատ, քեզ չեն հարմարուի,
Գնա՛ Ղարիբ, ողջութիւնով յետ արի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Մի երկինչիր, Սանամ, իմ սիրեկանս,
Մինչև 'ի մահ դու ես յուսոյ նշանս.
Ճիշտ եօթը տարի է ուխտ ու պայմանս:
Գնամ օտար երկիր, գուցէ յետ չգամ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Մի գնալ, ով Ղարիբ, ինձ մեծ զրկանք է,
Քո այդպէս անելդ՝ ինչ խղճմտանք է.
Եօթը տարին բաւականին մեծ կեանք է,
Գնա՛, Ղարիբ, ողջութիւնով յետ արի,

Ղ Ա Ր Ի Բ Ը

Դու իմ քաղցր սոխակ, սիրուն աղաւնիկ,
Սէր իմ, աշայս լոյս, դու իմ արեւիկ:

Փշի հետ չփոխես վարդը անուշիկ,
Գնամ օտար երկիր, գուցէ էլ չգամ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Գնա Ղարիբ, ճամբիցդ յետ մի մնայ,
Ակամայից յօժաբացայ ես հիմայ,
Մազերէս հիւսերից տամ մէկը ընծայ,
Գնա, Ղարիբ, ողջութիւնով յետ Երի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Լեր մտերիմ, մի ճարել նոր բարեկամ,
Մեր սուրբ սէրը թող մնայ միշտ անթառամ,
Ճանապարհ սպասէ մինչ եօթն ամ,
Գնամ օտար երկիր, գուցէ էլ չգամ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Մի թուշիւր, իմ տատրակ, մի տար պատուհաս,
Ծաղիկ եմ, ափսոսա, ծաղիկ դեռահաս.
Սանամի խօսքերը քեզի չեն ֆլաս,
Գնա, Ղարիբ ողջութիւնով յետ արի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ղարիբն եմ տխրալի, միտքս տկար է,
Արևս ամպի տակ, օրս խաւար է,
Այս մեր բաժանումը սաստիկ երկար է,
Գնամ օտար երկիր, գուցէ էլ չգամ:

Այս երգը աւարտելուց յետոյ դարձեալ Սանամը շատ
թախանձեց և խնդրեց չգնալ, բայց ոչինչ ազդեցութիւն
չարեց Ղարիբի վերայ: Ղարիբն ասաց. — «Ես իմ ուխտ ու
պայմանն չեմ քանդիլ. մահ կայ, պայմանից յետ դառնալ
չկայ, Սանամը զգալով որ վճռական խօսքեր են սոքա,
ինքն իրեն մտածեց թէ մի գուցէ այս երիտասարդը գնայ

Յունաստան և այնտեղ ինձանից աւելի զեղեցիկը գտնի և
ինձ մոռանայ. այն ժամանակ ինչ կրկինի իմ դրութիւնս:
Եւ այս կերպ մտածութեամբ ընկնելով ցաւոց ծովի մէջ՝
առաւ սազը և այդ խորհրդով սկսեց երգել —

Ս Ա Ն Ա Մ Ը

Գերիդ դառնամ, իմ կեանից Ղարիբ ջան,
Հոգիս Ղարիբ, դու չգնաս Յունաստան,
Ուր որ գնաս ինձ մի տնիլ մտահան,
Սէր իմ Ղարիբ, դու չգնաս Յունաստան:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Թէ որ Աստուած ինձի կեանք կրտայ երկար,
Մի լար, իմ նազելի, կրկին, յետ կըգամ,
Թէ մահի բաժակը ինձի խմել չի տար,
Մի լար, իմ նազելի, կրկին յետ կըգամ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Աստուած հասուցանէ մեզի նոյն ժամուն,
Ո՛հ, չ'պատեն շուրջս հոգսերը անհուն,
Քեզ համար կըդոհեմ ապրանք, տեղ ու տուն,
Հոգիս Ղարիբ դու չգնաս Յունաստան:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Մի վախենալ, Սանամ, կերթամ յետ կըգամ,
Գալով իմ գուցունի, սիրտս քեզ կըտամ,
Հաւատացրի, որ ես Հալէպ կըգնամ,
Մի լար, իմ նազելի, կրկին յետ կըգամ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Գնալով այլ երկիր՝ մի գործեր սխալ,
Մեր խորհուրդը օտարին մի իմաց ապլ,

Թշնամին մեզ ծաղր անելու մի ցանկալ,
Կեանքս Ղարիբ դու չգնան Յունաստան:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ուր որ գնամ՝ քեզ կը լիշեմ զօր գիշեր
Կըմահանամ՝ չեմ ունենալ ջոկ ընկեր.
Ես որ գնամ, ինչ կըլինի վերջը մեր.
Մի լար իմ նազելի կրկին լետ կըգամ:

Այս երգը ասելով Շահ-Սանամը սկսեց լաց լինել: Նոյն-
պէս Ղարիբի աչքերից հեղեղի նման արիւն արտասուէր
թափում էր: Կարողութիւնից ընկնելով՝ առաւ Սանամը
սազը ձեռը և երգեց այսպէս.

Գնալով կեանկից, դու օտար երկիր,
Անձկութիւնով ինձի մահ մի տար իզուր.
Քանի որ գնում ես շուտով լետ դարձիր,
Զթումի վարդդ, սիրահար, իզուր:

Քեզանից զատուելով՝ դառն է իմ վիճակ,
Հոգիս տրտում, տխուր՝ սիրտս է աւերակ,
Զեմ կարող ցաւ տանել, խղճա իմ հոգեակ,
Մի մաշեր անբախտիս անդադար, իզուր:

Բացի քեզ, աշխարհը չունիմ ես բաժին,
Դու իմ թագ ու պսակ, իմ այր թանգակին,
Խղճա մօրդ, քրոջդ և Սանամին,
Մի անիլ հոգերուն հաւասար իզուր:

Այս երգը աւարտելուց լետոյ՝ բաժանման ժամը հա-
ստաւ, բայց ինչ տխուր ժամ: Ինչպէս հոգին մարմնից բա-
ժանուում է, այնպէս Ղարիբը բաժանուում էր Սանամից:
Շատ լալուց և սգալուց լետոյ՝ Ղարիբը հանեց իւր ծոցից
երազի մէջ ստացած այն ոսկեայ թասը՝ տուեց Սանամին
ի նշան հաստատութեան պայմաններին: Իսկ Սանամը իւր

գեղեցիկ շապիկներէց մինը տալով, երկու աչքերից համ-
բուրեց և ասաց — «այս շապիկը քանի որ հագնիս, այն-
պէս կարծիր որ ես քեզ մօտ եմ»: Ուխտ արին և հեռա-
ցան:

Ղարիբը այդտեղից ուղղակի գնաց իրենց տուն:
Մայրը ճաշ էր պատրաստել, բայց Ղարիբը չկարողացաւ
ուտել, որովհետեւ տխուր էր, ինչ ուտում էր՝ բկին էր
կանգնում: Մայրը հարցրեց. — «Որդիս, ինչո՞ւ չես ուտում,
ինչո՞ւ այդպէս տխուր ես»: Ղարիբը փոխանակ մօրը պա-
տասխանելու՝ առաւ սազը և երգեց այսպէս—

Եկ տուր օրհնութիւնդ, մայր իմ հանազատ,
Գնամ օտար երկիր՝ ման դամ մէկ միջոց.
Յետ կենալ չի լինիլ, վճռել եմ հաստատ,
Գնամ օտար երկիր ման դամ մէկ միջոց:

Մ Ա Յ Ր Ը

Սիրտս ցաւով լցրիր, սիրելի որդի,
Հեռու տեղ գնալով մի լացներ մեզ,
Առանց քեզ կեանք չունիմ, խելքս կըթռչի,
Հեռու տեղ գնալով մի լացներ մեզ:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Թէև չունինք մենք տէր, չունինք բարեկամ
Բայց Աստուած կը օգնէ խեղճին յարաժամ,
Կանչէ քոյրս տեսնեմ ես վերջին անգամ,
Գնամ օտար երկիր ման դամ մէկ միջոց:

Մ Ա Յ Ր Ը

Աստուածանից զանի մեզ անողը,
Մօրից և քրոջից քեզ բաժանողը,
Ո՞վ է քեզի օտար երկիր տանողը,
Հեռու տեղ գնալով մի լացներ մեզ:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Արի միակ քոյր իմ, արի, ոհ մի լար,
 Լեր ծերունի մօրդ ինքդ միտթար.
 Աղօթէ միշտ պանդուխտ եղբորդ համար,
 Գնամ օտար երկիր՝ ման գամ մէկ միջոց:

Քոյրը վրայ հասնելով տեսաւ որ եղբայրը գնալու է
 օտարութիւն է օստիկ յուզուելով, արտասուելի աչքերով
 իւր գեղեցիկ դիտակներից մէկը սազի տեղ դրեց շամամ
 ծծերի վրայ և սկսեց հետևեալ տխուր երգն ասել. —

Գլուխս ոտքերիդ տակ զոհ անեմ.
 Մի գնալ հեռու տեղ, մի լացներ մեզ.
 Առանց եղբայր, աշխարհը ես ինչ անեմ,
 Մի գնալ հեռու տեղ: մի լացներ մեզ:

Ոհ, մեր ցնծութիւնը դարձաւ սուգ ու լաց,
 Անցան մեր օրերը, անցան սրբնթաց,
 Դու որ գնաս, ով կրբերէ մեղի հաց.
 Մի գնալ հեռու տեղ, մի լացներ մեզ:

Խնդրեմ անողներու կեանքը սպառուի,
 ձարալիկ Արեգնազը կրակում վառուի.
 Այն Խօջայ-Սահակի սիրտը պատառուի,
 Մի գնալ հեռու տեղ, մի լացներ մեզ:

Ղարիբը քրոջ արած անէծքներին Սանամի և Արեգնա-
 զանի համար, չգիմանալով՝ այս խօսքերն ասաց. —

Իմ նազելի քոյրս, անէծք մի կարգայ,
 Թող Խօջայ-Սահակը միշտ հաստատ մնայ,
 Քո Ղարիբ եղբորդ զուր կսկիծ մի տայ.
 Գնամ օտարութիւն ման գամ մէկ միջոց:

(Ղարիբը մէկ տարի էր, որ Թիֆլիսումն էր և այդ
 միջոցին իւր աշխատանքով մի կրպակ էր գնել. թէ այդ
 կրպակի վարձով և թէ մօր և քրոջ ձեռնագործների ար-
 դիւնքով, կարող էին նոքա ապրել: Բացի այդ, նա գնել էր
 մի փոքրիկ տուն, Սուրբ Սարգիս եկեղեցւոյ թաղում և
 այդ ժամանակ բնակւում էր իւր սեպհական տան մէջ):
 Ղարիբը սազը պատից կախելով՝ ասաց մօրը. — «Եթէ այս
 իմ սազը պատից վայր ընկաւ և մի թելը կտրուեց, իմա-
 ցէք որ ես մեռած եմ»: Մօրը ձեռքը համբուրեց և քրոջ
 հետ նոյնպէս վերջին հրաժեշտի ողջոյնը տալով, դուրս
 եկաւ տանից և գնաց սրճարան: Ճանապարհին պատահեց
 իւր հաւատարիմ ընկեր Սիսակին. նորան յայտնեց իւր
 ճանապարհորդութեան դիտաւորութիւնը և յետոյ խնդրե-
 լով նորան ասաց. «Եթէ ցտարութեան մէջ մի բան պա-
 տահի ինձ և այդ աղջիկը ուրիշին առնի, պատուիրում եմ
 քեզ, որ դու նորա հարսանիքը չգնաս»: Սիսակն ասաց. —
 «Աստուած ոչ անէ քեզ փորձանք պատահի, եթէ ոչ, ես
 ուխտ եմ անում քառասուն օր սուգ պահել»: Մտան սր-
 ճարան: Հաւաքուեցան Գիթ-Մանուկը և միւս ընկերները
 և ասացին Ղարիբին. — «Տեսնում ենք որ անպատճառ ուխ-
 տել ես գնալ, գոնէ վերջին անգամ մի երգ էլ ասա մեզ,
 քաղցր ձայնդ լսենք, այնուհետև Աստուած քեզ հետ լինի»: Ղարիբը երգեց.

Մօտեցաւ բաժանման տխուր վայրկեանը
 Թողէք ես լամ, արտասուքս ծով լինի,
 Դժուար է քրոջս և մօրս բանը,
 Ես որ գնամ նրանց պաշտպան ով լինի.

Ձեզ եմ յանձնում իմ տուն ու տեղ, օթեան,
 Խղճուկ գերդաստանիս դուք եղէք պաշտպան,
 Այցելեցէք շուտ շուտ, յոյս տուէք նորան,
 Գոնէ մօրս սիրտը անխռով լինի:

Ուզեցի ձեր մօտը վերքերս բանալ,
Ղարիբն եմ, չեմ կարող անլաց հեռանալ,
Ստերիմ ընկերներ, ինձ միք մոռանալ,
Որ իմ սիրտս հանգիստ ապահով լինի:

Երբոր այս երգը աւարտեց, ընկերները դարձեալ բերին Ղարիբին մինչև Կոջորի գլուխը ճանապարհ գցեցին. համբուրելով և լաց լինելով՝ միմեանցից բաժանուեցան: Գիժ-Մանուկը իւր ընկերներով դարձաւ Թիթֆիս, իսկ Ղարիբը իւր ձիու վերայ նստած խառնուելով ճանապարհորդների հետ, շարունակեց իւր ճանապարհը դէպի Ծալկա: Քանի Թիթֆիսի մօտերքն էին, երկինքը պարզ էր և օդը զուարճալի. երբ բաւական հերացան՝ երկինքը սկսեց մըթնել, ամպերը կայծակնախալն գոռգոռալով սար ու ձոր սարսեցրին և սկսեց անձիւ տեղալ: Այս կողմը այն կողմը ընկնելով, ճանապարհից շեղուելով և սաստիկ թրջուելով, ցեխերի մէջ թաթախուած անտանելի չարչարանքից յետոյ, հազիւ երեկոյեան ժամը ութին հասան Ծալկայ գաւառը: Այդ գաւառի Բէշթաշ անունով գիւղում մի օթեան ճարելով իջևանեցին այդտեղ: Այդ գիւղի տանուէրը մի բարի, հիւրասէր, քրիստոնեայ մարդ էր, որի տանը իջան մեր ճանապարհորդները: Ամենից առաջ ձիերին ներս քաշելով՝ զարի, զարման տուին, յետոյ սենեակում կրակ վառելով՝ հիւրերի թրջուած շորերը չորացրին, իրենց էլ տաքացրին: Սկսուեց հացի պատրաստութիւնը. շաքարեղան պատ էր. սեղանի վերայ շարուեցաւ բակլա, ոսպ, ապուր և մի քանի տեսակ բանջարեղէներ: Դադրած հիւրերը կուշտ հաց կերան, բայց չըգիտէին որ այդտեղի հացը կուշ ուտելուց յետոյ՝ որ ջոր խմեն, կարբենան: Ղարիբի ընկերները չորս հոգի Շիրակեցի վաճառականներ էին, որ Թիթֆիսից վեռադառնում էին Շիրակ: Դորանցից մէկը ջուր ուզեց և լաւ ախորժակով խմեց: Մի քանի րոպէից յետոյ՝

կատարեալ արբեց, համարեա խելագարուեց. մի տեսակ թմրութիւն գալով վերան՝ քնեց:

Այդ օրուայ անցքերի ազդեցութեան տակ Աշըղ-Ղարիբը ճանապարհի փաքրիկ սաղը ձեռքն առնելով սկսեց երգել—

Հորիզոնդ ամպոտ, սարերդ մշուշ,
Կարծես երկնքումդ չիք արև, Ծալկա.
Արտերդ ցորնի տեղ, բուսցնում են փուշ:
Այնքան որ գալիս է շատ անձրև, Ծալկա:

Գովելու է միայն լուի ծաղիկդ,
Նա մանաւանդ բակլայ, ոսպդ ու վիկդ,
Մարդ կարբեցնէ հացահատիկդ,
Կըդարձնէ ապուշ՝ կամ թէ խև, Ծալկա:

Խղճուկ ձիապանի սառչում է եռը,
Շատ բքարք մնալով, կորչում է բեռը.
Ղարախաչ անունով սարըդ ձմեռը,
Թողնում է շատերին, առանց թև, Ծալկա:

Տարածամ անձրևդ գիտէ միշտ տեղալ,
Ձի կարող երկրագործ մարդը անել կալ,
Մէկ գալողը՝ կրկին էլ չի ուզում գալ,
Ճանապարհդ ցեխոտ, հողդ սև, Ծալկա:

Սարերդ ձիւնապատ, մարդ չի գիմանայ,
Դաշտդ մըրրկից աչքը չի բանայ.
Ով չէ տեսել, թող կարդայ ու իմանայ,
Այս երգը Ղարիբից քեզ պարգև, Ծալկա:

Այս երգը աւարտեց. այդ գիշերը հանգստացան այդ տեղ:

Միւս առաւօտը ծէղը նսր էր բացուել, երբ մեր ճանապարհորդները ընկան ճանապարհ դէպի Շիրակ: Անցան

այդ ձիւնապատ սարերը, երկու օր ճանապարհորդելուց
յետոյ, հասան Շիրակայ հիւանալի դաշտը, որտեղ հազար
տեսակ ծաղիկներն անուշ հոտերը խառնուելով օդի հետ՝
զմայլեցնում էին մարդու: Դեղձանիկը, արտուտը, սիրուն
ծիծերնակը, երամ-երամ սարեակները իրանց երգերով
գրաւում էին մարդկանց սրտերը: Աշնան մօտ էր. Շա-
բայի որդիքը—իրանց արգաւանդ արտերից ցորենի
դէզերը կրում էին տուն, ձմրան պաշար պատրաստելու
համար: Քաղցրահամ Արփաշայը, սրդողած մարդու նման
առանձնանալով, ընկած մի ձորակի մէջ, շարունակում
էր իւր դժգոհ ճանապարհորդութիւնը, այդ իւր ահազին
ջրով միայն մի քանի ջրաղացների բաւականութիւն տա-
լով: Երկինքը պարզ, օդը մաքուր, աղբիւրների ալիւնների
անմահական ջրերին չափ ու համար չ'կաւ: Միայն մի
բան էար աչքի ընկնող. ժողովրդի սակաւութիւնը, որ
այդ ահազին դաշտի մէջ հազիւ հազ երեւում է տամու-
հինգ զիւլ: Մեր ճանապարհորդները շարունակում էին
իրանց ճանապարհը այդ դաշտի միջով: Յանկարծ Աշղ-
Ղարիբը տեսաւ երկնքի վերայ մի խումբ կռուներ, որոնք
երամ երամ քաղցրաձայն կռկռալով թռչում էին
դէպի տաք երկիրներ: Ղարիբի սիրտը չ'դիմանալով առաւ
սազը և երգեց.—

Երանի ձեզ, որ գնում էք հայրենիք,
Կազմել էք ի՞նչ սիրուն երամ, կռուներ,
Թիֆլիսի վերայով անցէք, սիրելիք,
Իջէք այնտեղ, գէթ մի անգամ, կռուներ:

Ո՛հ, անմեղ թռչուններ, անցաւ, անկրակ,
Երգում էք միասին ուրախ, ներգաշնակ,
Սպասեցէք մի քիչ՝ գրեմ մի նամակ,
Տարէք Շահ-Սանամին, ձեզ տամ, կռուներ:

Ես անբախտ Ղարիբն եմ, յուզուած և տխուր:
Կրում եմ սրտիս մէջ անհանգչելի հուր,
Ինձանից քրոջս, մօրս տարէք լուր.
Անդ հիւր եղէք, գոնէ մի ժամ, կռուներ:

Այդ երկոյ հասան Ղօշվանք գիւղը. ընկերները այդ
գիւղացի էին, գիշերը հանգստացան, առաւօտեան Ղարիբը
պատրաստուեցաւ գնալու. ընկերները շատ խնդրեցին, որ
մենակ չ'գնայ, սպասէ մինչև ընկեր գտնուի, բայց Ղա-
րիբը չ'սպասեց: Նոքա տեսան որ հնար չի լինի՝ գիւղից
դուրս հանեցին, և ճանապարհը ցոյց տալով ուղարկեցին:
Ղարիբը գնաց դէպի Կողբ*): Երբ Կողբին մօտեցաւ գե-
տի ափում գտնուող մարդիկ տեսան, որ աշուղը է եկողը.
հաւաքուեցան գլխին և առաջին.— «մինչև մեզ համար մի
երգ չապես, քեզ Արաքսից չենք անցկացնի, Ղարիբը սկսեց
երգել—

Եկայ անցնելու քեզանից,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:
Հեռացել եմ տեղից՝ տանից,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Այս աշխարհն է հին Հայաստան.
Նախնեաց մերոց էր որորան.
Ինձի երեք սպասող կան,
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

Ոռոգում ես դու երկիրը,
Գետերու միջում ընտիրը,
Հա՛՛ Ղարիբիս խնդիրը.
Արաքս, ինձ մի ճանապարհ տուր:

*) Այս այն Կողբն է, որ իւր աղի հանքերով նշանաւոր է:
Ժամ. աշխ.

Այդ մարդիկը լաստի վրայ նստեցնելով Ղարիբին, գետից անցկացրին: Ղարիբը գիշերեց Կողբում: Առաւօտը հարցրին Ղարիբին՝ թէ—«ուր է ուզում գնալ»։ Նա էլ ասաց.—«Երզուրում»։ Ճանապարհը ցոյց տւին Բասենի վերայով: Ընկաւ ճանապարհ. մի քանի օրից յետոյ հասաւ Խնուս ավանը. գնաց մի սրճարան, ձին տնդաւորելուց յետոյ մի սուրճ խմեց, հանգիստացաւ: Հաւաքուեցան ժողովուրդը, հարցրին որտեղացի լինելը, իսկ Ղարիբը պատասխանեց.—«Թիֆլիսեցի եմ»։ Ասացին Ղարիբին.—«տեսնում ես որքան գեղեցիկ է մեր երկիրը. խնդրում ենք եթէ կարելի է, սորա վրայ մի բան ասես»։ Որովհետեւ Ղարիբը, թէ պատմութեամբ և թէ սեփականութեամբ լսել էլ, մանաւանդ այժմ իւր աչքով տեսաւ. «ուղիղ որ, ասաց, գովելու արժանի երկիր է, թէ դիրքը, թէ կլիման, թէ ջրերը, հաստատում են դրախտի այս երկիրում լինելը»։ Մանաւանդ որ Ղարիբի պապերն էլ այս երկրիցն էին գաղթել Պարսկաստան: Ղարիբը իւր բուն Հայրենիքի մէջ լինելով, սկսեց երգել այսպէս—

Երբ որ լինի գարնանամուտ, նոր գարուն,
Կրբագմանա՛ւ, վտակներդ, Հայրենիք.
Շարիշար ցնծութեամբ, երգով գուարթուն,
Շարժւում են բանակներդ Հայրենիք:

Օղդ սիրուն, ջուրդ սիրուն, դու սիրուն,
Պէս պէս գոյնով ծաղիկներդ դալարուն
Ձեն դադարիր աշխատելուց օրն ի բուն,
Քո հարազատ մշտկներդ, Հայրենիք:

Մարդիկ կուգան քո սարերդ ման գալու,
Իբր որ որդ եղնիկներդ սրսալու,
Ե՛րբ կըփոխեն երգը ուրախ կարգալու,
Քո սգազգեաց սոխակներդ, Հայրենիք:

Դու դրախտն ես, քեզի Սուրբ գիրքը վկայ,
Քո միջիցդ անմահութեան հոտ կուգայ.
Հազար ափսոս, մարդուց թափուր են հիմա՛
Քաջ բազմազարդ վիճակներդ, Հայրենիք:

Այդ տեղի ժողովուրդը շատ շնորհակալ լինելով և բաւական ընծայ տալով, միւս առաւօտ ճանապարհ դրին գէպի երգրում: Ղարիբը հասաւ Երզրում, տեսաւ մի ահագին քաղաք, որի նմանը Թիֆլիսից յետոյ՝ չէր տեսել: Երեկոյեան ժամը ութն էր. մզկիթներից մօլլաները բարձրաձայն երգերով ջերմեռանդ իսլամներին հրաւիրում էին մզկիթ, երեկոյեան աղօթքը կատարելու: Քրիստոնեաներն արդէն քաջուած էին իւրեանց տները: Ղարիբը հարցնելով Նազուկ փողոցը, մի հայ սրճարան իջաւ, այդտեղ սիրով հիւրասիրեցին նորան: Ղարիբն ինքն իւր մէջ մտածելով ասում էր.—«այս բազմամարդ քաղաքում մի ժամանակ մնալով՝ մտադրած փողը կաշխատեմ և շուտով կըվերագանամ Թիֆլիս և իմ փափագիս կըհասնեմ: Ուղիղ որ. մի երկու երեք շաբաթ լաւ աշխատում էր. յանկարծ մի հիւանդութիւն պատահեց նորան. Փափուկ մեծացած Ղարիբը, այժմ օտարութեան մէջ, մօրից ու քրոջից հեռու, հիւանդ պարկած, մանաւանդ որ այդտեղ դեռ այնքան ծանօթներ չէր ճարել, միայնակ տնքում էր, առանց հոգացող ձեռքերի: Միայն Շահ-Սանամի սէրն էր, որ նորան կենդանութեան յոյս էր տալիս: Մի օր այդ դրութեան մէջ զգացուած՝ սաղն առաւ ձեռքը, այս տխրալի երգը երգեց.—

Ստարութեան մէջը թէ հիւանդանայ,
Դրութիւնը շատ դժուար է պանդխտին,
Ոչ ոք մօտը այցելութեան չի գնայ,
Միտքը մոլոր և շուար պանդխտին:

Հազար անէծք պանդխտութեան անուանը,
Վառել է շատ մարդու գէմքը, բերանը.
Երբ որ միաքը կուգայ իւր դերդաստանը,
Իսկապէս մութը կը մարէ պանդխտին:

Պանդուխտ, օտար մարդու դառն է խորակը,
Դեղն է համբերանքը՝ ջուրն է կամակը.
Հետագօտող չ'կայ նորա վիճակը,
Լեզուն համը և տկար է պանդխտին:

Պանդուխտը տխուր է, ուր որ դնի ոտ,
Աչքը արատաւալի, փողպատը աղտոտ,
Մարդու խորհուրդ չի տայ, է ստաւիկ վախկոտ,
Չար դիպումա՞ծը սիրահար է պանդխտին:

Ղարիբ, պանդուխտ մարդը եթէ մահանայ,
Մայր չունի, քոյր չունի, վերան ո՞վ կուլու.
Չունի եղբայր որ քար դնէ իւր վերայ,
Գերեզմանը՝ առանց քար է պանդխտին:

Այս երգը երգելուց յետոյ՝ յուզուած, տխուր, արը-
տում քաշուեցաւ իւր ննջարանը. բայց այդ դիշեր հան-
գիտ քնեց. վերան մի լաւ քրտինք գալով՝ արթնացաւ,
իրեն արողջ տեսաւ: Առաւօտեան լուսաբացին վեր կա-
ցաւ ուրախ-ուրախ հանդերձները հագաւ, լուսացուեցաւ,
ուղղակի գնաց եկեղեցին, ջերմեռանդ սրտով աղօթք ա-
րեց, գոհ լինելով Արարչից վերադարձաւ նոյն սրճարանը:
Ղարիբի էրզուրում գալու երեք ամիսը լրացել էր, որ
երգում նուագում էր. բայց մի մտածե՞ծ որ արդիւնքը
իրեն կարծածի պէս չէ՝ առայ. — «երկար ժամանակ ինձ
այստեղ մնալ ձեռք չի տալ, պատրաստուեմ գնամ իմ
մտադրած տեղը—Հալէպ»:

Սրճապանը տեսնելով, որ Ղարիբը պտարաստուում է՝
ասաց. — «ոիդիս, ես տեսնում եմ որ գնալու ես, գոնէ մի

երգ ասա էրզուրումի վերայ, յետոյ Աստուած հետդ լի-
նի», Ղարիբը առաւ սաղը և սկսեց էրզուրումը գովաբանել—

Փոքր Ասիայի դրախտ ցանկալին,
Դու ապրանաց յայտնի մառան, էրզուրում.
Եւրոպայի տուր և առի բանալին,
Հնդկաստանի շտեմարան էրզուրում:

Մէջը ունիս շատ հնութեան նշաններ,
Հին վանքեր, մատուռներ, հին գերեզմաններ.
Աշխարհի չորս կողմից մեծ կարաւաններ,
Գեղի կուգան շարան շարան էրզուրում:

Օղբ գարեխառն, ջուրդ անուշիկ,
Քաղցրանուագ թռչուններից գեղեցիկ,
Սուրբերից օրհնուած, քաղաք երջանիկ,
Կայ հօր ձեռք քեզի պաշտպան էրզուրում:

Ղարիբն եմ խօսքերս վերջացուցի արդ,
Դու շատ քաղաքների թագուհի և զարդ.
Առևտուրդ բանուկ, քաղաք բազմամարդ,
Ունիս գիւղեր, ունիս աւան, էրզուրում:

Ղարիբը էրզուրումը գովելուց յետոյ, սաղը դցեց
վիզը, նստաւ իւր ձիու վերայ և մի դարնանային գեղեցիկ
առաւօտ դուրս եկաւ այդ քաղաքից, Երուսաղէմ գնացող
ուխտաւորների կարաւանին խառնուելով՝ շարունակեց ճա-
նապարհը դէպի Հալէպ: Շատ գնաց թէ քիչ՝ Աստուած
գիտէ, վերջապէս մի օր հասաւ այդ հոշակաւոր քաղաքը:
Մի ժամանակ այդ քաղաքում շրջելով, իւր ձին այդտեղ
լաւ գնով ծախեց: Մի մարդից հարցրեց Ասլան-Դադայի
սրճարանը, որովհետեւ էրզուրում նրան ասել էին, «գնա
այնտեղ իջիր. թէ ինքը օտարասէր բարի մարդ է, և թէ
այն քաղաքի երգիչները այնտեղ են երգում»: Վերջապէս

Ղարիբին ցոյց տուին, եկաւ գտաւ լիշեալ սրճարանը, ներս մտաւ, բարեւ տուեց և նստեց: Սազը գնելով իւր կողքը, սրճապանից խնդրեց մի գլղակ և մի սուրճ: Երբ որ սուրճը խմեց վերջացրեց, բաժակի մէջ մի ոսկի գցեց՝ Սրճապանը երբ որ տեսաւ ոսկին, ուրախութիւնից ոտքերը գետնից կտրուեց: Մի քանի օր մնալուց լետոյ, երբ ծանոթացաւ Ասլան-Դադայի հետ, նորան ասաց.— «Եկ, միասին ընկերանանք: Սրճարանատէր Ասլանը ասաց, — «Յորդիս, այս սրճարանը ընդամենը իննը այցելող ունի, հինգը երեկոյեան են գալիս, իսկ չորսը առաւօտեան, երկուսիս բաւականութիւն չի տալ»: Ղարիբն ասաց.— «Աստուած ողորմած է, դու միայն խօսք տուր ընկերանալու»: Վերջապէս Ասլան-Դադայն համաձայնուեց և ընկերացաւ Ղարիբի հետ: Ղարիբը սրճապանին փող տուեց և ասաց.— «Գնա, չորս հինգ լիտր սուրճ առ»: Սրճապանը գնաց բերեց: Երբ երեկոյ եղաւ, Ասլանը գնաց իւր տուն. Ղարիբը երկու օգնական վարձեց, և ութը հոգի գործաւորներ բերել տալով, ցեխ, կիր, և այլ հարկաւոր բաները պատրաստել տուեց. գիշերը մոմերը վառելով բոլորը միասին այդ գիշերը մինչև լոյս սպիտակացրին և զարդարեցին այդ սրճարանը: Ստոման, (իբրդ) կաթսայ և բաժակները սրբեցին, առաւօտեան ծխանը վառեցին, սղնձէ կաթսաները կրակի մօտ դրին: Ղարիբը գլղակը պատրաստել տուեց նստաւ հանգստանալու: Ներս մտաւ Ասլան-Դադայն և սրճարանը կերպարանափոխուած տեսնելով զարմացաւ: Ղարիբը խնդրեց Ասլանին իր մօտ և ասաց.— «Հայրիկ մի գործանայ, այդ բոլոր բաները ես եմ արել»: Խօսեցան միասին սուրճ խմելու. քիչ ժամանակից լետ այցելուները եկան: Աշըղ-Ղարիբը սազը ձեռքն առնելով, երգեց այսպէս.—

Սրտիս մէջը գալով եռանդ,
Քեզ դիմեցի, Հալէպ քաղաք.

Այդ ու երամ թողնելով անդ,
Քեզ դիմեցի, Հալէպ քաղաք,

Անշատուեցայ գեղեցիկ,
Աշխարհի մէջ մի հատկից.
Ծամերը յակինթ ծաղիկից,
Քեզ դիմեցի, Հալէպ քաղաք:

Նաղելիս թողի ողբալով,
Սպասում է ինձի լալով,
Բաւականին տեղ ման գալով,
Քեզ դիմեցի, Հալէպ քաղաք:

Յոյց տուր պանդուխտ Ղարիբին սէր,
Առատ քաղաք բազմանուէր.
Մայր ու քոյրս թողի անտէր,
Քեզ դիմեցի, Հալէպ քաղաք:

Երբ որ Ղարիբը սկսեց նուագել և քաղցր ձայնով երգել, այնքան լցուեցաւ սրճարանը ժողովրդով, որ շարժուելու տեղ չմնաց. գործաւորի պակասութիւն տեսնելով երկու սղասաւոր ևս վարձեցին: Ղարիբը երբ որ երգելը վերջացրեց, ժողովուրդը շնորհակալ լինելով և սրճարանի դրամարկը ոսկի և արծաթ լցնելով ցրուեցին: Ասլանը երբ որ բաց արեց արկղիկը, տեսաւ լի ոսկով և արծաթով, վազեց փողոցը և մի ձեռք լաւ մաքուր պատրաստուած անկողին գնեց և բերեց Ղարիբի համար: Այդպիսով ժողովուրդը շարունակ յաճախում էր Ղարիբին լսելու:

Մի օր այդ քաղաքի կառավարիչ փաշայի օգնականը շրջելով փողոցները, եկաւ այդ սրճարանը, տեսաւ որ մի գեղեցիկ երիտօտերդ նստած հիանալի նուագում է և քաղցր ձայնով երգում: Բաւական նստելուց լետոյ մի ճրար ոսկի գցեց արկղիկը և հեռացաւ: Ճանապարհին նորան հանդիպեցին փաշայի երկու բանաստեղծ երգիչները

և հարցրին. — «Ձերդ վսեմափայլութիւն, խորհրդից էք գալիս»: Նա էլ ասաց. — Սալան-Դադայի սրճարանից. բայց այնտեղ մի գեղեցիկ երգիչ տեսայ, ձայնը չափազանց քաղցր, որ ձեզ նման երգիչներ կարող է գրպանից հանել»: Երբ որ այս խօսքերը լսեցին աշուղները՝ շատ նեղացան, և ուղղակի դիմեցին Սալան-Դադայի սրճարանը, որպէսզի Աշըղ-Ղարիբին իւր չափը ճանաչեցնել տան:

Դրսից եկան Աշըղ-Ղարիբին ասացին, որ փաշայի երկու երգիչները գալիս են քեզ հետ փորձուելու: Նա էլ պատասխանեց թէ՛ — «Թող գան, իրենց մէկ ասածին հինգ պատասխան կտանան»: այս ասելուց յետոյ՝ ընկաւ մրտածութեան մէջ: Ղարիբը այդ սրճարանի մէջ Դէլի Սէլիմ անունով մի բարեկամ ունէր. նա Ղարիբին ասաց. «Ինչու մտածութեան մէջ ընկար: Նա էլ պատասխանեց. — «Ով բարեկամ, սոցա մի երկու խօսքով լռեցնելը մի դժուար բան չէ, բայց պէտք է ասեն մի երեխայ գալով՝ փաշայի աշուղներին յաղթել է. փաշայի կողմից մի վնաս պտանալու համար եմ մտածում»: Դէլի-Սէլիմը և սրճարանում գտնուող մարդիկը ասացին. — «մի վախենալ, որդի, մենք քանի կենդանի ենք, քեզ վնաս չի գալ. աշխատիր շնորհք ցոյց տուր». և տարան այդ աշուղների նստած աթոռների վերայ նստեցրին: Սոքա խօսակցում էին, երբ յանկարծ աշուղները իւրեանց սաղերով ներս մտան, տեսնելով Ղարիբին իւրեանց աթոռների վերայ նստած, հարցրին. — «Ի՞նչ իրաւունք ունիս մեր աթոռի վերայ նստելու». և այս մասին բաւականին վիճեցին: Դէլի-Սէլիմն ասաց. — «եղբայրներ, ձեռքը ձեռքից բարձր է, այստեղ աստիարէզը յաղթողինն է. եթէ շնորհք ունիք, փորձուեցէք. այստեղ ոչ ոքի սիրտը չպէտք է մնայ»: Այդ աշուղների գլխաւորը, որի անունն էր Հաւղի, հպարտ հպարտ խօսելով, աս-

աւա սողը ձեռը և Աշըղ-Ղարիբին հրաւիրեց պատասխանելու: Պատրաստուեցան և սկսեցին երգել այսպէս. —

Հ Ա Ն Ջ Ո Ն

Ի՞նչ ասացիր, եկար աստարէզ մտար,
Չգիտեմ որ այստեղ կարգ ու կանոն կայ.
Միթէ այս քաղաքը դու անտէ՞ր գտար,
Ինչ չէիր իմացել, ով անգէտ տղայ:

Ղ Ա Ր Ո Բ Ը

Արի, վարպետ քեզի դադար պահպանէ,
Չլինի թէ զղջաս, շուտ ասես մեղայ,
Բանաստեղծութիւնը մի ծանր բան է,
Ով տակից դուրս եկաւ՝ տղամարդ է նա:

Հ Ա Ն Ջ Ո Ն

Քեզ ով խրախուսեց կամ տուեց եռանդ,
Որ այսպէս խօսում ես դու անհնազանդ.
Շուտով ձեռքիդ սաղը ինչ կտաս պատանդ,
Կըլինիս աշակերտ մեզ մօտ երեխայ:

Ղ Ա Ր Ո Բ Ը

Տեղդ ծանր նստիր, վարպետ բարեկամ,
Քեզի սաղ առնելը հիմալ խրատ տամ.
Խայտառակ կըլինիս չի քաշիլ մէկ ժամ,
Քեզ նման թեփոտը իւր սաղը կուտայ:

Հ Ա Ն Ջ Ո Ն

Ով երեխայ, դու ես մեզ բամբասողը,
Այդ դուռն խօսքերը մեզի ասողը.
Չգիտեմ որ, ես եմ քեզ վնասողը,
Մարմինդ գալլերին ուղարկող ընծայ:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Արի, վարպետ քաշուիր, գնա խրճիթդ,
Քանի որ չես կախել երկար կնճիթդ.
Գլուխդ շարժելով, մի քորիք քիթդ,
Շուտով կիջնի, քո սրտիդ դժուար կ'գալ:

Հ Ա Ն Զ Ի Ն

Գու երկնային գինի խմե՛լ ես հաստատ,
Որ այդպէս աներկիւղ խօսում ես ազատ,
Հաւգիս, շատ եմ տեսել քեզ պէս շաղակրատ,
Ասպարէզում նրան արել եմ ծառայ

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ղարիբն եմ, չեմ դատուիր բարի շրջանից,
Պակաս խօսքեր գուրս չի գար իմ բերանից
Թռչուն լինիս չես աղատուիր ինձանից.
Ազատուիս էլ՝ պիտի լինիս անզգայ:

Այս խօսքերը որ աւարտեցին, Սէլիմը մէջ բնկնելով ա-
սաց. — «վարպետ, մինչև հիմալ դու ինչ որ ասացիր, Ղա-
րիբը պատասխանեց. աչժմ հերթը նորանն է. թող նա ասէ
մի քանի խօսք և դու պատասխանէ»: Սկսեցին նորից եր-
գել, բայց Ղարիբը այս հարցական երգը երգեց —

Ղ Ա Ր Ի Բ Ը

Լսեցէք, վարպետներ, հարցնեմ մի բան,
Երաժշտութիւնը նախ ո՞վ հնարեց.
Ուղիղ պատմութիւնը աշխարհի ծագման,
Ո՞վ գրեց, և ամփոփեց և շարայարեց:

Ի՞նչն է իմաստութեան սկիզբն արգար,
Ի՞նչ լապտեր է վառւում անշէջ, անխաւար,

Ի՞նչ անմեղ էր, մահ ճաշակեց մեղ համար,
Այն լապտերի լոյսը մէկ անգամ մարեց:

Ի՞նչ գօտի է վերան ունի եօթը դոյն,
Ով է կապում այդ գօտիկը միկնոյն.
Այն ի՞նչ բան է առաջ մեղր է յետոյ թոյն,
Ի՞նչ բժիշկ էր, որ այդ բանը նշմարեց:

Այն ի՞նչ լոյս է մարմնոյ աչքը չի տեսնում,
Հոգեկան է, միայն միտքն է ըմբռնում.
Ի՞նչ ճամբորդ է, համ ցաւ ունի համ խնդում,
Այս խորհուրդը Ղարիբ, նախ ո՞վ կատարեց:

Այս երգը աւարտեց Ղարիբը, ասաց. — «վարպետներ,
հրամայեցէք, պատասխանեցէք». Աշուղները մոլորած մէկը
միւսի երեսը նայելով ապշեցան մնացին. յետոյ դառնա-
լով Ղարիբին ասացին. — «մենք այդքան չենք կարդացել,
որ քու խօսքերիդ պատասխան տանք և խորհուրդը բացա-
տրենք»: Քիչ առաջ հպարտացող աշուղները սուրբ վերայ
կանգնած. գլուխները գետնին խոնարհեցրած, սազերը
յանձնեցին Ղարիբին: Նորից Ղարիբը սազը առնելով ձեռք
սկսեց բացատրել առաջարկած հարցերը —

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ահա բացատրեմ խօսքերիս միտքը,
Երաժշտութիւնը Յովրալն հնարեց.
Ուղիղ պատմութիւնը աշխարհի ծագման
Մովսէսն ամփոփեց և շարայարեց:

Տիրոջ վախն է գիտութեան սկիզբն արգար,
Արեգակն է վառւում անշէջ անխաւար.
Քրիստոսն էր մահ ճաշակեց մեղ համար,
Երբ որ խաչուեց՝ ճիշտ արև խաւարեց:

Աղեղնակն է, վերան ունի եօթը դոյն,
Այդ երկինքն է որ կապում է միեւնոյն.
Այդ խաղողն է առաջ մեղր է յետոյ թոյն,
Փորձուած մարդ էր, որ այդ բանը նշմարեց:

Այն գրախտն է մարմնոյ աչք չի տեսնում,
Հոգեկան է միայն միտքն է ըմբռնում.
Ծնւող տղան համ ցաւ ունի, համ խնդում,
Այդ խորհուրդն առաջ եւան կատարեց:

Մի օր Հալէպի Մելիք փաշան սաստիկ տիւրը լինելով, հրամայեց իւր զաւազներին, որ գնան իւր աշուղներին կանչեն: Շտապով զաւակները կատարեցին փաշայի հրամանը: Փաշան ասաց աշուղներին.—«այսօր շատ լուզուած գրութեան մէջ եմ, մի փոքր նուագեցէք, որպէսզի այս դառն հոգսերը ինձանից մի քիչ հեռանան»: Աշուղները լուռ կանգնած էին, փաշան ասաց.—«ինչու լռում էք»: Աշուղները ասացին.—«մեր տէր, Ասլան Գադայի սրճարանը մի նոր երգիչ էր եկել, մենք նորան տեսութեան գնացինք: Դէլի-Սէլիմը մեր սագերը խլելով մեզի դուրս վռնդեց ասելով որ.—«գուք գիտմամբ եկել էք իմ աշուղիս ճնշելու»: Երբ որ փաշան այս լսեց, սաստիկ բարկացաւ և հրամայեց զաւազներին, որ գնան թէ Սէլիմն և թէ աշուղին բերեն իւր մօտը: Նոյն րոպէին զաւազները դոցա ներկայացրին փաշային: Փաշան ի բարկութիւնով մի խոթող հայացք ձգելով Սէլիմի վերայ ասաց.—«անզգամ, դու ես իմ աշուղների սագերը ձեռքերից խլել և հեռացրել. այդ ինչ յանդգնութիւն է, ասա»: Դէլի-Սէլիմը խոնարհելով փաշային ասաց.—«վսեմափալ Տէր իմ՝ այս աշուղները ահագին վեճ բանալով եկան սրճարան փորձուեցան և յաղթուեցան: Աշուղական կանոնի համեմատ այս տղան էլ որպէս յաղթող՝ սագերը ձեռքերիցը առաւ. հիմա այս աշուղները այլևս իրաւունք չունին երգելու»:

Երբ որ փաշան այս բանը ստուգեց՝ այդ աշուղներին աքսորեց իրանց երկիրը: Այնուհետեւ Ղարիբին հարցրեց.—
«դաւակ, որտեղացի ես», Ղարիբն ասաց.—«Տէր իմ Թաւրիզցի եմ»: Փաշան ասաց.—«ես Թաւրիզ եղել եմ, բաւականին կացել եմ այնտեղ. եթէ Թաւրիզու այս վերջին պատերազմը նկարագրեցիր երգով, այնուհետեւ կ'հաւատամ, որ Թաւրիզցի ես»: Ղարիբը առաւ սագը ձեռքը և երգեց այսպէս.—

Տէր իմ չունի ուրախալի լիշատակ,
Մի լիշեալ տար պատահարը Թաւրիզու.
Տեսայ որ երկնքից թափուեցաւ կրակ,
Վառեց, լափեց սար ու քարը Թաւրիզու:

Թաւրիզու շուրջը կար մարտկոցներ յատուկ,
Բթացան զորքերի սրերը կտրուկ.
Ազատորդիք դարձան գերի ստրուկ,
Գուշակել էր ազադարարը Թաւրիզու:

Ոչ կարգացող մնաց, ոչ վաճառական,
Քառասուն զօր դիշեր, այնտեղ սև հողան.
Կտրած զլսելները բերդից բարձրացան,
Արիւնն առաւ ճանապարհը Թաւրիզու:

Ղարիբն եմ սրտիս մէջ ձգեցին ահը,
Սարսիչ պատերազմը և գաժան մահը,
Կեցցեն իշխանները Վահափառ Շահը,
Գտան փրկելու հնարը Թաւրիզու:

Ղարիբի խօսքերը փաշային սաստիկ դուր գալով հարցրեց.—«երկրիդ մէջ նշանած, կամ կին ունի»: Ղարիբը պատասխանեց թէ.—«չունիմ», Փաշան կրկին ասաց.—«մի ամանչիր, ասա»: Կրկին ասելով չունիմ, Ղարիբը սագը առաւ և երգեց—

Մեծ կարօտով օտարութեան դիմեցի,
հուլամ, կմաղկտիմ թէ ոչ ոք չունիմ,
Ափսոս ինձի բերնէ բերան գցեցի,
հուլամ կմաղկտիմ թէ ոչ ոք չունիմ:

Փոքր հասակիս մէջ թողի ամեն բան,
Հայրենիք, տեղ ու տուն, կայք ու օթեան.
Այժմ այս երկիրն է ինձի կացարան,
հուլամ, կմաղկտիմ թէ ոչ ոք չունիմ:

Ափսոս, խղճութիւնս նոր գգացի ես,
Հազիւ հազ արթնացայ, աչքս բացի ես.
Հարցնում ես ինձի սրտեղացի ես,
հուլամ, կմաղկտիմ թէ ոչ ոք չունիմ:

Ղարիբն եմ, խօսեցայ սիրով վառվռուն,
Ականջիս չէ դիպել կարծես սէր անուն.
Տէրը քեզ մշտապէս պահէ հաստատուն,
հուլամ, կմաղկտիմ թէ ոչ ոք չունիմ:

Փաշան շատ սիրելով Ղարիբին, առաջարկեց որ իւր տան մէջ մնայ յանձնելով նրան մաքուր սենեակներ կահ-կարասիներով և ծառաներով: Բայց Դէլի-Սէլիմը խնդրեց փաշային ասելով—«մենք առանց Աշըղ-Ղարիբի չենք կարող մնալ. եթէ կարելի է ցերեկները մեզ մօտ երգէ, իսկ գիշերները ձեզ մօտ»: Փաշան համաձայնեց և այսպէս շարունակում էր միշտ:

Այդ ժամանակ Թիֆլիսում Խօջայ Սահակը իւր Շահ-Սանամ աղջիկը նշանել էր Թիֆլիսեցի Շահ-Վալատ անունով մի վաճառականի հետ, այն պայմանով որ մինչև իւր կարողութեան չափ կարողութիւն չունենայ՝ չըպսակուի, Շահ-Վալատը վաճառականութիւնով անցաւ Հնդկաստան, Արաբիայի եմէն և Շամ քաղաքները ման գալով, հասաւ Հալեպ. իջնցրեց բեռները գմբէստի պահուստը, ինքն ե-

կաւ Ասլան-Դադայի սրճարանը: Ղարիբը երբ որ սորան տեսաւ, հարցրեց որտեղացի լինելը և երբ իմացաւ որ Թիֆլիզեցի է, ասաց,—Երբ ես գնալու»: Նա էլ ասաց—«Աստուած յաջողէ երեք օրից յետոյ պէտք է գնամ: Ղարիբը մի նամակ գրելով, հասցէն այսպէս գրեց.—«Նորին յարգութեան Խօջայ Սահակին հասցէ, և նա յանձնէ Աշըղ-Ղարիբի մօր Արուսեակին»: Նամակը եօթը տեղ կնքելով յանձնեց դորան: Շահ-Վալատը բեռները, բառնալով ընկաւ ճանապարհ. հասաւ Թիֆլիսի մօտերը, մի կանաչ դաշտի մէջ վրանները խփել տալով հանգստանում էր: Նամակների պայուսակը խառնած ժամանակը, յանկարծ Ղարիբի նամակը ձեռքն ընկաւ. հասցէն որ կարդաց Խօջայ-Սահակի անունով, իւր մէջ մի տեսակ կասկած ընկաւ. բացէց նամակը տեսաւ որ Շահ-Սանամի անունն է գրուած: Կարդալով, գործի եղելութիւն իմանալով, Շահ-Վալատի խելքը դիւխից թռաւ. սկսեց սաստիկ մտածել: Շահ-Վալատը իւր ձեռքի տակ Կնտակ Տօնի անունով մի ծառայ ունէր սա տեղեկանալով իւր տիրոջ տիրութեան պատճառը՝ ասաց.—«Տէր իմ, այդ բանը շատ հոգս անելու բան չէ»: Շահ-Վալատը առաց.—«Եթէ հեշտութիւնով ազդէ հետը գտնես՝ հինգ ջրի կընծայեմ քեզ»: Կնտակ Տօնին խկոյն մի շապիկ արեան մէջ թաթախելով, գալով Թիֆլիս, նամակը յանձնեց Աշըղ-Ղարիբի մօրը: Մայրը նամակը կարդալուց յետոյ Տօնիին հարցրեց. որդիս ինչպէս է»: Տօնին ասաց.—«մեր տեսած ժամանակը ողջ և առողջ էր, բայց մեր ետևից նա էլ Հալեպից դուրս գալով ճանապարհին աւաղակները նորան սպանելու լուրն առանք, մարգիկ յետ ուղարկեցինք, նուա այս արիւնտ շապիկը բերին»: Ասաց և շապիկը ձգեց մօր առաջ: Ղարիբի մայրը քոյրը երբ այս լուրը լսեցին և շապիկը տեսան, սկսեցին լաց ու կոծր: Ղարիբի մայրը չգիմանալով այդ կոծին, այնքան պոխը քարերին խփեց որ աչքերը սև ջուր իջնելով կու-

բացաւ. իսկ մանկամարդ քոյր ուշաթափելով վայր բն-
կաւ: Ղարիբի մայրը սկսեց հեկեկալով այս ողբը ասել—

Մ Ա Յ Ր Ը

Քո կարօտդ ինձ սպանեց, որդեակս,
Սրտիս մէջը վերքեր ցանեց որդեակս.
Այսուհետեւ աշխարհն էլ ի՞նչ անեմ.
Մահիդ լուրը աչքէս հանեց, որդեակս:

Ք Ո Յ Ր Ը

Ո՛ւր ես, հօւր, իմ եղբայր պատուականս,
Փափաղիդ կրակը այրեց իրանս
Հառաչանքիս ծուխը պատեց աշխարհը,
Հիմա ցաւոց դաշտն է իմ կացարանս:

Մ Ա Յ Ր Ը

Ախ որտեղ ես, անուշ զաւակ, հարազատ,
Այսուհետեւ աշխարհն է ինձ անպատ-
կամքդ ուզեց գնացիր օտարութիւն,
Թոքերիս մէջ վերք թողեցիր անտարապ:

Ք Ո Յ Ր Ը

Յիրաւի, դու մեզ ձգեցիր քարերը,
Ձենք մոռանալ քո անունդ դարերը,
Խնչպէս քեզանից դատուել ենք, եղբայրս
Հարբածի պէս ման ենք գալիս սարերը:

Այս ողբը աւարտելուց յետոյ՝ շատ լացին ու ողբա-
ցին. մի փոքր հանդարտելուց յետոյ՝ Աշըղ-Ղարիբի խղճա-
ւի մայրը կանչեց աղջկանը և ասաց. «որդի, գնա Շահ-
Սանամին Ղարիբի մահը իմաց տուր, գոնէ նրա ոտքը
կապած չմտայ, Աստուծոյ կամքը այգպէս էր»: Նարդիզը

գնաց այս գոյժը հաղորդեց Սանամին. Սանամը հաբցրեց
թէ՛ այդ լուրը ձով իմացուց ձեզ: Նարդիզն ասաց.— «Շահ-
Վալատը»: Սանամը ասաց.— «ստեղ է այդ խողը բարբա-
նջելով. խարդախութիւն է գործ դրել ինձ առնելու համար»: Սանամը Նարդիզի հետ գնացին Ղարիբի մօր մօտ. ուղար-
կեցին կանչեցին Շահ-Վալադին: Շահ-Վալատը Կնտակ-Տօ-
նին հետ առնելով եկաւ: Շահ-Սանամն ասաց.— «բարձր էք
եկել, պարոն վաճառական, Աշըղ Ղարիբը, ճշմարիտն ասա՛
նիջ է թէ մեռած»: Կնտակ-Տօնին իր տիրոջից առաջ
անցնելով ասաց.— «երէկ ես մօրը և քրոջն ասացի, Աստ-
ուած ողորմի հոգուն»: Շահ Սանամն ասաց.— «թէ սուտ
է այդ լուրը, աչքերդ կուրանան, շահ պէս սատակի՛ս»: Տօնին քիչ մտածելուց յետոյ ասաց.— «թող այգպէս լինի»: Երբ որ Տօնիի հաղորդած լուրը հաստատ երգմամբ ընդու-
նեցին, սկսեցին բոլորը միասին լաց լինել: Մայրը և Սա-
նամը սկսեցին երգով խօսել.—

Մ Ա Յ Ր Ը

Սանամ ոտքերուդ տակը դնեմ գլուխս,
Ողբա Սանամ, ողբա, հօւր է Ղարիբը.
Վառոււմ-այրոււմ եմ, դուրս չի գայ ծուխս,
Ողբա Սանամ, սղբա, հօւր է Ղարիբը:

Ս Ա Ն Ա Մ Ը

Քս մատուղդ լինեմ, սիրելի մայրիկ,
Խնչպէս ես չողբամ, սիրելիս չեկաւ.
Աշխարհիս մէջ կեանք չունեցայ երջանիկ,
Խնչպէս ես չը ողբամ, սիրելիս չեկաւ:

Մ Ա Յ Ր Ը

Տես, անիրաւ բաղդը մեզ ինչեր արեց:
Անամօթ թշնամին՝ դռներս քարեց

Արիւնս չորացաւ, շունչս դադարեց,
Ողբա Սանամ, ողբա, ուր է Ղարիբը:

Ս Ա Ն Ա Մ Ը

Ղարիբն ինձի ինչ օրերու հասցրաւ,
Հին ցաւերուս վերայ՝ նորից ցաւ դրաւ.
Անիրաւ թշնամին բերեց վատ համբաւ,
Ի՞նչպէս ես չը ողբամ, սիրելիս չեկաւ.

Ղարիբի քայրը չ'գիմանալով այս տխրալի երգերին
ինքն էլ սկսեց երգել—

Կրկին այսօր ընկայ հեծեծանքի մէջ,
Մայրիկ, ճրտեղ է իմ Ղարիբ եղբայրս,
Հալուելով մաշուում եմ տոչորանքի մէջ,
Մայրիկ ճրտեղ է իմ Ղարիբ եղբայրս:

Աիգեօք ռվ լողացուց իմ հրեշտակը,
Ի՞նչ մարդիկ գրկեցին նոձի հասակը.
Ա՛խ չ'տեսայ հարսանիքը, պսակը,
Մայրիկ, ճրտեղ է իմ Ղարիբ եղբայրս:

Նարգիզ՝ աւագակին խիղջ ու գութ չ'կայ,
Սպանողը լինի ցաւոց ենթակայ.
Շապիկը արիւնով ներկաւս տեւայ,
Մայրիկ, ճրտեղ է իմ Ղարիբ եղբայրս:

Այս տխրալի երգերը չափազանց ազդեցին Կնտակ-
Տօնի վերայ. այդանդից դուրս եկան փողոցը: Շահ-Վա-
լատի հետ գնում էին, յանկարծ մտաւսանջութիւնից Կրն-
տակ-Տօնին կաթուածահար լինելով՝ ընկաւ հրապարակի
մէջ և հոգին փչեց: Անցուդարձ անողները տեսան և ա-
սացին.—«պատիժդ գտել ես անխիղճ, սնորէն» և սկսե-
ցին զիսկի վերայ թքել: Շահ-Վալատը նոցա ասաց.—«այդ

տեսակ խօսքեր ինչ հարկաւոր է ասել, ժամանակը հասել
էր մահացաւ»: Երկու օր յետոյ՝ Շահ-Վալատը մի քանի
պատուաւոր մարդկանց հետ գնաց Խօջայ-Սահակի տունը,
նրա աղջկայ ձեռքը կրկին խնդրելու, իմացնելով որ նորա
առաջարկած փողը պատրաստ է: Խօջայ-Սահակը ասաց—
«ես իմ կողմից պատրաստ եմ, բայց պէտք է Սանամի
հաճութիւնը առնես»: Կանչեցին Սանամին. հայրը ասաց.
—«ես իմ կողմից համաձայնում եմ, քեզ իմ խոստման
համաձայն տալ Շահ-Վալատին. այժմ մնում է քո հաճու-
թիւնդ»: Սանամը պատասխանեց.—«ես կ'մահանամ և
այդպիսի անպիտան մարդի հետ ինձ արժանի չեմ համա-
րիլ ընկերանայ»: Շահ-Վալատի հետ գնացող պատգամա-
ւորները Սանամին շատ համոզեցին, բայց ոչ մի կերպով
չ'համոզուեց: Շատ խիստ ստիպելուց յետոյ ասաց.—«անկա-
րելի է», և լալով հեռացաւ: Մարդիկը հեռանալով այդ
տեղից՝ ասացին Շահ-Վալատին.—«եղբայր, կինը կնոջ սա-
տանան է, մի կին գտիր, և մի քանի դահեկան խոստա-
ցիր, ուղարկիր մօտը և նա կ'համոզէ Սանամին»: Յիրաւի
Շահ-Վալատը մի պառաւ կին գտաւ, երկու հարիւր դահե-
կան խոստանալով, ուղարկեց Սանամի մօտ: Պառաւը գնա-
լով Սանամի դուռը՝ իմաց տուեց որ խօսելիք ունի Սա-
նամին: Երբ որ պառաւին վեր հրաւիրեցին, Սանամը նըս-
տցրեց և հարցրեց: «Ի՞նչ ունիս խօսելու, խօսիր», Պա-
ռաւը ասաց.—«Աղջիկս, Շահ-Վալատից քեզի շատ բարե-
ունիմ. լսեցի որ մերժել ես քու ձեռքը նորան տալու,
բայց սխալուել ես, որ քս կարողութեանդ չափ կարողութիւն
ունի, քո աներուդ պէս տուն ունի, դորանից լաւ էլ
ինչ կուգես: Ղարիբի համար էլ մի մտածիր, նա օտա-
րութեան մէջ, ռվ գիտէ կամ մեռաւ կամ մի ուրիշի
հետ պսակուեցաւ նորանից յայտ կտրիր և խօսք տուր
այդ մարդուն»:

Այս խօսքերը որ լսեց Սանամը՝ իւր սպասուհիներին

աչքով արեց, մի լաւ ծեծեցին պառաւին և դուրս ձգեցին։ Պառաւն մինչև Շահ-Վալատի մօտ, շունչ մէկ առաւ։

Շահ-Վալատը ուրիշ հնար չգտնելով՝ մտածեց որ Խօ-ջայ-Սահակի ծխատէր քահանային միջնորդ ուղարկէ Սանամին համոզելու։ Քահանան գնաց. շատ համոզելուց յետոյ՝ հազիւ հազ Սանամին մի կերպով խօսք հասկացրեց։ Բայց Սանամը ընդունեց առաջարկութիւնը այս պայմանաւ և ասաց.— «Իմ Ղարիբի հետ ունեցած ուխտս լրանալուն երկու ամիս ժամանակ կայ դեռ ևս, նորանից յետոյ քառասուն օր էլ ժամանակ կուզեմ. եթէ այդ քառասուն օրը լրացած, մինչև եկեղեցին պսակի խորհուրդը կատարելըս Ղարիբը հառաւ՝ ես նորանն եմ. եթէ ոչ, խօսք կուտամ առնելու»։ Երկու ամիս անցաւ, դեռ ոչինչ տեղեկութիւն չ'կար Ղարիբից։ Ժամանակը արագ արագ անցնում էր. քահանան տեսաւ որ ոչ ոք չ'կայ եկող գնացող՝ Շահ-Վալատին ասաց.— «Դու քո հարսանեաց պատրաստութիւնը տես»։ Շահ-Վալատը սկսեց պատրաստութիւն տեսնել։ Հէնց այդ օրը Սանամը ծպտեալ կերպարանքով գնաց Ղարիբի մօր մօտ և ասաց.— «մայրիկ, ահա մեր ժամանակը լրացաւ, հիմայ մնաց իմ վերջին քառասուն օր նշանակած ժամանակը. արի, աղջիկդ առ, քաղաքից դուրս գնանք. գնահող-եկողից հարցնենք, գուցէ մի տեղեկութիւն առնենք, յոյսներս չ'կտրենք, որովհետեւ ես Շահ-Վալատին յանձնելու միտք չունիմ. եթէ բռնի կերպով ինձ նորան տալու եղան, գաշտնով կամ թոյնով իմ կեանքս պէտք է վերջացնեմ»։ Երեքը միասին սև զգեստներ հագնելով՝ քաղաքից դուրս գնացին։ Հեռուից տեսան, որ մարգագետինների վերայ վրաններ են խփած և մի մեծ կարաւան կայ իջած։ Սանամը ուշի ուշով նայեց, տեսաւ որ կանանց վրանի առաջ մի պատուաւոր վաճառական ման է գալիս.— «արդեօք սորանից կարող ենք մի տեղեկութիւն ստանալ», ասելով՝ դէպի վրանները գնա-

ցին։ Վաճառականը երբ որ սոցա տեսաւ՝ մուրացիկներ կարծելով ողորմութիւն ուղարկեց։ Սորանք ասացին.— «մենք մուրացկան չենք, բայց մի գաղտնի խորհուրդ ունինք պարսին հարցնելու»։ Երբոր այս լսեց սպտաւոր ծառան հաղորդեց վաճառականին։ Վաճառականն ասաց.— «ուրեմն հրաւիրիր այստեղ»։ Եկան նստեցին վաճառականի մօտ։ Վաճառականը հարցրեց սոցա.— «ինչն է ձեր խնդիրը, մայրս»։ Ղարիբի մայրը ծնկի վերայ չոգելով ըսկսեց երգել—

Մէկ կեանք ունիմ՝ նուէր ազնիւ պարոնին,

Աչքից եղայ որդի, որդի ասելով.

Թէ մի լուր ասլ, փառք ու պատիւ պարոնին,

Աչքից եղայ որդի, որդի ասելով,

Մէկ կողմս կպել է ծխանի քարին,

Ո'վ է լոյս տուող ինձ պէս տկարին.

Տեսանել չեմ գնամ զլուսը սարին,

Աչքից եղայ, որդի, որդի ասելով։

Մեր ճակատագիրը դառն է բնական,

Այլոց ծանակ եղանք, քաջ վաճառական.

Դու մի կարծիր խեղճ ու մուրացկան,

Աչքից եղայ, որդի, որդի ասելով.

Յաւի աէր եմ, զօր զիշեր պիտի լամ,

Մինչև որ Ղարիբէս՝ մէկ լուր ստանամ.

Ինչո՞ւ առանց որդի կենդանի մնամ,

Աչքից եղայ, որդի, որդի ասելով։

Յետոյ Ղարիբի քոյրը սկսեց երգել.

Ականջ արա ինձի, բաղմալաճառ տէր,

Սպասում եմ ճամբան, եղբայրս, չի գար.

Գիշեր ցերեկ ինձ տանջում է մի սուրբ սէր,

Սպասում եմ ճամբան, եղբայրս չի գար։

Ճիշտ եօթը բարի է նորան կսպասեմ,
Մի ձանձրանար, տէր իմ, լսէ, որ ասեմ.
Ախ, մինչև երբ ողբամ, էս ինձ փսասեմ,
Սպասում եմ ճամբան, եղբայրս չի գար:

Վաճառական, դուն ու քո Տէր Աստուածը,
Տես Ղարիբին պատմէ այս մեր արկածը.
Ես քոյրն եմ՝ Սանամն էլ նշանածը,
Սպասում եմ ճամբան, եղբայրս չի գար:

Այս երգերից յետոյ՝ ասաց վաճառականին.—Ազնիւ պարոն, այսքան ժամանակ լսեցիք մեր ցաւերը. մի քանի խօսք էլ հրամայեցէք դուք ասացէք, գուցէ ձեր խօսքերից մի միւրթարուխին ծագի մեզ: Վաճառականն ասաց.—«Ես չեմ բանաստեղծ եմ ոչ աշուղ, որ երգով կամ նուագածութեամբ ձեզ պատասխանեմ»: Սանամը ասաց.—«որքան չլինի, դու փորձեալ մարդ ես և դրսերը ման եկած. անպատճառ դու շատ բան կը գիտենաս, խնդրում եմ ասես:—Թէև վաճառականն աշխատեց իրեն չ'գիտացողի տեղ համարել, բայց չ'կարողացաւ: Վերջապէս գիշանելով իւր համեստ և պատուական հիւրերին, իւր փոքրիկ ըստը—լաման*) ձեռքն առնելով սկսեց երգել—

Ներողութիւն արւ, տիկինդ ժուժկալ,
Տեղն ասած որդուդ՝ գտնեմ ուղարկեմ,
Մուրացիկ կրծելով գործեցի սխալ,
Տեղն ասած որդուդ՝ գտնեմ ուղարկեմ:

Մ Ա Յ Ր Ը

Վաճառականներու պետ ու գլխաւոր.
Առնում ես ու ծախում շատ ընտիր կտոր:

*) Բաղլաման տաճկական մի սաղ է:

Խաւաքուեցաւ լոյսս, մնացի մոլոր,
Աչքից եղայ, որդի, որդի ասելով:

Վ Ա Ծ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Թիֆլիսից գնում եմ Տաճկաստան դէպի,
Առնում եմ, վաճառում, ապրանքներ յարգի.
Ասած, մայրս, ցաւդ մի պահեր գաղտնի,
Տեղն ասած որդուդ՝ գտնեմ ուղարկեմ:

Մ Ա Յ Ր Ը

Կարող ես ցաւերիս դու տալ մի օգուտ
Արգանդում պահեցի ինն ամիս դուտ,
Պառլը չ'քաղած՝ որդիս կորաւ շուտ,
Աչքից եղայ, որդի, որդի ասելով:

Վ Ա Ծ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Թէ փողով գնելու լինի՝ ես փող տամ,
Որքան ոյժ ունիմ, աշխատիմ, ջանամ,
Որդուդ անունն ինչ է, ասած, իմանամ,
Տեղն ասած որդուդ՝ գտնեմ ուղարկեմ:

Մ Ա Յ Ր Ը

Բաղդը մի քար գցեց իմ գլխուս վերայ,
Էլ չեմ կարող կանգնել, սաստիկ վայր ընկայ,
Որդիս իրան Ղարիբ անուն կուտայ,
Աչքից եղայ, որդի, որդի ասելով:

Վ Ա Ծ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Կարգ կարգ շարեմ գրաստներս շարունակ,
Ամեն կողմ ուղարկեմ ջոկ-ջոկ սուրհանդակ,
Ծախսեմ նորա սիրոյն մինչ հազար քսակ,
Գտնելով քու որդուդ՝ կուղարկեմ թող դայ:

Մ Ա Յ Ր Ը

Տարաբաղդ Ղարիբի՝ ես մայրիկը,
Վաղաժամ թառամեց կեանքիս ծաղիկը,
Մէկը Շահ-Սանամն է միւսը քոյրիկը,
Ասա իմ Ղարիբի չ'մնայ շուտ գայ:

Վ Ա Ծ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Բեռներս բառնալով այստեղից կերթամ,
Որդուդ սիրուն քաղքէ քաղաք ման կուգամ,
Ծերուկ մայրիկ, քեզի հաստատ խօսք կուտամ,
Գտնելով քու որդուդ՝ կուղարկեմ թող գայ:

Մ Ա Յ Ր Ը

Ազնիւ վաճառական, ինչաճաս, ճարտար,
Դու աշխատիր, բժիշկ դարձիր մեզ համար,
Գտիր որդիս, եղիր ինձի բարերար,
Ասա իմ Ղարիբի չ'մնայ՝ գայ:

Վ Ա Ծ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Ես Հին-Ջուղայեցի անունս Ագամ,
Ափսոս որ ծերացայ այսպէս վաղաժամ,
Անգաղար որոնեմ, ամեն տեղ ման գամ,
Ուղարկեմ Ղարիբը՝ թող չ'մնայ՝ գայ:

Այս երգից լետոյ վաճառականը ասաց Սանամին.—
«Գու էլ մի քանի խօսք ասա լսեմ»: Քոյրը տառջ ընկնե-
լով ասաց.— «Ես պիտի ասեմ»: Սանամը թէ.— «Ես պէտք
է ասեմ»: Իսկ վաճառականը ասաց Սանամին, թող քոյրն
էլ ասէ, լետոյ մենք միասին կասենք:

Ք Ո Յ Ր Ը

Պարօն վաճառիկան, այս է բողձանչս,
Լսես ու կատարես իմ աղաչարքս:

Ղարիբն է իմ երկու աչքս, իմ կեանքս,
Ասա իմ եղբորս թող չ'մնայ՝ գայ:

Վ Ա Ծ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Սրտիս մէջ ես ուխտ դրել եմ հաստատ,
Անշուշտ պիտի գտնեմ, ունեցէք հաւատ,
Մի լաք, մայր ու քոյրս, միշտ սգալն է վատ,
Գտնելով Ղարիբը կուղարկեմ թող գայ:

Ք Ո Յ Ր Ը

Ինձ համար չէ գարնան արևը պայծառ,
Քանի ես տխուր եմ, իմ օրս է թշուառ,
Տէր իմ, Աստուած սիրես գտիր անպատճառ,
Ասա իմ եղբոր թող չ'մնայ՝ գայ:

Վ Ա Ծ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Ես ձեր իրաւունքը պիտի պաշտպանեմ,
Բոլոր կարգ ու զարգս ես ծախու հանեմ,
Թէ չբաւեց ուրիշներից պարտք կանեմ,
Գտնելով եղբորդ կուղարկեմ թող գայ:

Հերթը հասաւ Սանամին և վաճառականին: Նոքա
սկսեցին:

Ս Ա Ն Ա Մ Ը

Թէ Աստուած կ'սիրես, ով վաճառական
Ասա իմ սիրելոյս թող չ'մնայ գայ:
Ճիշտ եօթը տարի է կ'սպասեմ նորան,
Ասա իմ սիրելոյս թող չ'մնայ գայ:

Այո խօսքերը որ ասաց Սանամը, վաճառականը ին-
քն իւրեան մտածեց՝ որ ալլաբանօրէն փորձէ՝ տեսնի թէ,
ստուգ սա Ղարիբի սիրահարն է՝ թէ ոչ:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Ես մի որդի ունիմ, եկ դու նորան առ,
Ինչի՞ ես որոնում այդ ապերախոր
Քեզի համար անեմ հարսանիք պայծառ,
Ինչի՞ ես որոնում այդ ապերախոր:

Ս Ա Ն Ա Մ Ը

Խօսքերդ չ'կշռելով՝ կարաւանապետ,
Խփեցիր իմ փափուկ սրտիս սուր ու նետ,
Ինչպէս ոսկին փոխեմ ես արճիճի հետ,
Ասա իմ սիրելոյս թող չ'մնայ՝ գայ:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Ինձանից մի ցաւիր, քոյր անուշ, անբիծ,
Գտնելով սիրելիդ կուղարկեմ թող գայ.
Սրտիս վերայ դրիր մի ծանր կսկիծ,
Գտնելով սիրելիդ, կուղարկեմ թող գայ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Եօթը ամ դուրս գալու ես չեմ փափագել.
Սգուրների նման սեւեր եմ հաղել.
Կարծես թէ ինձ համար արեւ չէ ծագել,
Ասա իմ սիրելոյս թող չ'մնայ գայ:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Նժոյգ ձի նստելով սուր առնեմ կտրուկ,
Գալող գնացողից հարցնեմ յատուկ.
Սիրելոյդ անուն մի պահիր ծածուկ,
Գտնելով սիրելիդ կուղարկեմ թող գայ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Եօթը տարի է չկայ նրանից համբաւ
Թէ դադանիքս ասեմ ամօք է և ցաւ.
Շահ-Սահամի կէսը Ղարիբն է իրաւ.
Ասա իմ սիրելոյս թող չ'մնայ գայ:

Այս խօսքերը աւարտելուց յետոյ՝ Սանամը վաճառականին. — «Ո՛հ տէր իմ, եթէ մեզ մի ճար լինելու է, քեզանով պէտք է լինի» և շատ խնդրեց: Վաճառականը ասաց. — «աղջիկս, դուք ամենեւին հոգս մի անէք, ես ազնիւ խօսք եմ տալիս, որ անպատճառ գտնեմ և ուղարկեմ: Երգի մէջ ջեզ ասած խօսքերս հեզնութիւն էին. ես ոչ աղայ ունիմ և ոչ աղջիկ, այլ միայնակեաց ամուրի մարդ եմ և ճանապարհորդութեան սիրահոր մէկը»: Սանամն ասաց. — «Մեծապատիւ պարոն, եթէ Ղարիբի համար հինգ ոսկի ծախս ունեցար, կըզնապատիկը կը հատուցանեմ»: Այս ասելով՝ հանեց ծոցից այն ոսկեայ թասը և մի կնիք, տուեց վաճառականին և ասաց. — «Եւր որ գնաս, այս թասով ժողովրդին ձրի օշարակ բաժնիր, ով որ այս թասին տէր եղաւ, փողպատիցը բռնիր ամուր, իմացիր որ նա է Աշըղ-Ղարիբը»: Վաճառականը պայման անելով բռնեցը բարձեց և բնկաւ ճանապարհ մի քանի օրից յետոյ հասաւ Էրզնրում: Այդ քաղաքի մեծ հրապարակի մէջ սկսեց օշարակ պատրաստել և բաժանել անց ու դարձ անողներին: Առաւօտից մինչև երեկոյ — «Ղարիբի կենացը» ասելով խմում էին, բայց ոչ ոք թասին տէր դուրս չեկաւ: Ղարիբի մասին շատերին հարցրեց վաճառականը, բայց ոչ մի տեղեկութիւն չստացաւ: Այդ տեղից բռնեցը բաժնալով գնաց Երուսաղէմ, Շամ, Եմէն, Արաբիայի քաղաքները շրջեց, բայց ոչ մի տեղ Ղարիբի աջունը չկարողացաւ իմանալ: Մի ժամանակից յետոյ ուղևորուեցաւ գէպլի Հալէպ. սակայն վաճառականի քառասուն կարգ զբաւորից մի

կարգն էր մնացել: Մի օր վաճառականը այգիներն մէջ ման եկած ժամանակ այսպէս էր մտածում.— «Եթէ Աշըղ-Ղարիբին այստեղ էլ չ'գտայ՝ իմ դրութիւնս ի՞նչ պիտի լինի և յետոյ Շահ-Սանամին խօսք հասկացնելը շատ դժուար է»: Մէկ էլ տեսաւ, որ իրեն մօտիկ մի քանի տղալք ընկոյզ են խաղում. մօտեցաւ նոցա նախում էր, դոցանից ամենափոքրը ամենքին տարաւ, այնպէս որ՝ ոչ մէկի մօտ մի հատ ընկոյզ չ'թողեց: Վաճառականը զարմացած նայում էր. այն փոքրիկը նկատելով վաճառականին ասաց.— «Ի՛նչ ես նայում»: Վաճառականն ասաց.— «Դու սոցանից ամենափոքրն ես և խաղի մէջ բոլորին յաղթեցիր. դորա համար զարմանում եմ»: Տղան ասաց վաճառականին.— «Ի՛նչու ես զարմանում, խելքը տարու մէջ չէ, ալլ գըլ-խու մէջն է: Աշըղ-Ղարիբն էլ հաստիով փօքր էր, բայց փաշայի բոլոր աշուղներին յաղթեց և այժմ նոցա գլխաւորն է եղել»: Այս խօսքերը սր լսեց վաճառականը, խելքը գլխից թռչելով ասաց.— «տղաս, ահա քեզ մի ոսկի, Աշըղ-Ղարիբը ինձ ցոյց տուր»: Տղան ոսկին առաւ, վաղեց Սւլան-Ղազայի սրճարանը և Ղարիբին դուրս կանչելով ասաց.— «այգիների մէջ մի վաճառական քեզ խնդրում է տեսնել»: Տղան բերեց Ղարիբին վաճառականի մօտ և հեռացաւ: Աշըղ-Ղարիբն ասաց.— «հրամայեցէք գնանք մեր սրճարանը, և վաճառականի հետ գնացին սրճարան: Ղարիբն ասաց վաճառականին.— «բարով էք եկել, հազար բարի, բարի լուր էք բերած մեզ համար, ասելով, սկսեց հիւրասիրել նորան: Վաճառականն ասաց.— «ես ջուր խմելուց առաջ սովորութիւն ունիմ օշարակ խմելու և իմ ձեռքովս շաքարը հալեցնելը իմ փափագն է: Ինձ մօտ շաքար էլ ունիմ, միայն դուք հրամայեցէք մի անգիւն քաշուենք: Ես իմ ձեռովս օշարակ պատրաստեմ և անոյշ անենք, այնուհետեւ կըխօսակցենք»: Աշըղ-Ղարիբը յօհարացաւ և ասաց.— «շատ լաւ»: Քաշուեցին մի անգիւնում նստեցին:

Վաճառականը շինեց օշարակը, մի թաս ինքը խմեց և յետոյ կրկին լցրեց, Սանամի տուած կնիքը ձգեց ոսկէ թասի մէջ և տուեց Աշըղ-Ղարիբին. օշարակը խմած ժամանակը տտամներին մի բան դիպաւ, ձեռքն առաւ տեսաւ որ իւր կնիքն է, ուշի ուշով թասին մօտիկ տուեց, տեսաւ որ իւր երազի մէջ ստացած ոսկեայ թասն է, իսկոյն թասը և կնիքը դրեց իւր ծոցը: Վաճառականն ասաց «Այս ի՛նչ բան է, ուրիշները սարերի գլուխն են մարդ կողոպտում, իսկ դուք սրճարանի մէջ էք կողոպտում. տոյս ինչ զարմանալի բան է»: Ղարիբն ասաց.— «Այս թասը և կնիքը ինձի բերելդ հասկացայ և շատ ու շատ ուրախացայ. աշխարհի մէջ առողջ և աջողակ լինես»: Նստ շնորհակալութիւն տալուց յետոյ առաւ սազը ձեռքը և երգով ասաց վաճառականին—

Ղ Ա Ր Ի Բ Ը

Բարով հազար բարի, տէր վաճառական,
Ասա, տէր իմ, ինչպէս տեսար Սանամին,
Նորա սէրը սլափի մէջն է անսահման,
Ասա, հոգիս, ինչպէս տեսար Սանամին:

Վ Ա Ծ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Տէրը քեզ ուղարկէ Սուրբ Սարգիսը քաջ,
Մի մնար, ով Ղարիբ, գնա երկիրդ.
Յուրով եմ որ գործդ գնայ գէպի աջ,
Մի մնար, ով Ղարիբ, գնա երկիրդ:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ելմը դու Թիֆլիսի սարը ահագին,
Դու նայեցիր արդեօք քաղաքի չորս դին.
Ծաղկած էր սիրելոյս պարտեզը, այգին,
Ասա պարոն, ինչպէս տեսար Սանամին:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Իմ ճամբորդ լինելս իմացան եկան,
Սրախս մէջը թողին ցաւի հետք՝ նշան.
Մայրդ, քոյրդ խելքս զլիկցս առան,
Մի ֆնար, ով Ղարիբ, զնա երկիրդ:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Սիրունիս ուրախ էր, թէ շատ տրտում էր,
Երեսը ծալը կտր, թէ անխնդում էր.
Շահ-Սանամի լեզուն ճարտար խօսում էր,
Ասա, տէր իմ, ինչպէս տեսար Սանամին:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Այնտեղ որոնում են քեզ ինչպէս կորած,
Թշնամբք ածունդ հանել են մեռած.
Մայրդ, քոյրդ, սիրունիդ սե են հագած,
Մի ֆնար, ով Ղարիբ, զնա երկիրդ:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Տէր իմ, Թիֆլիսի մէջ զեռ ցնծութիւն կայ,
Կուր գետը զարնան մօտ շատ կ'բարձրանայ,
Սիրունիս ինձ համար կուլար թէ չէր լայ.
Ո՛հ, ասա, տէր, ինչպէս տեսար Սանամին:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Հագել էր հասարակ, թողած կերպասը,
Բազմացել էր մօրդ մաղձը, մաղասը.
Սանամի ինքը տուեց ինձի այս թասը,
Մի ֆնար, ով Ղարիբ, զնա երկիրդ:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Սիրունիս զեռ նոյն տեսակ զեղեցիկ է,
Թառամել է, թէ հասակը ծաղիկ է.
Սանամը հանրս է թէ էլի աղջիկ է,
Ասա, պարոն, ինչպէս տեսար Սանամին:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Շահ-Վալատը Սանամին տուել է նշան,
Առարկայ է եղել հարսնախօսութեան.
Քառասուն օր նորից զրուել պայման,
Մի ֆնար, ով Ղարիբ, զնա երկիրդ:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ո՛հ պարոն, իմ կրծքիս զրիւ տաք երկաթ,
Քու ամեն խօսքերդ մէկ մէկ սուր մախաթ,
Մայրս, քոյրս, Սանամ հագել են սե լմթ,
Տխուր տրտում տեսար զու իմ նազելին:

Վ Ա Ճ Ա Ռ Ա Կ Ա Ն Ը

Յոյց կուտայ Սանամի համեստ պառկերը,
Հաւատարիմ, անկեղծ, չկայ ընկերը,
Լալով կուրացել է մօրդ աջքերը,
Մի ֆնար, ով Ղարիբ, զնա երկիրդ:

Այս երգերից յետոյ Ղարիբն ասաց վաճառականին.—
«Ո՛հ, սլարոն վաճառական, այդ լուրերն ինձ բերելու
տեղ, երանի երկու տրամ թոյն բերէիր, և այս աշխարհի
ցաւերից ազատուէի, ինչ լաւ բան կլինէր... Բայց ամե-
նազգուարն այն է, որ փաշան ինձ չի թողնի, որովհետեւ
ես ասել եմ որ ոչ ոք չունիմ»: Վաճառականն ասաց,—

«Որդիս, քառասուն կարգ զբառոտի բեռից մի բեռ ապրանք-
քըս մնայ. այժմ այն բեռն էլ կծախսեմ և կուղարկեմ քեզ
երկիրդ»։ Արգարե ծախեց և մի քանի ընծաներ պատրաս-
տելով ներկայացաւ Փաշային։ Փաշան տեղը ցոյց տուեց
նստելու, բայց չ'նստաւ. նորից կրկնեց, դարձեալ մնաց
կանգնած։ Փաշան հասկացաւ որ խնդրելու բան ունի՝ ա-
սաց.— «պարոն նստեցէք, ձեր պահանջը չի մերժուի»։
Վաճառականը նստեց։ Մի սուրճ խմելուց յետոյ՝ Փաշան
հարցրեց.— «Ինչ է ձեր բողձանքը»։ Վաճառականն ա-
սաց.— «Վսեմափալլ տէր իմ, ձեր երգիչների գլխաւոր Ս-
շըղ-Ղարիբի երկիրը հանդիպեցայ. գալու ժամանակ վրա-
նումս նստած էի, երբ Ղարիբի կուրացած մայրը, քույրը
և իւր նշանածը, սիրոյ կրակով վառուած՝ վրանիս մէջ
մտնելով, հազար տեսակ լաց ու հառաչանքներով իմ սիր-
տըս կտոր կտոր արին։ Սորան ազատելով մի փոքր ճա-
նապարհածախք պարգեւեցէք և ուղարկեցէք իւր երկիրը,
փոխարէնը կտանաք նորա գերդաստանի օրհնութիւնը»։
Փաշան երբ որ լսեց այս խօսքերը՝ հրամայեց Ղարիբին
կանչել։ Ղարիբը ներկայացաւ։ Փաշան ասաց Ղարիբին.—
«ես քեզ առաջին անգամ ճանաչելուս չ'հարցուցի՝ թէ
տուն, տեղ, գերդաստան ունի՞ս. դու ինձ խաբեցիր թէ
չունիմ։ Դարձեալ ասացի քեզ ձի, փող տամ՝ գնա քո
երկիրդ. դու չընդունեցիր և մինչև այժմ այստեղ մնալով
ինձ անիծելու պատճառ դարձար... Բարկացաւ հրամայեց
գահիճներին որ ասեն գլխատեն։ Այնտեղ գտնուող ժողո-
վի անգամները և վաճառականը միաբերան ասացին. տէր,
առաջ մեր գլուխները կտրել տուր, յետոյ Ղարիբինը»։ և
քույրը միասին ընկան փաշայի ոտքը, խնդրեցին։ Դէլի-Սէ-
լիմը երբ որ լսեց այս լուրը, կանչեց իւր մօտը իւր նը-
ման տասը դէլիներ և ասաց.— «Թէ որ փաշան մեր խըն-
դերը մերժեց, իւր խօսքին հաստատ մնաց, Աշըղ-Ղարի-
բին մի վնաս հասցրեց, մենք էլ Հալէպը տակն ու վրայ

կանենք»։ Այսպէս պայման արին, եկան փաշայի դուռը։
Փաշան մահուան վճիռը փոխեց և ասաց Ղարիբին.— «քեզ
այս ժողովին, վաճառականին և Դէլի-Սէլիմին խնայեցի,
բայց այս ժամին պէտք է Հալէպից դուրս գաս. մի ժա-
մից աւելի լետանալդ լսեցի, այնուհետև ոչ ոքի ազաչան-
քին չը պիտի գիջանեմ, և անշուշտ իմ վնասը քեզ կհաս-
ցընեմ. շուտով հեռացիր»։

Երբ որ փաշան այս խօսքերն ասաց վերջացրեց Ղա-
րիբը սաղն առաւ և երգեց—

Խղճա Տէր իմ, խղճա իմ դրութեանս,
Խնդրել է սիրուհիս, որ գնամ շուտով.
Արա ողորմութիւն, բարի իշխանս,
Խնդրել է սիրուհիս, որ գնամ շուտով։

Եկաւ դարուն թռչունը բարձին աղաղակ,
Կրսպասէ նաղելիս տխուր, միայնակ.
Շահ-Սանամից ինձ՝ եկել է մի նամակ,
Խնդրել է սիրուհիս, որ գնամ շուտով,

Աչքս արտասուալի սիրտս անապատ,
Գթա, մի անարգեր սէրս անարատ.
Պարգևատրէ ինձ, տէր իմ դթառատ,
Խնդրել է սիրուհիս, որ գնամ շուտով,

Ղարիբի սրտում կան ցաւեր հազար
Քեզանից ցաւերիս խնդրում եմ մի ճար.
Ջլինի Սանամին առնէ մի օտար,
Խնդրել է սիրուհիս, որ գնամ շուտով։

Այս երգն աւարտելուց յետոյ՝ փաշան կանչեց ախո-
ռապետին և ասաց. «Ղարիբին մի ձի տուր, որ թռչի ա-
րագ, թռչունի նման»։ Ախոռապետը կատարեց հրամանը

անյապաղ: Այնպիսի մի գեղեցիկ ձի պատրաստեց, որ լեզուով պատմեւ անհնար է: Ղարիբը իսկոյն համբուրեց փաշայի թղանցքը և տուեց իւր վերջին հրաժարականը: Փաշան զգացուած ասաց՝ Ղարիբին.— «մի անգամ էլ երգէ ձայնդ լսեմ, այնուհետեւ Աստուած հետդ լինի»: Ղարիբը սկսեց իրգել—

Ես մի դանգատ ունիմ բաղդի շրջանից,
Բաղդը ինձ հետ թշնամացաւ՝ ողբում եմ.
Վախում եմ անջատուեմ իմ սիրեկանից,
Արեւ շուտ մայր մտաւ ողբում եմ:

Սգւոր է սիրունիս, դիտեմ անշուք է,
Թէ չսփոփեմ նորան, ինձ համար թուք է.
Հիմայ ճանապարհը ձմեռ է, բուք է,
Հայրենիքս հեռու ընկաւ, ողբում եմ:

Սրտիս կայծն է անկեղծ սիրոյ արգասիք,
Բաղդի ալիքներուն դարձայ խաղալիք.
Ցանկանում եմ շուտով հասնել հայրենիք,
Ժամանակը երկարացաւ, ողբում եմ:

Ղարիբ, սիրոյ հուրը քու կեանքդ մաշեց
Դէպի օտարութիւն տարաւ քաջքեց.
Ճանապարհս երկար սպասեց, աշեց,
Ո՛հ, սիրունիս ստրջացաւ ողբում եմ:

Փաշան ասաց.— «որդիս գնաս բարեաւ», Ղարիբը նորա ձեռքը համբուրեց, վաճառականի հետ եկաւ գմբեթաւոր պանդոկը: Ղարիբի եօթ տարուայ աշխատանքը եօթ արկղիկ ոսկին այդ պանդոկումն էր. մէկ արկղիկը ընծայեց վաճառականին, մէկ արկղիկը լցրեց իւր պարկը, և մէկ արկղիկն էլ Շահ-Սանամի համար հարսանեաց հանգերձ-

ներ պատրաստեց: Աջդ-Ղարիբի Հալէպի մէջ եօթը արկղիկ ոսկի ունենալը, պահարանի մէջ փակուած լինելը՝ և մինչև հիմայ ոչ որի չբանալը, մինչև այսօր էլ ժողովրդի մէջ խօսուում է: Այնուհետեւ եկաւ Ասլան-Դադայի սրճարանը, հաշիւը վերջացրեց, ինչ որ իրեն բաժին աւելացաւ՝ ընծայեց նորան: Դեղի-Սելիմի և միւս ընկերների հետ համբուրեցելով, առաւ սաղը ձեռք և սկսեց երգել—

Հայրենիքից տուայ բարե
Ժամանակ է, պէտք է գնալ.
Այստեղ կենալ այսուհետեւ,
Հաւատակ է պէտք է գնալ:

Սահեցաւ բաղդս, անիւս,
Մաքրեցի ամեն հաշիւս.
Հայրենիքում իմ պատիւս
Ոտքի տակ է, պէտք է գնալ:

Մաշուեցաւ սիրտս, ուղեդս,
Նուառացայ ես ուժեղս,
Առանց ինձի տաշտ ու տեղս,
Աւերակ է պէտք է գնալ:

Ղարիբը քաջ գիտէ իրան,
Ունի անուկը մի դերդաստան,
Շահ-Սանամը տնօրնական—
Թիայնակ է պէտք է գնալ:

Այս երգը աւարտելուց յետոյ՝ ընկերները լսլով ձուտապարհ դրին և ի սրտէ մաղթեցին աջողութիւն և բաքի ճանապարհ: Ղարիբը հեծաւ ձին և ընկաւ ճանապարհ: Ճանապարհին պատահեց մի աղբիւրի՝ որտեղ լիջաւ ձիուց. ձեռքերը և երեսը լուաց, առաւօտեան աղօթքն արեց: Սրիւր նոր էր ծագել՝ դարձաւ Հալէպ քաղաքին նա-

յեց, որ կարծես տխուր տրտում իրեն էր նայում՝ ասաց.
— Եով արիւնառու շալէպ, քեզ համար էլ մի քանի խօսք
ասեմ. ինձանից յետոյ քարդ քարի վրայ չ'մնայ և սկսեց
երգել—

Եկայ, ահա կրկին կերթամ,
Հաստատ մնաս, Հալէպ քաղաք,
Հացդ, աղդ տուին ինձ համ,
Տեսայ շնորհ, Հալէպ քաղաք:

Քեզ ասում են Սրաբիա,
Շուրջդ բազում պարտէզներ կայ,
Շահ-Սանամից նամակ առայ,
Ել չեմ մնայ Հալէպ քաղաք:

Դէպի քեզ շատ մարդիկ կուգան,
Ոմանք փողի տէր կը դառնան,
Շատերն էլ թշուառ կմնան
Ես գոհ կերթամ, Հալէպ քաղաք:

Աշըղ-Ղարիբն ընկաւ ճամբայ,
Տէրն է օգնականը նրա
Ես գնում եմ երկիր հիմայ,
Դու այստեղ կաց, Հալէպ քաղաք:

Այս երգն աւարտելուց յետոյ՝ ձին հեծաւ ընկաւ ճա-
նապարհ. հինգ տասն օր գնալուց յետոյ մի օր ձին տրա-
քեցաւ. Ղարիբը մնաց հետիօտաւ. Այդ անբաղդութեան մէջ
հառաչելով, առաւ սաղը և սկսեց երգել—

Մի ակնարկով չորս անկիւն տեսնող,
անդ ուխտ եմ, հայրենիք ուղարկէ դու ինձ,
Ինքդ ես եղել այս սուրբ սէրը ինձ տուող,
Պանդուխտ եմ, հայրենիք ուղարկէ դու ինձ:

Ինձի պաշարել են հոգսերը հուժկու,
Մալորուած մնացի երկրից հեռու.
Ճամբորդների պաշտպան Արև կենսատու,
Պանդուխտ եմ, հայրենիք ուղարկէ դու ինձ:

Օգնէ, հզօր թագաւորաց թագաւոր,
Անտէր անօդնական մնացի մօլոր,
Յովհաննէս-Մկրտիչ, Թադէ, Գրիգոր,
Պանդուխտ եմ հայրենիք ուղարկեցէք ինձ:

Սուրբ Տրդատ, Սուրբ Թէոդորոս, Սուրբ Աբգար,
Այս ամայի վայրում ցոյց տուէք հնար.
Սուրբ Գէորգ, Սուրբ Սարգիս, Վարդան Զօրափար,
Պանդուխտ եմ, հայրենիք ուղարկեցէք ինձ:

Փրկիչ, ինձ փրկելով իղձս կատարէ,
Մարմինս ճնշուած, հոգիս տկար է,
Երկնից պատգամաբեր Մովսէս մարդարէ,
Պանդուխտ եմ, հայրենիք ուղարկեցէք ինձ:

Հեռու, օտար երկրում ընկած միայնակ,
Չորս կողմս ամայի անմարդաբնակ.
Հասէք օգնութեան Ղևոնդ, Սուրբ Սահակ,
Պանդուխտ եմ, հայրենիք ուղարկեցէք ինձ:

Ղարիբն եմ սրտիս մէջ վառուում է հէոց,
Ընկայ դրութեանը թշուառ նեղելոց.
Ստեղծող և հաստիչ ողջ արաբածոց,
Պանդուխտ եմ, հայրենիք ուղարկէ դու ինձ:

Այս երգից յետոյ նայեց չորս կողմը. բայց ոչ ոք չը-
կար. շալակեց իւր պարկը և ճանապարհ ընկաւ. երեք օր
և երեք գիշեր գնաց քաղցած և անկարող. չորրորդ օրը
հակառակ հանդիպեց մի մեծ գետի, ոչ մի անցք չը գտաւ.

պարկը վայր դրեց քարերի մէջ, սկսեց ողբալ և արտա-
ուել: Յետոյ տուաւ սաղը ձեռը և երգեց—

Օտարութեան մէջը, անծանօթ երկրում,
Բաղդը ինձի քարին խփեց, ինչ անեմ
Ո՛հ, փափագս թերի մնաց իմ սրտում,
Բաղդը ինձի քարին խփեց, ինչ անեմ:

Մահը եկաւ գլխիս վերայ կանգնեցաւ,
Քաղցը կեանքս աժան դնով ծախուեցաւ,
Անգութ բաղդը ինձ այս աւուր հասցրաւ,
Իմ աշխատած արծաթ, ոսկին, ինչ անեմ,

Իմ բաղդս ինձանից դարձրուց երես,
Մանամի պատկերին մնացի անտես,
Արդեօք պիտի տեսնեմ հարսանիքը ես,
Աչքերս արտասուօք լցուաւ, ինչ անեմ:

Ա՛խ, թէ սէրդ ինձի թե տար, ով շքեղ,
Թռչի դէպի քեզ դայի փառահեղ.
Թող ասեն Ղարիբը մահացաւ այստեղ,
Իդնս մնաց դատաստանին, ինչ անեմ:

Այս երգից յետոյ դարձեալ շուրջը նայեց, բայց ոչ
ոքի չտեսնալով՝ օգնութեան յոյսը կտրեց. մի գիշեր ես
չարչարուելով ման եկաւ՝ անցքը չգտաւ: Նորից սաղը ա-
ռաւ ձեռքը և երգեց—

Խնդրում եմ, աղերսում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն
Ողբալով մորմոքում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն.
Նրկիւղդ, սուրբ անունդ, սրտիս վերայ գրուած կայ միշտ,
Բազկատարած կանչում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն:

Քո Ղարիբն եմ խղճալի, ցոյց տուր Տէր իմ, մէկ ճանապարհ:
Հաւատում եմ, որ քո մօտդ չկայ մէկ բան անհար:

Այս ամայի-անապատ տեղում ինձի մահ մի տար,
Ես չափազանց տրտում եմ, Տէր իմ, քեզանից օգնութիւն:

Այս խօսքերից յետոյ յետնայեց տեսաւ սր մէկ սղի-
տակ ձիաւոր էր գալիս, նիզակը ճոճացնելով դէպի իրան:
Կասկածի մէջ ընկաւ թէ՛ մի դուցէ այս մարդը ինձ կ'մոա-
սէ այս ամայի տեղում, սկսեց լաց լինել և Աստուած
կանչել: Մինչդեռ Ղարիբը այսպէս էր մտածում, ձիաւորը
հասաւ իրեն և ասաց. — «այս անմարդաբնակ տեղում ինչ
ես անում»: Ղարիբն ասաց. — «ընկերներս կ'աքցրի և ճա-
նապարհից մոլորուելով հանդիպեցայ այս գետին»: Ձիա-
ւորն ասաց. — «դու ընկեր չունիս, ինչ տեղացի ես»: Ղա-
րիբն ասաց. — «երգումցի եմ»: Ձիաւորն ասաց. — «ձեռքդ
տուր ինձ»: Ղարիբն իսկոյն հասկացաւ, որ ձիու գաւազի
վերայ պիտի նստեցնէ՝ ասաց. — Հայր, մի քիչ համբերէ
այս քարերի մէջ մի պարկ ունիմ առնեմ»: Գնաց պարկը
բերեց ձիաւորի մօտ: Ձիաւորը ձեռքից քաշեց ձիու գա-
ւազը և ասաց. — «խփիր աչքերդ». և քիչ յետոյ ասաց—
«բաց աչքերդ»: Ղարիբը բացեց աչքերը. և իրան էրգրումի
մէջ տեսաւ: Գնաց եկեղեցի, Աստծուն աղօթեց այդ հրաշ-
քի համար, մի քիչ նախաճաշիկ անելուց յետոյ շալակեց
պարկը, և ընկաւ ճանապարհ: Քիչ գնալուց յետոյ դար-
ձեալ նոյն ձիաւորը հանդիպեցաւ, և Ղարիբին յանդիմա-
նալով ասաց. — «ով երիտասարդ, ես քեզի չհարցրի թէ որ
երկրացի ես, դու էլ ինձ ասացիր էրգրումցի եմ, հիմա
էլ ճուր ես գնում, ինչու սուտ խօսեցիր»: Այս անգամ աս-
աց Ղարսեցի եմ: Կրկին ասաց. — «տուր ձեռքդ». առաւ
գաւազին և ասաց. — «աչքերդ խփիր». աչքերը խփեց
Ղարիբը. — «բաց». բացեց և իրան Ղարսում տեսաւ,
«Գնա որդիս, ասաց ձիաւորը, Աստուած քեզ յաջողէ»
և աներևոյթացաւ: Ղարիբը երբ մտաւ Ղարս՝ Տաճկաց ին-
տերոյդ ժամն էր, մալլաները նոր սկսել էին խալաւներին

աղօթքի հրաւիրել: Մի քիչ ման եկաւ, ճաշեց, գոհացաւ
Աստուծոն, և դարձեալ ճանապարհ ընկաւ: Ճանապարհին
դարձեալ երևեց այն սպիտակ ձիաւորը. բայց այս անգամ
կասկածեց իւր խաբելու համար, որ անսլառճառ ձիաւորը
կսպանէ իրան և Աստուած էր աղաչում: Երբ ձիաւորը
հարցրեց.— «այ աղայ, այս քնչ է քու արածը ինձ. քանի
անգամ է խաղեր ես խաղում ինձ հետ, իրան առ որ-
տեղացի ես, եթէ ոչ, այս նիղակը սրտիդ մէջ կցցեմ»:
«Աղաչում եմ, հայր, քեզ ճշմարիտն ասեմ, Թիֆլիսեցի
եմ»: Զիաւորը նորից առաւ ձիու վերայ Ղարիբին, աչ-
քերը խփեց և բացեց, իրան Կոջորի գլուխը գտաւ, ուր
արդէն Թիֆլիսը երևում էր: Զիաւորն ասաց.— «մայրդ
քո կարօտդ քաշելով և լալով աչքերը կուրացել են».
Թղթի մէջ փաթաթած մի դեղ հանեց զրպանից, տուեց
Ղարիբին, ասաց.— «այս դեղը ջրի մէջ լուծելով կը քսես
մօրդ աչքերին, յոյս Աստուած կը պահես»: Այս խօսքե-
րից լետոյ աներևոյթացաւ: Ղարիբն այստեղ ձիաւորի
Սուրբ Սարգիս լինելը հասկացաւ: Օրը ուրբաթ էր, երե-
կոյեան կրակները վառուել էր, քաղցրահնչիւն զեփիւռը
Սանամի բուրգէն (անպէր) խոպոպիկների հոտը հասցրեց
Ղարիբին, արտմախառն ուրախութեամբ լցուելով առաւ
սաղը և երգեց—

Հրաշքով ես եկի տհա,
Փառք, որ տեսայ Թիֆլիս քեզի.
Հողիս սրտիս մէջ կը ցնծայ,
Փառք որ տեսայ Թիֆլիս քեզի:

Դեռ նոր է եղել իրիկուն,
Սանամը նստած է արթուն,
Երևեցաւ տունը սիրուն,
Փառք, որ տեսայ Թիֆլիս քեզի:

Այս երեկոյ հիւր եմ ձրի,
Առանց հացի, առանց ջրի.
Ոտքս հողիդ վերայ դրի,
Փառք, որ տեսայ Թիֆլիս քեզի:

Ղարիբն եմ, գիտեմ երախտիք,
Իմ սիրուն քաղցրիկ հայրենիք.
Շահ-Սանամին տուր աւետիք.
Փառք որ տեսայ Թիֆլիս քեզի:

Երբը վերջացնելուց յետոյ պարկը շալակեց, Կոջորից
ճանապարհ ընկաւ գէպի Թիֆլիս, հասաւ այգիները, երե-
կոյեան զով ժամանակը վարդերը բացուած, սոխակները
սկսել էին իրանց վառվռուն երգերը: Ղարիբը սոխակների
ձայնին չդիմանալով առաւ սաղը և սկսեց երգել.—

Գնացէք, ննջեցէք մէջը պարտէզի,
Մի երգէք, սոխակներ, սիրտս ուրախ չէ,
Գուցէ ընկերներն պարուստ են ձեզի,
Մի երգէք սոխակներ, սիրտս ուրախ չէ:

Իսկ երգում էր թէ գարունը մօտեցաւ,
Բայց չգիտէք վարդը բացուեց թագ կացաւ.
Ո՞վ գիտէ սիրուհիս ինձի մօտեցաւ,
Մի երգէք սոխակներ, սիրտս ուրախ չէ:

Իմ կեանքի նման է մի քիչ ձեր կեանքը,
Զեզի աշխոյժ կուտայ, վա ղի սճիսն.
Կատարուել դեռ իմ սրտիս բաղձանքը
Մի երգէք սոխակներ, սիրտս ուրախ չէ:

Հալէպն ինձի եղաւ դժոխք ու կրակ,
Զօր գիշեր արեցի լաց ու աղաղակ.
Եռնէ բերան, ո՞հ լուէ, սոխակ
Երգէք սոխակներ, սիրտս ուրախ չէ:

Այս երգն աւարանց, մտաւ թիֆլիս. եկաւ Կուր գետը ջուր խմեց, լուացուեց, հանգստացաւ տեսաւ իւր քրոջ Նարգիզին կուժը շալակած և սև հագած ջուրն է դալիս: Եղբօրը տեսնելով՝ իսկոյն վազեց տուաջ, ասելով.— «ճե եղբայրս...» խօսքը բերանումը մնաց. կասկածելուց յետ քաշուեց, գուցէ սխալուում եմ. ինքն իրան ասաց. որովհետեւ, մարդ մարդու նման շատ է լինում: Դարձեալ սկսեց ուշի ուշով նայել. ջրի ածելու ժամանակ քոյր և եղբայր ապշած միմեանց վրայ էին նայում: Նարգիզն ասաց.— «այ մարդ ինչ շատ նայեցիր, մի քիչ այն կողմը կաց կուժս լցնեմ»: Աւարիբն ասաց.— «նորա համար եմ նայում, որովհետեւ այստեղ եկող բոլոր աղջիկները դարձաբուսած են, իսկ դու սև ես հագած, վիզդ ծուռ, խեղճ-խեղճ ման ես գալիս, ի՞նչ է սլաածաոր»: Աղջիկը մէկ այնպէս ախ քաշեց, որ սիրտ էր կտրտում և ասաց.— «ես մէկ Աշղը-Ղարիբ անունով եղբայր ունեի, բաւականին ժամանակ է՝ որ օտարութեան մէջ էր. մօտ ժամանակներումս Շահ-Վալաաթ նորա մահուան լուրը և արիւնոտ շապիկը բերեց, հիմա նշանածը ևս տուած է նորան. հարսանեաց պատրաստութիւնը եղել է, այս գիշեր էլ հինա դնելու գիշերն է: Մայրս էլ լալով ու մտածելով աչքերը կուրացել է. այս աշխարհում, այս տխրալի դրութեան մէջ, ես սև չհագնեմ ապա ճով հագնի»: Աւարիբն ասաց.— «Աշղ-Ղարիբը ողջ է և այսօր կամ վաղը այստեղ կըլինի, այդ սուտ լուրը հաղորդողի աչքերը կուրանայ...» Երբ որ Նարգիզը այս խօսքերը լսեց, վազեց տուն և մօրն ասաց.— «աչքդ լոյս, մայրիկ, եղբայրս Ղարիբը ողջ է եղել, չէ՞ մեռած, այսօր կամ վաղը պէտք է գայ: Կուր գետի մօտը մի մարդ կար, այն մարդը ինձ աւետեց. դեռ ևս այնտեղ է, շատ նման է եղբօրս, պէտք է որ նա լինի. բայց ինքը պահում է իրան: Ստորոն այս գիշեր հիւրասիրենք. եթէ ինքն էլ չէ՝ գոնէ կարող ենք լիապէս

տեղեկութիւն ստանալ եղբօրս մասին»: Այդպէս բան չի լինի, աղջիկ, վախենում եմ այդ դործի մէջ մի սատանայութիւն ունիս, այս վերջին թշուառութեանս վերայ կուզես նորից ցաւեր աւելացնել. և յայսպիսով մերժեց աղջկայ խօսքերը: Բայց այնքան թախանձեց, որ վերջապէս մայրը զիջաւ և ասաց.— «դէհ, գնա, բեր այդ մարդը տեսնենք»: Աղջիկը գնաց, առաջ ընկաւ բերեց. բայց Ղարիբը, իբրեւ օտար մարդ, դրանը կանգնեց: Աղջիկը մօրը իմացրեց. մայրն էլ ասաց.— «կանչիր ներս»: Աւարիբը եկաւ մօր ձեռքը համբուրելով նստեց: Մայրն ասաց.— «բարով հազար բարի եկար, սիրելի հիւր»: Մի փոքր հաց կերան, մի-մի սուրճ ևս խմեցին: Ղարիբը տեսաւ որ, ինչպէս ինքը իւր ձեռքովը սաղը կախել էր պատից՝ այնպէս հանելուկի նման կախուած մնացել էր: Կանգնեց գրկախառնուելով իջեցնելու ժամանակ, մի թելը դիտմամբ կտրեց.— «Վա՛հ այս սաղի մի թելը կտրուած է...»: Երբ որ սաղի թելի կտրուելու ձայնը իմացաւ մայրը՝ ասաց.— «այ, որդի երանի դու այս տունը չմանէիր, այդ իմ որդուս թանգագին սաղն էր, իւր ձեռքովը կախեց գնաց, հիմա դու եկար թելը կտրեցիր, ես սրդու ի՞նչ ասեմ»: Ղարիբն ասաց.— «ես չկտրեցի, դուցէ առաջուանից կտրած էր»: Մայրն ասաց.— «մենք այդ սաղին բացի չգիտէլը՝ մօտիցն անգամ անց չէինք կենում, հաստառ դու կտրեցիր»: Բաւական վիճելուց յետոյ՝ ասաց.— «որդի, ինձանից մի նեղանայ, ես էլ քեզի նման մի որդի ունեի, անունը Աշղ-Ղարիբ էր. երբ որ օտարութիւն գնալու եղաւ, այդ սաղը պատից կախելով, ինձ այս պատուէրը տուեց թէ՛— «մայրիկ, եթէ սաղս տեղիք վայր ընկնի և կտրուի կամ թելը կտրուի, իմացեք որ մեռած եմ», հիմա դու եկար սրդուս սաղը կտրեցիր. այդ բանը մեզ շատ ավերեցրեց»: Աւարիբն ասաց.— «այդ բանի համար ի դուր մի մտածիր. այսօր կամ վաղը որդիդ կուգայ. մայ-

րիկ, քեզանից խնդրում եմ, որ այս սաղը ինձ տաս մի
քիչ ածեմ, եթէ այս սաղին մի մաղաչափ վնաս տուի
այս պարկիս մէջը լիք ոսկի է, գրաւէ քեզ լինի»։ Սայրը
գիջանելով սաղը տուեց. Ղարիբը կանոնաւոր լարելով
սկսեց երգել.—

Ահա եկայ տունդ Հարազատ մայր իմ,
Ես ղարիբ եմ, ես ղարիբ եմ, ես ղարիբ,
Այս գիշեր քո մօտը հիւր պէտք է լինիմ,
Ես ղարիբ եմ, ես ղարիբ եմ, ես ղարիբ։

Մ Ա Յ Ր Ը

Գալած ճանապարհիդ ես լինեմ մատաղ,
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը.
Ման եկած տեղերում ծաղիկներ տամ շաղ,
Արդեօք երբ պիտի գայ որդիս Ղարիբը։

Ղ Ա Ր Ի Բ Ը

Հալէպի մէջ անցուցի եօթը գարուն,
Կանչեցի աշխոյժով երգեր վառվառուն,
Պիտի գգուեմ իմ նաղելու սիրասուն,
Ես ղարիբ եմ, ես ղարիբ եմ, ես ղարիբ։

Մ Ա Յ Ր Ը

Բացի Աստուած չունիմ պաշտպան ակնածու.
Աչքերէս ջրի տեղ արիւն կհեղու,
Այդ իմ որդուս սաղն է, որ ածում ես դու,
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը։

Ղ Ա Ր Ի Բ Ը

Փափուկ կնուագեմ՝ չեմ տայ չարչարանք,
Սաղին թէ սիմերին չի լինիլ տանջանք։

— 91 —

Հանգէսներուն միշտ տուել եմ սփոփանք,
Ես ղարիբ եմ, ես ղարիբ եմ, ես ղարիբ։

Մ Ա Յ Ր Ը

Ուղիղն առա, դու մի պահիր ինձանից.
Եթէ ոչ, կհեռացնեմ իմ տանից.
Որտեղ սրգիս բաժանուեցաւ քեզանից.
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը։

Ղ Ա Ր Ի Բ Ը

Չար թշնամին դաժան մահով չքանալ.
Որ քեզի այս աւուր հասցրել է նա.
Պարզ ասում եմ, գարձեալ դու չես իմանալ,
Ես ղարիբ եմ, ես ղարիբ եմ, ես ղարիբ։

Մ Ա Յ Ր Ը

Սանամին զրկում են հինայ այս գիշեր,
Բայց իմ որդիս չկայ, տներս է աւեր.
Սրտիս մէջը ցցեց թունաւոր նետեր.
Արդեօք էրբ պիտի գայ որդիս Ղարիբը։

Ղ Ա Ր Ի Բ Ը

Թող հասկանալ խաբս մտքով արթունը.
Իմ անուանս պէս է որդուդ անունը,
Կամ ճամբան է, կամ նստած է իւր տունը,
Ես ղարիբն եմ, ես ղարիբն եմ, ես ղարիբ։

Այս երգերն առացին, առայ Ղարիբի քոյր Նարգիզը.
Գարձեալ կասկածեց մտքում և ասում էր. գուցէ այս
մարդը հաստատ իմ եղբայրս է. բայց իրան պահում է.
Ես էլ մի քանի խօսք ասեմ կաբելի է իւր խօսքերից մի

Երեկ տարան Շահ-Սանամի օժիտը,
Ո՛ւր է չի երևում քաղցրիկ Ղարիբը:
Արի, ինձի ասա դու ճշմարիտը,
Ո՛ւր է չի երևում քաղցրիկ Ղարիբը:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Հեռու տեղից դարձաւ իւր օթեան,
Կամ եկել է կամ պիտի գայ Ղարիբը:
Սանամին գգուելու կլինի արժան,
Կամ եկել է, կամ պիտի գայ Ղարիբը:

Ք Ո Յ Ր Ը

Քեզի նման քաղցր էր երգը, նուազը,
Շատ էր սիրում նորան Քիֆլիս քաղաքը:
Ո՛հ, մեր տանը սիւնը, մեր տանը ճրագը,
Ո՛ւր է չի երևում քաղցրիկ Ղարիբը:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ղարիբին և ձեզի Տէրը պաշտպանէ,
Եղբօրդ վրէժը թշնամուց հանէ,
Կարծեմ, քոյր իմ, եղբայրդ ինձ նման է,
Կամ եկել է, կամ պիտի գայ Ղարիբը:

Ք Ո Յ Ր Ը

Նարգիզ, Տիրոջ դատաստանը ահեղ է,
Կ'ըտրճրանայ, ով արդար ու անմեղ է,
Սիրուս վկայում է, թէ այստեղ է,
Ո՛ւր է չի երևում քաղցրիկ Ղարիբը:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ղարիբը կըլինի ձեզի մօտ ներկայ,
Քոյր իմ նորա գալուն եղիւ աներկբայ:

Նստելով հրեղէն մէկ ձիու վրայ,
Կամ եկել է, կամ պիտի գայ Ղարիբը:

Այս երգը երգելուց յետոյ՝ քոյրը հաստատ հաւատա-
լով, որ այս եկողը իւր եղբայրն է, վազեց Շահ-Սանա-
մին իմաց տալու: Մտնելով կանանց սենեակը, Արեգնա-
զանին խնդրեց, որ իրան տանի Սանամի մօտը: Արեգնա-
զը Նարգիզին տարաւ Սանամի մօտ: Նարգիզը ներս մը-
տաւ Սանամի մօտ այն ժամանակ, երբ հաւաքուած աղջիկ-
ները հագցնում էին Սանամի հանդերձները, իսկ Սանա-
մը ասում էր.— «լաւ է ինձ հողի հետ պաւկուել, քան
թէ Շահ-Վալատի հետ: բայց եթէ տպրում եմ, գարձեալ
յոյս ունիմ Ղարիբի հասնելուն»: Նարգիզը մօտեցաւ ա-
ռանձին Սանամին ասաց.— «մեր տունը մի օտարական
մարդ է եկել, ասում է Ղարիբը ողջ է և այսօր կամ
վաղը գալու է: Ես հաստատ գիտեմ, որ նա եղբայրս է:
Իսկ թէ ի՞նչ պատճառաւ իրան պահում է՝ չեմ հասկո-
նում»: Այս ասաց և հեռացաւ: Սանամի սիրտը լցուելով,
առաւ սազը և երգեց—

Աղջիկները մխիթարանք չ'տուած
Մահս չ'ժամանած՝ Ղարիբը հասնէր:
Իմ մահիս մուրհակը, դեռ չ'հաստատած,
Ոսոխք դեռ չըպատած Ղարիբը հասնէր:

Գլուխըս իւր ծնկին առնէր սոխակս,
Ես լայի, նա սրէր լալագին ակս:
Գերեզմանի մէջը դրկէր դիակս,
Դեռ հողս չ'լցրած՝ Ղարիբը հասնէր:

Սանամի մայրը իրաւ հասնելով, յանդիմանեց ասե-
լով.— «Ի՞նչ էլի Ղարիբ, Ղարիբ ասել անցել ես. ով գի

տէ, նա օտարութեան մէջ մեռաւ, փտաւ, ինչ եղաւ:»
Այս խօսքերի վերայ կրկին սկսեց երգել—

Խղճա՛ գրութեանս, մայր իմ գովական,
Ինչ ուխտս ուրանալ կտեսնե՛ս արժան.
Չմեռնէի՛ կրկին ասէր «Սանամ ջան»,
Լեզուս չբռնուած Ղարիբը հասնէր:

Թող Սանամը այնտեղ հանգերձները հագնի սլա-
րաստուի մենք ընթերցողին տանենք Ղարիբի մօտ: Ղա-
րիբը տեսաւ որ մայրը կրկին չէ հասկանում իւր ասած-
ներից, սկսեց իւր սազը գովել և խօսքերով հասկացնել
թէ, ինքն է Ղարիբը.—

Օտար երկրից վերադարձայ.
Խօսիր մի լռիւր, իմ սազս.
Գգուելով քեզ ձեռս առայ,
Խօսիր, մի լռիւր, իմ սազս:

Լուս ես պահել քո թելերը,
Ապրիս, դու հոգւոյս ընկերը.
Հարստեանց մէջ իմ անցքերը,
Պատմիր, մի լռիւր, իմ սազս:

Ղարիբն եմ, դու մի մտածել,
Սկսէ ձայնդ տարածել.
Եօթը տարի է չեմ ածել,
Խօսիր մի լռիւր իմ սազս:

Այս խօսքերից յետոյ, դարձեալ մայրը չ'հասկացաւ:
Ի վերջոյ յանկարծ հարստեանց սրնդի և թմբուկի ձայնը
եկաւ տկանջին հասաւ, Ղարիբի խելքը գլխիցը թռաւ,
դարձաւ գէպի իւր քրօջը և ասաց.— «շատ ուրախ հար-
սանք է երևում, եթէ այդ հարստների տունը մօտ է,

գնանք այնտեղ»: Քոյրը տարաւ Ղարիբին հարստեանց
տունը իսկ ինքը վերադարձաւ տուն և իր մօրն ասաց.
— «այդ մարդը իմ եղբայրս է», և պնդում էր իւր խօ-
քը: Մայրը բարկացաւ աղջկայ վերայ և ասաց.— «այ, տ-
նամօթ. գիտես որ իմ աչքերս չեն տեսնում, կուզես որ
այդ մարդուն ներս առնես. տեղդ ծանր կաց, եթէ ոչ,
քու գլխիդ ինչ ասես կանեմ»: Աղջիկը լռելով ասաց.—
«տես յետոյ իմ խօսքս կը լինի թէ ոչ»: Նարգիզը տանից
եկաւ հարստների քառուսը և խառնուելով ժողովրդին, քա-
շուեց մի անկիւն, նայում էր:

Ղարիբը ներս մտաւ, տեսաւ որ մի կողմը շարուած
են Թիֆլիսի մեծամեծները, իսկ միւս կողմը հասարակ
դասակարգը, որոնց մէջ էր և Գիթ Մանուկը: Ուրախու-
թեան տաք ժամանակն էր. Ղարիբը մտածեց. «այս մեծ-
մեծներից ինչ օգուտ չկայ», գնաց հասարակութեան
կողմը, բարեկեց: Նոքա էլ բարեւ սիրով ընդունեցին, տեղ
ցոյց տուին և սեղանի գլուխը նստեցուցին: Ղարիբը տե-
սաւ, որ մի վարադուր քաշած՝ Սանամը ետևում նստած,
ձեռնածուներին է նայում. Շահ-Վալտան էլ մի ուրիշ
կողմ նստած, խեղկատակներին էր նայում: Ղարիբն երբ
որ բարեկեց նստեց, Սանամը վարադուրից դուրս նայե-
լով տեսաւ Ղարիբին, սրտումը կտակած ընկաւ, ասաց.—
«յոյս Ոստում, էլի Ղարիբին պիտի արժան լինեմ»: Վեր-
ջապէս մտքի մէջ Աստուծոն աղաչում էր, որ իւր կաթնիչը
սխալ չ'լինի:

Սեղանի վերայ բոլոր նստողները Ղարիբի հետ հարց
ու բարով անելուց յետոյ, Ղարիբն ասաց.— «ես սուրհան-
դակ եմ, Թաւրիզից կուզամ. տեսայ հարստեանց տուն
էր, ներս մտայ այստեղ, բայց զղջացի: Չքաւօրութիւնը
ինչ սախպեց ներս մտնել, տեսայ այս հարստեանց տունը
հարուստ և մեծամեծներիով լիքն է. ինչի յարմար մէկ
նստելու տեղ չ'գտնելով, ուզում էի յետ դռանալ, բայց

որ այս կողմ ձեզի տեսայ, դիմեցի ձեզ: Աայսպէս խօսակցութեան ժամանակը դիտմամբ սաղի թիւին խփեց. երբ որ սաղի ճայնը լսեցին, մօտի մարդիկը ասացին.— «եղբայր, խնդրում ենք այդ սաղը հանես մի քիչ ածես, մեզ ուրախացնես»: Ղարիբն ասաց.— «ես վարդեալ չեմ և լաւ ածել չգիտեմ, գուցէ մի պակասութիւն լինի իմ ածելս, որովհետեւ այստեղ մեծ մարդիկ կան կարելի է նեղանան և ինձ անարգելով դուրս անեն, յետոյ ինձ նրանց ձեռքից չէք կարող ազատել»: Ասացին.— «խեղճ մարդ, նոքա մեզ մի խօսք անգամ չեն կարողանում ասել. դու անհոգ եղիր, ինչ կարող ես երգիր»: Ղարիբն ասաց.— «ես էլ ձեզանից այդ խօսքերն էի սպասում»: Իսկոյն սաղը լարելով, սըրտիցը մի ախ քաշեց և սկսեց երգել—

Տրամութեան ծովի մէջ եմ, ով իմ դեկավար, եկ հասիր,
Շաւերդ ինձ մաշեցին, լեր ինձ դեզ ու ճար, եկ հասիր.
Միշտ կարօտդ քաշելով, հոգիս նուազեցաւ, սիրուն.
Հոգեկան հիւանդութեան բժիշկ կենարար եկ հասիր:

Ես քո սիրոյդ կրակով այրում եմ յարածամ,
Քո ձեռովդ պէտք լինի ինձի ճար, ինձի խնամ.
Սէրդ է ինձ պաշտպանել օտար տեղերում եօթն ամ.
Տուել է Աստուած քեզի. սրտով սիրահար եկ հասիր:

Տենչդ է ինձ զորել մաղձի սեաղոյն ծովակը,
Խղձա բռնէ ձեռիցս, չխորասուզուիմ յառակը.
Կրեցի պանդխտութեան լուծը, դիտեցի վիճակը,
Դրութիւնս վերջապէս, դարձել է դժուար եկ հասիր:

Սիրահարդ Ղարիբը. տեսնել կուզէ քեզ մշտական,
Մաղձալի երեսովդ ուրախացնւ յառուկ նրան.
Մէկ ողորմութիւն արա, մի լացըներ ինձ, սիրեկան,
Դառնացած դէմքիս վերայ բեր ցանէ շաքար, եկ հասիր:

«Սիրահարդ Ղարիբը տեսնել կուզէ քեզ մշտական» ասած ժամանակը, Եազ-Սանամը ուշի ուշով մի հայեացք գցեց Ղարիբի վերայ: Այդտեղ եղող հանդիսականներն էլ միտք դարձնելով, իսկոյն հասկացան որ այդ մարդը Աշրդ-Ղարիբն է: Ղարիբն ասաց.— «ես առաջուց ձեզ չասցի թէ՛ կարելի է մի սխալմունք անեմ»: Տեսաւ որ բոլոր մարդիկը հասկացան իւր ով լինելը, ուղեցաւ ծածկել, խօսքեր վերայ բերեց, իբր թէ ինքը Ղարիբը չէ.— «ձեր կարծիքը սխալ է» ասում էր: Հանդիսականներն ասացին.— «եղբայր, մի նեղանայ և մեզ մի տխրեցնիր. խնայիր մեզ, սաղը ձեռքիցդ մի գցիր»: շատ թախանձելով՝ սիրտը սփռփեցին: Ղարիբը կրկին սաղն առաւ և սկսեց երգել—

Հալէպ քաղաքի մէջ քանի օր առաջ,
Եգիպտոսի գինին խմեցի եկալ,
Եապելով չնայեցի ձախ ու աջ,
Միայնակ-անընկեր ճանապարհ բնկալ:

Այս խօսքերը որ ասաց Ղարիբը, Սանամը մօտ եղող աղջիկներին ասաց.— «լաւ լսում էք այս ձայնը. Ղարիբի ձայնը չէ՞»: Ոքա բոլորն էլ ասային.— «ճշմարիտ է, նորա ձայնն է»: Այս շփոթութիւնը մինչև Ղարիբին հասաւ և նորից սկսեց երգել—

Առաւօտ երգնիւ, շաշին Վարինում,
Յետինք էր, Ղարսի մէջ արի կեր ու խում,
Երեկոյեան ժամը ութին Քիֆլիսում,
Վերջապէս մի աւուր, ես այստեղ հասայ:

Այս խօսքերը Եազ-Վալատին դուր չգալով՝ եկաւ Գիթ-Մանուկի մօտ ասաց.— «այս հարսանեաց առնք սգոյ պէտք է փութարկես, առ քու աշուղդ հեռացիր, որ սր ուղում ես», մի քանի դաճեկան էլ դրեց Գիթ-Մա-

նուկի բուռը: Գրիժ-Մանուկը դայրանալով ասաց.—
«սո անամօթ, այս ինչ ցածուկներն ես անում, դոնիցդ
մուրացկան ես հեռացնում». քաշեց դաշոյն և ասաց.—
«այս տունը այս բոսկէին տակ ու վրայ կանեմ և քեզ
քո չափդ ճանաչացնել կտամ»: Գրիժ-Մանուկի կատաղու-
թիւնը որ տեսաւ Շահ-Վալատը, շփոթուելով փախաւ մի
անկիւնում աներևոյթացաւ: Գրիժ-Մանուկը դարձաւ զէպի
Ղարիբը և ասաց.— «այսօր կամ դու քո նպատակիդ պիտի
հասնես, կամ ես պիտի մահանամ» տսելով սաղը տուեց
Ղարիբին: Սաղն առաւ Ղարիբը և երգեց—

Մէկ գիշեր հիւր եղայ իջայ իմ տունը,
Մօրս ու քրոջս չստացի բանը.
Ի հարկէ, այստեղ էր ցաւիս դարմանը,
Վերջապէս տքնելով ես նորան գտայ:

Այս խօսքերը որ լսեց Սանամը՝ ասաց աղջիկներին.
— «տեսէք ինչ է ասում, իմ գաղտնիքս, մօրս քրոջս չը
յայտնեցի»: Բայց այդ բոսկէին Ղարիբի քոյրը՝ Սանամի
մօտ էր և ասաց Սանամին.— «ես անցեալ գիշերը գալուսն
պէս հասկացայ որ եղբայրս է, բայց մօրս չկարողացայ
համոզել»: Այս խօսքերը որ աւարտեց, նարգիլը դուրս
թռաւ վագեց տուն. «մայրիկ, աչքդ լոյս, երէկ գիշեր որ
մեր տունը հիւր էր, հաստաւ իմ եղբայրս Ղարիբն է: Ես
որ ասում էի, դու հակառակում էիր և զրպարտութիւններ
էիր բարդում ինձ վերայ. ահա ես հարստնեաց տանից եմ
գալիս. ինքն իրան այնտեղ յայտնեց, մայրիկ, քեզ հազար
աւետիք, այդ գալողը քու որդիդ է և իմ եղբայրս»:

Ղարիբը հարսանիքում շարունակեց երգել—

Ինձի իմ նազելոյս նամակը հասաւ,
Կարգացի՝ հարուածը թոքերուս զիպաւ.

Ճանապարհում ինձի ինչեք պատահաւ,
Վաղող ջրերու պէս բարձրացայ ելայ:

Պարոններ, կազմել էք հանդէս խրախճան,
Կարելի է ծաղրէք: Թէ ասեմ նոր բան,
Սուբբ Յարգիսը հասաւ ինձի օգնութեան,
Նստեցուց հրեղէն խւր ձիու վրայ:

Տէրը և Ստուաժը Էաիաց հանուր,
Ինձի և սիրելոյս չթողեց տխուր.
Մի ամսուայ ճանապարհ՝ մի աւուր,
Հալէպից մինչև Թիֆլիս, թե առայ թոայ:

Ընկեր ու սիրելի ողջն են դադարել,
Մոռանալով ինձի չեն միջիթարել,
Լսեցի, Սանամին հարս են արել,
Հարսանիքը Հալէպի մէջ իմացայ:

Գիտէի, կ'սպասէ իմ սիրեկանս,
Երբէք չէր խախտուի յոյսս նշանս,
Մինչ եօթը տարի էր ուխտս պայմանս,
Ահա իմ խորհուրդս կատարուաւ հիմայ:

Ղարիբս քեղանով լինիմ երջանիկ,
Իմ նազելի Սանամ, դու ալ մեղեսիկ,
Քու նոճի հասակիդ յարմար գեղեցիկ,
Մի քանի ձեռք հանդերձ բերել եմ ընծայ:

Այս հանգամանքներից Սանամի զգացմունքը վառուե-
լով համբերելու չափ և կարողութիւն չ'մնաց. վարագոյրի
ետեից խելոյն գուրս գալով, կանգնեց ժողովրդի մէջ և
հօրը Խօջայ-Սահակի ձեռք համբուրելով ասաց.— «տեսէք,
ով ժողովուրդ, և վկայ եղէք. այս Աշըղ-Ղարիբն իմ սի-
րահարս է, և ես նորս սիրուելին. իսկ Շահ-Վալատի հետ

մտերմութիւն և առնչութիւն երբէք ունեցած չեմ»։ Այս խօսքերի վերայ Շահ-Վալատը եկաւ ատեան և ասաց.—
 «Ես այս րոպէիս հրաժարուում եմ այս ուրախութիւնից. Աստուած նրանց երկուսին բարի վայելում տայ. [Ժող միասին ապրին երկար, սորանց միութիւնը Աստուած էր անօրինել. ինչ բանի մէջ որ Աստուծոյ մասը կայ, մարդիկ այն բանին չեն կարող ձեռնամուխ լինել»։ Այս խօսքերը դուր գտլով թէ Խօջայ-Սահակին և թէ բոլոր հանդիսականներին, սկսեցին օրհնել և գովաբանել Շահ-Վալատին։ Դարձան դէպի Սանամը և Ղարիբին՝ ասացին.— «Որդիքս, զնացէք, հանդիստ կեանք վայելեցէք. Աստուած ձեզի միասին ծերացնէ»։ Աշըղ-Ղարիբն ուրախանալով և շնորհակալութիւն յայտնելով բոլորին՝ առաւ սաղը ձեռք և խօսքերը ուղղելով Սանամին՝ ասաց.

Թող, Սանամ, երեսիդ մի կուշտ մտիկ տամ,
 Վարսերդ նոր մեկանց մի անել դիմակ.
 Վառվռուն սոխակիս դու վարդ անթառամ,
 Այրուած եմ արդէն մի տալ նոր կրակ։

Երկրորդ Անահիտն ես՝ ճիշտ, ոչ առատակ,
 Ինքդ Ոսկիմտըր, ունիս ոսկեթել.
 Աշխարհի հայելին երկինքն եմ տեսել,
 Երկրում քեզի պէս չկայ արեգակ։

Սէրդ սիրահարիդ հոգուն դարձու ցեց.
 Փափագով պատկերդ տեսնելու դիմեց.
 Ով որ հաստատ աչքով քեզ մտիկ տուեց,
 Անքուն պիտի մնայ երկար ժամանակ։

Ղարիբն եմ, սլացաւ միտքս դէպի վեր,
 Լուսնթաղն էլ չունի քեզ նման պատկեր.
 Միայն դու ողջ եղիր, մտերիմ ընկեր.
 Ես զոհուեմ, չի լինի Թիֆլիս աւերակ։

Այս խօսքերից Սանամը ամաչելով, քաշուեցաւ վարդույրի ետեւը, բայց Ղարիբն սկսեց աղիւ ձևերով, կատակներով, կշտամբել Սանամին այսպէս.—

Ուղեղել է ճարել ջոկ սէր, այլ ընկեր,
 Սիրուհիս ինձ հաւատարիմ չէ եղել.
 Սկսել է բռնել անկանոն գործեր,
 Սիրուհիս ինձ հաւատարիմ չէ եղել։

Տեղեկութիւն առայ վաճառականից.
 Ուղեցել է դառնալ իրա սլալմանից,
 Թիֆլիս մարդ է ճարել զաղտնի ինձանից,
 Սիրուհիս ինձ հաւատարիմ չէ եղել։

Ղարիբ, Շահ-Սանամը անմեղ-անարատ,
 Լսեցի, գործել է սխալներ հաստատ,
 Կարծում էր նորան անկեղծ հարազատ,
 Սիրուհիս ինձ հաւատարիմ չէ եղել։

Սի փոքր հանգստանալուց յետոյ՝ նորից սկսեց նայն տեսակ կծու խօսքերով յանդիմանել Սանամին.—

Երեսիս խնդացող, գողտնի ինձ ատող,
 Ինչու պատուիրեցիր թէ արի շատ շուտ,
 Եթ տարուան մեր պալմանը նախատող,
 Գնաց աշխատանքս իզուր տնօգուտ։

Եկայ տեսայ հարս ես եղել սիրեկան,
 Կազմել ես հարսանիք, հանդէս խրախճան.
 Մնում էի անվախ ես աներկեան,
 Չէի կարծում որ մեր սէրը գուրս գայ սուտ։

Ղարիբն եմ, սիրում եմ քեզի շարունակ,
 Իմ սիրտս է մաքուր, որպէս պարզ փտակ.

Մի վախենար, Սանամ, անուամ եմ կտակ,
Պայմանս կըմնայ մինչև մահ անփութ:

Սանամը՝ Ղարիբի այս տեսակ յանդիմանական խօս-
քերին չդիմանալով, Արեգնազանին դրկեց Ղարիբի մօտ
ասելով — «ասա այդ ցաւալի խօսքերով ինձ չ'ախրեցնէ»:
Արեգնազանը Սանամի խօսքին համաձայն, եկաւ Ղարիբի
մօտ և այս երգն ասաց —

Ա Ր Գ Ն Ա Ջ Ա Ն Ը

Ես քո ցաւդ ասնեմ Ղարիբ գեղանի,
Սանամը քո գալդ հիմայ իմացաւ,
Հանելով սեւերը հագաւ ծիրանի,
Սանամը քո գալդ հիմայ իմացաւ:

Նկան նորան քո մահդ հաստատեցին,
Լեարդ ու թօքն համարեա կտրատեցին,
Սև հոգնելուն շատերը նախատեցին,
Սանամը քո գալդ հիմայ իմացաւ:

Շահ-Սանամին, Ղարիբ, մի տալ պատուհաս
Խնդրու եմ, մի ասիլ դու խօսքեր պակաս,
Թոյն խմելով կըտայ ինքն իրան փրատ,
Սանամը քո գալդ հիմայ իմացաւ:

Եօթը տարի սուգ էր պահում համարեա,
Լացից կըձանձրանար, ով լինէր ներկայ,
Միայն այսօր ես նորան ուրախ տեսայ,
Սանամը քո գալդ հիմայ իմացաւ:

Մայրդ, քոյրդ, Ղարիբ, թողիր զնացիր,
Թիջլիսը մոռանալով, Հալէպ մնացիր,
Բայց այսօր Սանամին ուրախացուցիր,
Սանամը քո գալդ հիմայ իմացաւ:

Պալատը դժուրքի պէս էր երևում,
Ոչ մի տեղ չէր գնալ նստած էր տրտում,
Թոյնով լի բաժակը պատրաստ էր պահում,
Սանամը քո գալդ հիմայ իմացաւ:

Արեգնազանի խօսքերին իբրև պատասխան, Աշրղ-Ղա-
րիբն այս երգը երգեց և զբաւոր ուղարկեց Սանամին:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Կատակ էր իմ ասած խօսքերս նորան,
Զնեղանայ իմ սիրունին չ'կայ բան,
Թող ներէ իմ սխալներս իսկական,
Զնեղանայ իմ սիրունին, չ'կայ բան:

Երբ որ Ղարիբի միտքը հասկացաւ Սանամը, Ղարի-
բին մի գողտնի պատասխան դրելով, Արեգնազանի հետ
ուղարկեց այսպէս:

Ս Ա Ն Ա Մ Ը

Կապակէի Ղարիբ, իմ սիրեկանո
Եօթը ամ, ինձ մոռանալ չէր պայմանս,
Երեսկ նստած զօր դիշեր օթեանս,
Բո կրակով վառվում էր իմ իրանս:

Ղարիբը նորից պատասխան դրեց Սանամին այսպէս. —

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ապերախտ չեմ, լաւ հասկացիր բարեկամ,
Եօթը տարի չեմ մոռացել ոչ մի ժամ,
Ղարիբս միշտ կանէի ախ, հառաչանք,
Ես քեզանից չէի զատուի ինքնակամ:

Յետոյ Ղարիբը մտածեց, որ իւր տոյն կծու խօսքե-
րով կարող է վիրաւորել Սանամին, Սանամի սիրան առ-

նելու համար, ուրախ կերպարանք ստանալով, մօտեցաւ Սանամի վարադոյրին և սաղը առնելով ձեռքը, երգեց—

Որոնելով քեզի գտայ ես այստեղ,
Ման գալով, ով Սանամ, ես քեզի եկայ,
Գլխիդ մատաղ լինիմ, աղաւնի անմեղ,
Ման գալով, ով Սանամ, ես քեզի եկայ:

Սկսեց Սանամը նոյնպէս երգով սլառասխանել Ղարիբին:

Ս Ա Ն Ա Մ Ը

Արարչից ինձ համար նուիրուած ընկեր,
Քաջառողջ սիրելիս, դու բարով եկար,
Լաւ ինձ սպանես, չասես վատ խօսքեր,
Թանգագին սիրելիս դու բարով եկար:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Գգուէ ինձի, բեր թեւերդ տարածէ,
Ով ցաւ ունի թող նա տրտմի, մտածէ,
Իեզ ինձ համար, կամեցողը Աստուած է,
Փափագելով, Սանամ, ես քեզի եկայ:

Ս Ա Ն Ա Մ Ը

Յիրաւի, Աստուած է ինձ քեզի տուել,
Պահէ գաղտնիքներս, այստեղ մի յայտնել,
Սանամը Ղարիբին է միայն վայել,
Հարազատ սիրելիս, դու բարով եկար:

Այս խօսքերն աւարտելուց յետոյ, Ղարիբն ասաց Սանամին. — «Ճառաներէցդ մէկը ուղարկենք հարսանեաց հանդերձները բերեն»: Բայց այս խօսքերը Սանամի սրտին շատ զգուար եկաւ և ասաց. — «Փառք Աստուծայ, ես էլ շատ թանգագին հանգերձներ, ակնեղէններ, զարդ ու զար-

դարանքներ ունիմ. բայց ես քո կարօտութեանդ պատճառով ոչ մի անգամ սիրտ չեմ ունեցել հագնելու. միայն ուները հագնելով եմ ժամանակս անցկացրել: Հիմայ դու ինձ հանդերձ ու զարդարանքներով պիտի գրաւես. իմ սիրտըս արդէն քեզանով գրաւուած է»: Եւ ապա լալով այս երգն ասաց—

Ս Ա Ն Ա Մ Ը

Ղարիբ, լսէ այս խօսքերս, և միշտ առ,
Մի օր չուրախացայ ինչ դու գնացիր,
Թողի հանդերձներս ես ծիրանեփառ,
Հագնելով ման չեկայ, ինչ որ դու գնացիր:

Եղել էի տգեղ թռչուն անփետուր,,
Ողբալով անցնում էր օրերս ախուր,
Անգամանդ օրերս պահում էի գուր,
Մի օր չպճնուայ, ինչ դու գնացիր:

Արկղիս մէջ փթան զարդերս պէս-պէս,
Եօթը տարուայ մէջը կեանքս եղաւ կէս,
Հազար տեղ պատահաւ խնջոյք և հանգէս.
Ոչ մի տեղ չմտայ, ինչ դու գնացիր:

Սանամ, փառքն է վաղանցանող խաբուսիկ,
Ռվ է տեսել օգը առանց փոթորիկ.
Եօթը Ծնունդ անցու, և եօթը Զատիկ,
Ես չգրի հինայ ինչ դու գնացիր:

Այս երգերից լեռու Խօջալ-Ստհակը, իւր ծխառէր քահանան և բոլոր հանդիտակտները միտսին հաւաքուելով Ղարիբին հրաւիրեցին իրենց մօտ և ասացին. — «Նախ և առաջ դու բարով հազար բարի եկար, քո գալովդ մենք շատ ուրախ և շնորհակալ եղանք. բայց այս բանը Շահ-Վալատի համար մի մեծ փորձութիւն էր. այս հարսանեաց

պատրաստութեան համար մեծ փողից զբեկուեց, բաւական
փնաս ունեցաւ և բոլոր աշխատութիւնը իզուր գնաց: Այս
բանը ուրախ և խաղաղ անցնելու համար, Ամենակարող
Աստուծոյ հրամանով, բեր քո Նարգիզ քոյրդ տանը Շահ-
Վալատին, դու էլ մեր խօսքը մի կոտրիր և այս խորհրդին
յօժարացիր»: Ղարիբն առաց.— «ձեր պատուի համար
խօսք կը տամ՝ շատ լաւ կ'տամ. բայց խնդրում եմ որ
մօրս կանչէք և նորա կամքն էլ առնէք»: Ղարիբի մօրը
կանչեցին. նա էլ ասաց.— «Երբ որ դուք արժան էք դա-
տել և որդիս հաւանել է այդ մտքին, ես էլ իմ կողմից
համաձայն եմ»: Ղարիբը կանչեց Նարգիզին առանձին,
յայտնեց այս խորհուրդը և իրենց կամքը: Նարգիզ ասաց.
— «Ես քեզ չափազանց սիրելուս պատճառաւ, եթէ զը-
ժոխք էլ ուղարկես կը գնամ և հաւատացած եմ, որ Աս-
տուած արքայութեան կը փոխարկէ»: Այս խօսակցութեան
ժամանակ Շահ-Վալատը բացակայ էր. երբ որ ներս մը-
տաւ, հանգամանքը նորան յայտնեցին. նա էլ ամենայն
ուրախութեամբ ընդունեց: Նշանադրութեան հանդէս կա-
տարուեցաւ իսկոյն: Յետոյ Ղարիբը սազն առաւ և իւր
մօր աչքերի կուրանալու համար սկսեց երգել.

Աչքերդ ինչ մասով կուրացան մայր իմ,
Մի վախենար, մայրս, նորից կ'բացուի,
Աղաչէ, Աստուած լեր հաւատարիմ,
Մի վախենար, մայրս, նորից կ'բացուի:

Մ Ա Յ Ր Ը

Դուրիս խփեցի քարերու, պատի,
Քու մասիդ կուրացան աչքերս, որդի,
Նման թշուառացեալ դառն աղքատի
Քու մասին կուրացան աչքերս, որդի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ինչ բարիք որ ցանկանաս, Տէր Աստուած կուտայ,
Երբէք նորա մօտը դժուար բան չըկայ.
Սի դեղ կայ աչքերիդ, բեր քսեմ հիմայ.
Մի վախենաք մայրս, նորից կ'բացուի:

Մ Ա Յ Ր Ը

Երբ հեռացար, աւիրեցիր սիրտս շէն,
Վաստ լուրեր լսեցի, լաւի փոխարէն,
Միթէ կոյր աչքերը կ'բացուին նորէն,
Քու մասիդ կուրացան աչքերս, որդի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ունինք Աստուած Ամենակալ և հառաիչ,
Ով մայր իմ, հաւատդ դու մի անիլ քիչ,
Ի ծնէ կոյրին էլ լոյս տուեց Փրկիչ,
Մի վախենար, մայրս, նորից կ'բացուի:

Մ Ա Յ Ր Ը

Մրտիս մէջ ցաւ չմնար առանձին,
Ձմեռած՝ երեսդ տեսնէի կրկին.
Բէր այն դեղը քսէ, բեր, իմ քաջ որդի,
Քու մասիդ կուրացան աչքերս, որդի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Ունինք անմահ Բժիշկ Ամենակարող,
Կը բանայ աչքերդ, և չի մնալ քող,
Այս դեղը երկնային՝ դեղ է իմ ծնող,
Մի վախենար, մայրս, նորից կ'բացուի:

Մ Ա Յ Ր Ը

Դէպի Աստուած յոյս հաւատ ունիմ վատ,
Հաւատում եմ, կտեսնեմ լոյս անպատճառ:

Քո մասին կուրացան աչքերս պայծառ,
Հիմայ էլ քու ձեռքով թող բացաւին, որդի:

Ղարիբը պարկից հանելով Սուրբ Սարգսի տուած
դեղը, լուծեց մի բաժակ ջրի մէջ, կանչեց Աստուած և
քսեց մօր աչքերին: Աստուծոյ հրամանով իսկոյն աչքերը
բացուեցան և առաջուանից տւելի լուսաւոր էր տեսնում:
Այդտեղ դանուող բոլոր ժողովուրդը տեսնելով՝ միաբերան
փառք տուին Աստուծոյ և գովաբանեցին Ղարիբին: Ղա-
րիբը կրկին սազն առաւ ձեռքը և երգեց.—

Ղ Ա Ր Ի Բ Ը

Բացուեցան աչքերդ, փառք տուր Արարչին,
Տարածէ ձեռքերդ՝ միշտ դէպի երկին,
Այս դեղը տուողն է բժիշկ երկնային,
Հաւատալով, մայրս, ես բերի քեզի:

Մ Ա Յ Ր Ը

Փառք Աստուծոյ, պարգևը ստացուեցաւ,
Այս հրաշքը ամեն տեղ իմացուեցաւ,
Դու շատ տալիս, իմ աչքերս բացուեցաւ,
Փառք որ տեսայ, փառք, իմ Ղարիբս քեզի:

Ղ Ա Ր Ի Բ Ը

Գաղտնիք քննողը, սրտագէտ Տէրը,
Տարածում է աշխարհ իւր անհուն սէրը.
Նորանն է այս գեղահրաշ նուէրը,
Դողդողալով, մայրս, ես բերի քեզի:

Մ Ա Յ Ր Ը

Ազատուեցայ գիշերային խաւարից,
Օգտուում եմ պայծառ լուսոյ կամարից,
Այս ճարն է մեզ, ստեղծող բարեբարից,
Փառք, հաղար փառք, տեսնում եմ Ղարիբ քեզի:

Այս խօսքերից յետոյ, Ղարիբը դառնալով հանդիսա-
կաններին ասաց,—«պատուելի հանդիսականներ, որովհե-
տեւ այս հարսանեաց պատրաստութիւնը, Շահ-Վալատի ա-
նունով է եղել, ես չեմ ուզում նրա սիրտը կտրել, ա-
ռաջ նրա հարսանիքը կատարենք, յետոյ իմա»: Քրոջը կա-
նոնաւոր օժիտ տալով, փառաւոր կերպով հարսանիք ա-
րաւ. եօթն օր և եօթն գիշեր կերան խմեցին, Շահ-Վա-
լատին և նորգիզին իրանց փափաղին հասցրին: Յետոյ
սկսուեց Ղարիբի հարսանեաց պատրաստութիւնը: Խօջայ
Սահակը հրաւիրեց Թիֆլիսի բոլոր մեծամեծներին, իսկ
Ղարիբն էլ իւր կողմից հրաւիրեց Գիթ-Մանուկին, Սիսա-
կին և իւր բարերար, Փոլատ-Խօջային և բոլոր միւս ըն-
կերներին: Թաւրիզից սկիզբը Ղարիբն իւր հետը Թիֆ-
լիս բերող Խօջայ-Մուրատը եղաւ Խաչքաւոր: Այդ օրը
Շահ-Սանամը հագնելով իւր թանդողին հանդերձները և
պճնուելով զանազան զարդերով, հաստատ մի թաղուհի
էր եղել: Իւր հաւատարիմ Արեգնազանը ուրախ սրտով և
քաղցր ժպիտով սպասաւորում էր հրաւիրեալ տիկիներին.
Շահ-Սանամի մօր վերայ կործես մի զգալի փոփոխու-
թիւն էր եղել, այսինքն դէպի լաւը. այն Ղարիբին որ
մեռած ու կորած էր համարում, այժմ չէր ուզում մի
բոպէ աչքիցը հեռանալ: Խօջայ-Սահակի տունը մի դրախ-
տի էր նմանում: Բացի ներսը վայելուչ կերպով զարդա-
րելը, դուրսը պատշգամները և պարտեզը գոյնզգոյն լապ-
տերներով լուսաւորուած էր: Մեծ բազմապթամբ և տե-
սակ-տեսակ նուադարաններով և երգիչներով Աշրդ-Ղա-
րիբին և Շահ-Սանամին տարան պսակ Սուրբ-Գէորգ ե-
կեղեցին, և պսակը շատ փառաւոր կատարուեցաւ, նորից
վերադարձան Խօջայ-Սահակի տունը: Նստեցին պատրաս-
տուած սեղանի շուրջը: Խօջայ-Սահակը լի զինու բաժակը
ձեռն առած ոտի կանգնեց և այսպէս խօսեց.—«Մարդոց
խելքը Աստուծոյ կամքին և տնօրէնութեանը չի հասնի:

հարսանիքը սկիզբը ում համար պատրաստուեց և ում ար-
ժանի եզրու. պատուելի հանդիսականներ, ձեզ բոլորիդ
յայտնի է, որ ես բացի Սանամը, ուրիշ զաւակ չունիմ,
Աստուծոյ կամքը այսպէս էր, որ Սանամը Ղարիբին ար-
ժանի լինի. ես այսօրուանից ձեր ներկայութեամբը Ղա-
րիբին ինձ հարազատ որդի ընդունելով, յանձնում եմ բո-
լոր կայք ու կարողութիւնս նորան, Աստուած և դուք
վկայ եղէք այս բանին. այսուհետեւ նա է իմ հարազատ
ժառանգս: Այս խօսքերի վերայ առաջ եկան Սօջայ-Սա-
հակի կինը Զարուհին և Ղարիբի մայրը տիկին Արու-
սեակը, ուրախութիւնից արտասուելով, համբուրեցին Ղա-
րիբի և Սանամի ճակատները և օրհնելով նոցա՝ բոլոր
հանդիսականների հետ միասին վերցրին բաժակները և
նորապսակեալների կենացը խմեցին: Այդ օրուանից սկսած
հարսանիքը տեւեց քառասուն օր և քառասուն գիշեր.
ուտելիքին և խմիչքներին թիւ ու սահման չ'կար: Կախե-
թի գինին հեղեղի նման վազում էր: Հարսանիքը վերջա-
նալու օրը, երբ կանանց խումբ պատրաստուում էր
ցրուելու, Ղարիբը նոցա առաջ. պատուելի տիկիներ, որովհետեւ նոր եկածս ժամանակը ես երգի մէջ առացի
թէ—

«Քու նոճի հասակիդ յարմար գեղեցիկ,
Մի քանի ձեռք հանգերձ բերել եմ ընծայ»,

Այժմ խնդրում եմ ձեզանից, թէ արժան կը համա-
րէք, հրամայեցէք դուք էլ մի անգամ տեսէք: Նոքա համա-
ձայնեցան. երբոր տեսան բերածները, գովեցին և շնորհա-
կալութիւն արին և ասացին՝ որ ուղիղ Սանամին արժա-
նի և չտեսնուած բաներ են: Յետոյ բոլոր հանդիսական-
ները ուրախ սրտով և բուռն ոգևորութեամբ, կեանք
մաղթելով Ղարիբին և Սանամին՝ ցրուեցան:

Ղարիբը և Սանամը առանձնանալով մի ոռնեակ, Ղա-

րիբը Սանամին իւր բերած հագուստները առաջ բերելով,
ասաց. — «աչքիս լոյս և իմ սրտիս սիւն, սիրելի Սանամ,
սորանք բոլորը քեզ համար եմ բերել»: Ղարիբն ազն
առաւ և սկսեց երգերով հանդերձները հագցնել Սանա-
մին. —

Հանդերձներուդ ծրարը բեր, բաց անեմ,
Սրի կանգնիր մօտս, պատուական Սանամ.
Զգեստներդ ես մէկ մէկ գովաբանեմ,
Դու հագիր զարդարուէր, սիրեկուն Սանամ:

Հազար գահեկանի առայ մէկ շապիկ,
Վերան ունի նկարներ և շատ ծաղիկ,
Եօթը հարիւր քո բաճկոնդ գեղեցիկ,
Հագիր նոճի հասակիդ արժան, Սանամ:

Հինգ հազար պարեգօտդ, մի տիկին,
Տասը հազարի քո քամարդ թանգագին.
Երեք հազար գլխարկիդ վարչամակիւ,
Մարդարտազարդ, սիրուն, գովական Սանամ:

Ճիշտ հազարի գլխիդ ծածկոյթը առայ,
Հինգ հարիւր փափուկ կերպար Շամայ,
Չորս հազարի, Լահօտի շալը ահա
Միայն քեզ է յարմար, աննման Սանամ:

Ես չեմ տեսել քեզ նման գեղանի,
Հինգ հազարի առայ մի հատ մատուռի,
Ութ հազարի ազարունջան գովանի,
Դիր թերեզ իբր մէկ նշան, Սանամ:

Թող ինդա, քո երեսդ ակնավայել,
Հազարի է, վարսակալդ ոսկեթել.
Մինչ Հալէպից քեզի հինայ եմ բերել,
Դիր ձեռքերդ, ինձ է դուրեկան, Սանամ:

Հազարի է մէջքիդ կերպաս գօտեկդ,
Մէկ Հազարի քողդ, ընտիր լողիկդ.
Երեք Հարիւրի է մի զոյգ մաշիկդ,
Սպիտակ ոտներիդ ոտնաման, Ստնամ:

Ով սիրուհի, արի մօտս ման արի,
Կերպարանքդ չեմ տեսել եօթը տարի,
Ոսկենկար մուճակներդ Հազարի,
Հազի խնդրեմ, քաղցր Հոգի-ջան Սանամ:

Վեց Հազարի օղերուդ անդին աղբ,
Չորս Հազարի մի Հատ սամոյր մուշտակը,
Երեսուն Հազարանոց, ոսկէ ճիթակը,
Խնդա, ցնծա, քեզի է պատկան Սանամ:

Վար դիր, Ղարիբ, ձեռքիցդ քո քնարը,
Սիրուհին խնդրում է, իւր սիրահարը.
Ութսուն Հազար դահեկան է գումարը,
Չարժէ մօտդ դեռ մի չնչին բան, Սանամ:

Այս երգը վերջացնելուց լետոյ, երկուօր միասին ոռւ
քի կանգնեցան, Աստծուն շնորհակալութիւն յայտնելով
առաջին, «Փառք քեզ Տէր, որ մեզ ողջ առողջ միմեանց
Հասցնելով ուրախացուցիր այս աշխարհի մէջ և մեր փա-
փազին Հասցրիր»:

Միմեանց ձեռք բռնելով մօտան Մարգէտի գրեզը,
պատեց գիշերային խաւարը...

Այնուհետեւ Ղարիբը և Սանամը ապրեցին միմեանց
Հեռ ուրախ և երջանիկ, մինչև խորին ծերութիւն:



22 Ազգային գրադարան



NL1641420

16412

2013

